

ԼԵՍԻՄ

ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳ. ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԱՄՍՈՅ 1^Ի ԵՒ 16^Ի

ԽՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

Թ. Յ. ՊԷՐՊԷՐՅԱՆ (Ա.Տ.Ն.Ն.Ն.Ն.)

Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ, Մ. Գ. ՄՕՋԵԱՆ, Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ, Յ. ՍԵԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ

Կ. Ս. ԻԼԹԻԼԵԱՆ

Թիւ 9-10

1-16 Սեպտեմբեր

ՏԵՕՐԷՆ

ՅՈՎՀ. Թ. ԱՐԱՄԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
1894

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ


Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մանկավարժութեան Պատմութեան. — Հին Յունաց դաս- տիարակութեան նշանակելի կէտերը	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Ժամանակացուցի պատաստութիւն	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
Ամենամեծ յարգանք պատրական եւ մանկան. — Մրցման դրուած նիւթ	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Մանկավարժական ընթերցուածք. — Սակրատեսի մէքոսի օրինակ մը	Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ
Բնալուծութիւն. — Ջրածին եւ քրուածին	Գ. Ա. ՄԱԼԱԹԵԱՆ
Մտամարզական հրահանգներ մայրենի լեզուի ուսման համար	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Շաբաթի վրայ դասախօսութիւն	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
Ընթացք ֆրանսերէն լեզուի (Ռօպէռդսընի մէքոսով)	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
Ծաղկունք Օսմ. մասնագր. — Ահմէտ Վէֆիֆ փաշայ	Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
Դործ. դասեր Ֆրէզկէիան նուիրաց ու պարապմանց վրայ	Յ. ԷՏԻԼԵԱՆ
Մասիսի ուղղուած հարցումներ. — 1. Արձակուրդի խնդիր. — 2. Դպրոցական պատիժներ	Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Անխորհուրդ ծնողք	Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ
Կեղծմաշկին պատճառները եւ նախազգուշական միջոցներ անոր դէմ	ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

Ա Ձ Դ

Մասիսի խմբագրութիւնը պատրաստ է մասնաւոր յօդուածի կամ քղբակցութեան ձեւի տակ գոհացում տալ բոլոր անոնց՝ որք մասնաւոր նամակաւ բացատրութիւն կամ կարծիք խնդրեն իրմէ՝ դպրոցական խնդիրներու, մէքոսներու, կրթութեան ո՛ր եւէ նիւղի վերաբերեալ դժուարութեանց եւլն. մասին:

Շնորհակալութեամբ կ'ընդունի եւ կը հրատարակէ նաեւ դպրոցական խնդրոց վրայ իրեն հաղորդուած շանեկան ու ամփոփ տեղեկութիւններ, ինչպէս նաեւ իր յատուկ աշխատակիցներէ դուրս ձեռնհաս ուսուցչաց կամ կրթական գործոց հետա-
հետեւող ո՛ր եւ է կարող անձի կողմէ յղուած օգտակար գրութիւններ որ իր ծրագրին սահմանէն դուրս չեն ելներ:



ՀԱՆԳԵՍ

Նախնական եւ Երկրորդական Կրթութեան

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ ԸՆԴ ՎԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՄԲ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

43^{րդ} Տարի * Նոր շրջանի քիւ 9-10 * I-16 Սեպտեմբեր 1894

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Հին Յունաց դաստիարակութեան
նշանակելի կէտերը

Հին Յունաց մէջ տիրող գաղափար մ'էր թէ Պետութեան (Etat) պարտքն էր ապագայ քաղաքացւոյն դաստիարակութիւնը ապահովել եւ միանգամայն թէ անոր իրաւունքն էր ուղղութիւն տալ այդ դաստիարակութեան։ Սպարտայի⁽¹⁾ մէջ Լիկուրգեան օրէնքը իր մանրամասնութեանց մէջ ճշգրտօրէն սահմանադրած էր մանկանց արուելիք կրթութիւնը եւ զայն ամբողջապէս յանձնած էր Պետութեան ձեռաց, որ ինքն կը մատակարարէր կրթութիւնը հասարակաց կրթարաններու մէջ ուր կը ժողովէին եօթ տարեկանէն սկսեալ բոլոր տղայքը։ Ծնողք մինչեւ այս հասակը միայն իրաւունք ունէին իրենց ըով պահելու եւ անձամբ մեծցնելու իրենց զաւակներն։ այնուհետեւ պէտք էր որ զանոնք կառավարութեան յանձնէ-

(¹) Խօսելով մանաւանդ Հին Յունաստանի երկու նշանաւորագոյն քաղաքացւոյն վրայ, միւսներն իրենց ընկերական ու քաղաքային կազմակերպութեան մէջ աւելի կամ նուազ կը մերձենային այս երկուքէն մէկուն։

ին որ միօրինակ եւ ընդհանուր դրութեամբ մը կը ձուլէր զանոնք մի եւ նոյն կաղապարին մէջ։

Աթէնք⁽²⁾ մի եւ նոյն իրաւունքը կը ճանչէր Պետութեան «Օր մը, կը գրէ Փիլադէլ տը Գուլանթ (²), Աթէնք օրէնք մը դրաւ որով կ'արգելէր առանց կանխաւ ատենակալաց հաճութիւնն ստանալու ուսումնական դէպքերը պատանեաց, եւ ուրիշ օրէնք մ'ալ որ մասնաւորապէս արգելք կը դնէր փիլիսոփայութիւն ուսուցանելու։ Բայց Աթէնքի մէջ Պետութեան այս իրաւունքը իր բոլոր խստութեան մէջ չգործադրուեցաւ երբեք։ Սոլոն, անոր օրէնադիրը, բաւականացաւ օրինաց մէջ ճշգրտով միայն ծնողաց պարտականութիւնքն ի մասին իրենց որդւոց կրթութեան։ Նա պարտաւորեց ծնողները որ իրենց զաւակաց սովորեցնեն արհեստ մ'որով նոքա կարող ըլլան իրենց ապրուստը ձարելու։ Կրթութեան մասին կանոն դրաւ որ տղայք ուսնին լուզալ եւ կարդալ։ Հարուստք պարտաւոր էին օրինօք իրենց որդւոց աւելի զարգացեալ կրթութիւն մը տալու։ Այս լայն սահմանք ընդարձակ ազատութիւն կը թողուն ծնողաց տնօրինել իրենց զաւա-

(²) La cité antique.

կաց կրթութիւնը ինչպէս որ կ'ուզէին: Ուսուցումը միշտ ազատ մնաց Աթէնքի մէջ: Քերականներ, երաժշտութեան և մարմնակրթական ուսուցիչներ իրենց հաշուոյն դպրոցներ կը հաստատէին և իրարու հետ կը մրցէին յանկուցանելու համար ուսանող մանկութիւնը: Իշխանութիւնը միայն մարմնակրթարանաց համար շէնքեր կը դնէր այդ ճիւղին ուսուցչաց տրամադրութեան տակ և կը հսկէր որ ո՛ր և է անկարգութիւն չպատահէր և կանոնաւորապէս մարզարանք (palestre, gymnase) բացուէին ու փակուէին օրուան հետ: Ուսուցչաց աւանդած ուսման գնահատումը թողուած էր ծնողաց:

Այս ազատութիւնը սակայն անհաճոյ էր յաջա Պղատոնի և Արիստոտելի որք իրենց դաստիարակութեան ծրագիրներուն մէջ կը պահանջէին որ Պետութիւնը բացարձակօրէն ստանձնէր ու վարէր աղիկամի կրթութեան գործը: Այս մասին երկուքն ալ սպարտական դրութեան համամիտ էին:

Այս վերջինը կ'ըսէր. «Ըստ որում մի միակ վախճան մը կայ որ նոյն է բոլոր քաղաքային ընկերութեան համար, կը հետեւի թէ դաստիարակութիւնը պարտի ըլլալ մի և նոյնն ընկերութեան բոլոր անդամոց համար, և անոր ուղղութիւնը պարտի հասարակաց ըլլալ, և ոչ թէ իւրաքանչիւր մասնաւոր անհատի թողութեամբ լքուած»: Ինչպէս կը գտնէր իր օրերուն մէջ, ուր «անցնիւր ոք անձամբ կը վարէ ու կ'աւանդորդէ իր զաւակները և անոնց տալ կուտայ առանձինն ինչ կրթութիւն որ պատշաճ կը գտար, մինչդեռ հասարակաց եղող չահերու վերաբերեալ իրաց ուսուցումն ու գործադրութիւնն ալ հասարակաց պարտէին ըլլալ»¹ Թէ ինքն Արիստոտէլ և թէ Պղատոն որք առաջին մանկութեան խնամքը, մինչեւ 6—7 տարեկան, կը թողուն ծնողաց, կը պահանջեն սակայն որ Պետութիւնն հսկողութիւն ի գործ դնէ այդ մասին ալ, և այդ՝ սկըսեալնոյն իսկ ծնողաց ամուսնութեան վայրկենէն: Պէտք է որ այրերը ամուսնանան, ըստ Պղատոնի, 25—35 տարեկան հասակներուն մէջ և կանայք՝ տասնեւվեցէն մինչ

քսան տարեկան. ըստ Արիստոտելի՝ այրը պարտի ամուսնանալ 37 տարեկան, և կինը 18 տարեկան: Պղատոն կը պահանջէ մինչեւ իսկ որ ամուսինք տաս տարիէն աւելի չկենակցին միմեանց հետ, որպէս զի, ծնողք իրենց առոյգ տարիքին մէջ միայն զաւակաց տէր ըլլալով, քաջաւորը սերունդ մ'ապահովու քաղաքին:

Պետութեան ի գործ դրած ու Պետութենէն պահանջուած այս կրթական հոգածութեան հիմն, ի Յունաստան, այն սկզբունքն էր թէ անհատը ընկերական ամբողջին կը վերաբերի և անոր օգտին տեսակէտով պարտի պատրաստուիլ: Սպարտա բացարձակապէս անհատին մէջ քաղաքացին միայն կը տեսնէր, անհատը կը զոհէր ամբողջին, կ'ընկղմէր անոր մէջ: Անոր դաստիարակութեան իտէալն էր Փիլղիքապէս ուժեղ, տոկուն, հոգւով աներկիւղ մարդը որ, միանգամայն քաղաքին պետերուն հրամանաց հլու և անոր պաշտպանութեան անձնուէր, երկրին սէրէն դուրս սէր չունենար և պատրաստ ըլլար զոհել իր կեանքը Պետութեան պահպանութեան և բարւոյն համար: Անհատին ուրիշ տմէն զգացմունք և յօժարութիւնք և իրաւունք զոհուած էին անոր քաղաքացիական պարտաւորութեանցն առջև: Մտաւոր մշակութիւնը Սպարտացւոյն կրթութեան կարեւոր մաս չէր համարուեր. Սպարտացի քաղաքացին չէր կարող ինքզինք զարգացնել իւր ճաշակաց համեմատ ու իւր այլազան կարողութեանց մէջ: Կանանց պարկեշտութեան բնական զգացումն իսկ չէր յարգուած. հարկ էր որ երիտասարդաց նման իրենք եւս մարմնակրթական ամէն մարզանք ի գործ դնէին՝ Փիլղիքապէս զօրանալու, երկանց ցաւերու տոկալու և քաջաւորաց զաւակաց ծնունդ տալու համար:

Աթէնքի մէջ եւս, որպէս Սպարտայի մէջ, կը տիրապետէր այն սկզբունքը թէ «մանուկը երկրինն էր և պէտք էր զայն անոր համար մեծցնել», բայց Աթենացին ընկերային կազմակերպութիւնը և անոր զօրութիւնը միջոց մը կը նկատէր

մանաւանդ քան նպատակ մը, միջոց մը անհատից իրաւանց պահպանութիւնը եւ անարգել զարգացումը ապահովելու։ Ըստ այսմ աթենական դաստիարակութեան իտէպլն էր մարդոյն ամբողջական զարգացումը։ Սոզոն կը յանձնարարէր դիւրակեցիկ քաղաքացւոց իրենց վաւակները հրահանգել ոչ միայն մարմնամարզից, այլ և երաժշտութեան, ուսողութեան, բանաստեղծութեան և բանասիրութեան մէջ։ — յանձնարարութիւն որ ընդարձակօրէն ի գործ դրուեցաւ, վասն զի աթենական քաղաքակրթութեան գեղեցիկ օրերուն մէջ ամենէն աղքատներն ալ իրենց որդւոց դիտութեանց ու գեղարուեստից դասեր տալ կուտային, այս նպատակին համար յանձն առնելով ամէն տեսակ՝ զոհողութիւն և զրկում։ Կային, որպէս ըսինք, քերականներ, երաժիշտներ, հռետորներ ու փիլիսոփայներ, առ որս կը յաճախէր Աթենացւոց մատաղ սերունդը 7 էն մինչև 18 տարեկան, կրթութեան յաջորդական աստիճաններ փոխելով Մարդարանք (gymnase), որք ի սկզբան միայն պատանեաց մարմնակրթական վարժութեանց յատկացեալ շէնքեր էին, կամաց կամաց իմացական կեանքի փայլուն կեդրոններ եղան, նման արգի Համալսարանաց, վասն զի մաթեմատիկոսք, հռետորք, իմաստասէրք անոնց մէջ⁽¹⁾ սկսան ուսուցանել, և ոչ միայն երիտասարդք, այլ և հասուն մարդիկ անոնց շուրջը կը ժողովէին զանոնք մտիկ ընելու համար։

* * *

Պլատոն, թէ և սպարտական դրութեան զարմացող և իր իտէպլ «Քաղաքացիին կազմաւորութեան»⁽²⁾ մէջ անհատը միայն պետութեան տարրը նկատելով անոր անհատական անկախութիւնը մեծապէս անձկացնելու և ջնջելու իսկ տրամադիր, շատ աւելի լայն կը գծէ կրթութեան սահմանը, իւր «Օրէնք»⁽²⁾ ին մէջ, իբրեւ ճշշ-

մարիտ Աթենացի։ Երկու մասի կը բաժնէ դաստիարակութիւնը։ Մարմնակրթական (Gymnastique) և Մուսայական (Musique), առաջինը մարմնոյն և երկրորդը՝ մտքին զարգացման յատուկ, ինչպէս արդէն կ'ընէին Աթենացիք, musique բառն առնելով շատ ընդարձակ իմաստով և անով ո'չ միայն երաժշտութիւնն հասկանալով, այլ և ամէն ինչ որ իմացական մըշակման կը ծառայէր, գրագիտութիւն, գիտութիւն, գեղարուեստ և փիլիսոփայութիւն։ Ո՛րքան գեղեցիկ և կատարեալ է արդէն Պլատոնի դաստիարակութեան տուած սահմանը։ «Դաստիարակութեան նպատակն է տալ մարմնոյն և հոգւոյն բոլոր այն գեղեցկութիւնն ու բոլոր այն կատարելութիւնն որոց ընդունակ են նոքա։» Միայն թէ նա իր դաստիարակութեան ծրագրին մէջ անտարբեր կ'երեւի երկրագործաց ու արհեստաւորաց նկատմամբ։ Բայց քաղաքապահ ու պաշտօնատար դասուց համար կը պահանջէ խնամեալ կրթութիւն։ Պաշտօնատարութեան (magistrature) սահմանեալ հատընտիր երիտասարդք միւսներէն աւելի բարձր, գիտական և իմաստասիրական կրթութիւն մը պիտի ստանան, որ կը պարունակէ տեսական ուսողութիւն, աստեղագիտութիւն ու երաժշտութիւն, և փիլիսոփայութիւն, որ 20 տարեկանէն սկսեալ մինչև 35 տարեկան հասակը պիտի շարունակուի, եւ իբրեւ բարձրագոյն ուսում, պիտի յաջորդէ կրթութեան առաջին աստիճանին, որ կը պարունակէ մարմնամարզ, գրագիտութիւն, գործնական երաժշտութիւն, և թուաբանական, երկրաչափական ու աստեղագիտական պիտանի գիտելիք։ — Արիստոտէլ ալ ուսման առարկայները երկուքի կը բաժնէ։ 10. անոնք որք քաղաքացիին կեանքի յարմար կ'ընեն, և 20. անոնք որոց նպատակն է մարդու զարգացումը։

* * *

Նշանակելի է Յունաց դաստիարակութեան, ինչպէս նաև անոնց մանկավարժ-

(1) Որք այս առթիւ գեղեցկացան եւ ընդարձակուեցան։

(2) Տրամախօսութիւն Պլատոնի։

խմաստատիրաց գաղափարներուն մէջ, մարմնամարզի և երաժշտութեան ընծայուած մեծ կարեւորութիւնը: Մարմնամարզը ֆիզիքական դաստիարակութեան կարեւոր միջոցը կը համարէին, և երաժշտութիւնը՝ բարոյականին: Մարմինը զօրաւոր, տոկուն, դիւրաթեք ու բարեձեւ կ'ուզէին. ուժեղ, քաջառողջ ու գեղեցիկ կ'ուզէին որ ըլլային իրենց երիտասարդները, և մարմնական կորուվոյ, ճաղկութեան ու ճարտարութեան փորձերու և վարժութեանց մէջ կը գրտնէին այդ արդիւնքը ձեռք բերելու միջոցը: Եօթ տարեկան հասակէն կ'սկսէին այս հրահանգները և անընդհատ կը շարունակուէին ցվերջ դաստիարակութեան շրջանին: Եթէ երգն ու պարը յաւելցնենք մարմնամարզին վրայ, արդէն սպարտական կրթութիւնը սահմանած կ'ըլլանք. և պարն ալ արդէն երգն ու մարմնամարզը յինքեան միացնող վարժութիւն մը չէ՞: Յոյնք մարմնակրթանաց մէջ միայն օգտախնդիր նպատակ մը չէին դիտեր. գեղեցկագիտական նուրբ հոգածութիւն մ'ալ ունէին, ու մարմնամարզը ու պարը կը նկատէին նաև միջոց մը մարմնոյ շարժմանց ու ձեւոց տալու դիւրութիւն, շնորհ ու ներդաշնակ զարգացում: Պիւթեան, Նեմեան, Իսթմեան և մանաւանդ Ուլիպեան խաղերը մարմնամարզիկ մրցութեանց աշխարհախումբ հանդէսներ էին, և կը ծառայէին ֆիզիքական կորուվոյ և ճարտարութեան եռանդը ոգեւորելու ու մշտավառ պահելու յոյն երիտասարդութեան մէջ, — հանդէսներ զորս այսօր Եւրոպա կը խորհի վերակենդանացնել՝ մտաց և մարմնոյ դաստիարակութեան մէջ երկար ատենէ ի վեր իր կորուսած հաւատարակչութիւնը վերահաստատելու նպատակաւ:

Այս հաւատարակչութիւնը, այս ներդաշնակութիւնը յոյն ցեղերէն Աթենացւոյն տեսլականն էր: Գեղեցիկ բառ մ'ունէր նա որով կը բացատրէր զայն: Այդ բառն էր καλοχῆρος, որ, գեղեցիկ (καλός) և քաւի (ἀγαθός) բառերէն բարդուած, մարմնոյ և հոգւոյ կրկին գեղեց-

կութիւնքն ներդաշնակ միութեան մը մէջ համաձոյլ յանձին բերող մարդը կը նշանակէ, որ միանգամայն ֆիզիքական, իմացական և բարոյական առողջ դաստիարակութեամբ, մարմնոյ, մտաց և սրտի յատկութեանց համընթաց զարգացմամբ միայն կրնայ կազմուիլ:

Մարմնամարզին քով, ըսի, ընդհանուր Յոյնք նաև երաժշտութիւնը կը դնէին իբրեւ անհրաժեշտ պայման դաստիարակութեան: Սպարտայի մէջ մանկտին կը սովորէր երգել կրօնական ու ժողովրդական երգերը: Աթէնքի մէջ ամէն քաղաքացիք պարտաւոր էին երաժշտութիւն գիտնալու: Անոր ամենէն ծաղիկալը ջընին մէջալ երաժշտական գործիք մ'ածելէ զխոնալ խնամեալ կրթութեան մը մէկ կարեւոր լրացուցչն գուրի ըլլալ կը նշանակէր: Այսպէս, Թէմիստոկլէս կը նշկատուէր իբրեւ անկատար դաստիարակութիւն ստացած անձ, վստն զի չէր գիտեր նուագել ո՞ր և է գործիքի վրայ: Ուսանող մանուկը, որպէս քերականին, նոյնպէս և կիթառի վարպետին (cithariste) քով յաճախել պարտաւոր էր: Զբօսանքի նպատակաւ չէր որ երաժշտութիւնը ա՛յսքան փութով կը մշակէին Յոյնք. ո՛չ, այլ յաւետ իբրեւ բարոյական կրթութեան գործի մը: Նոյնը կը համարէին երաժշտութիւնը հոգւոյն համար ինչ որ մարմնամարզը՝ մարմնոյն համար: Պղատոն 13 տարեկանէն սկսիլ կուտայ երաժշտութեան ուսումը քնարի վրայ, և Արիստոտէլ գեղարուեստներուն մէջէն կը յանձնարարէ մասնաւորապէս երաժշտութիւնը՝ հոգւոյն վրայ անոր բարոյական շինիչ ներգործութեանն համար, և իբրեւ զբօսանաց ազնուացուցիչ: Արդարեւ ուշագրաւ է հին Յոյներուն դաստիարակութեան մէջ երաժշտութեան կատարած այս դերը, ու ո՞րչափ իրաւունք ունէին ճաշակի բարեոքման, ըզգացմանց մաքրութեան ու բարձրացման, եւ ազնուական տենչերու զօրացման մասին անոր քաղցր ու բարերար ազդեցութեան հաւատալու:

Աղջկանց դաստիարակութեան խնդրոյն մէջ Աթենացիք չեն երեւիր ունենալ նոյն բարձր հայեացքը, նոյն սէրը կատարելութեան զոր կը ցուցնեն արական սեռի կըրթութեան համար: Կիները խոնարհաբոյն սեռէ էակներ համարելու սխալը կը գործեն, և անոնց կըրթութիւնը գրեթէ բոլորովին զանց բրած են: Կին մը, յաջս անոնց, բաւական կըրթութեամբ է երբ գիտէ տունը յանձանձեւ, բուրդ մանեւ, ծարրին ու չարին օգնութեամբ խնամ տանիլ իր գեղեցիկութեան: Բացառաբար միայն պարկեշտ ընտանեաց աղջկունք կ'ունենին կարգաւ և գրել, գեղարուեստ կամ գիտութիւն, ազատարարոյ կանանց բաժինն էր այդ, իրբու փրկանք մ'իրենց անպատուութեան կամ յաւելում մ'իրենց հրապուրանաց: Բայց Սպարտացին, որ յարգանք կը տածէր առ կիներ, ինչպէս տեսանք, աղջկանց համար պարտաւորիչ կ'ընէր արականին տրուած կըրթութեան յար և նման կըրթութիւն մը, և Աթենացւոյն պէս զանոնք տանց մէջ վաւելելով նատուրական կեանքի մը մեղկութեան վարժեցնելէ հետ, կը սովորեցնէր զանոնք յասպարէզ գալու, մրցանաց մասնակցելու, և կրօնական հանդիսից մէջ երիտասարդաց ներկայութեան երգելու և պարելու, այս վերջնոց համար անոնց գովեստն ու պարսաւն ալ գրգիւ մ'ընելով քաջութեան և առաքինութեան, վասն զի ներելի էր աղջկանց իրենց երգոց մէջ ծաղրական սուր սլաքներ արձակել կամ դրուատիք տալ երիտասարդաց իրենց վարմանցն համեմատ, և աղջկանց մէջ բարի անուն մ'ունենալ հպարտութեամբ կ'ուռեցնէր արժանաւոր պարմանոցն սիրտը:

Պղատոն եւս կարեւոր կը համարէր, Սպարտացւոց նման, աղջիկները, որք ապագայ քաղաքացիները պիտի ծնէին, կըրթութեան և հրահանգաց ենթարկել: Միայն թէ Սպարտայի մէջ կըրթութիւնը միակողմանի էր լոկ, և Սպարտացիք ու Պղատոն անտես կ'ընէին կնոջ յատուկ ընտելութիւնը որ իր յարմար կըրթութիւնը կը պահանջէ:

* *

Յունական Դաստիարակութեան մէջ յայտ կարեւոր դեր մը տրուած էր նաեւ բանաստեղծութեան, որ ինքն ալ երաժշտութիւն մ'է գերազանցապէս կըրթութեան ներշնչող: Քերականք իրենց դպրոցաց մէջ, անմիջապէս որ տղայք քիչ շատ գրել կարդալ գիտնային, անոնց ձեռքը կուտային բանաստեղծները՝ առաջանութեամբ կարդալու, բացատրելու և իրերան ուսանելու համար: Հոմերի Իլիադն ու Օդիսսեան Պոյն տղոց ընթերցանութեան սովորական դասադրքերն էին, որոց վրայ կ'աւելնային Հեսիոդ, Սոլոն, ուրիշ եղբերեղակներ ու ողբերգակ բանաստեղծք: Ասոնց վրայէն կ'ուսուցուէր լեզուն, ու միանգամայն բարոյականը, զոր ուսուցիչը իր բացատրութեանց մէջ դուրս կը հանէր մեկնելի հատուածէն: Պղատոն և Սոկրատէս եւս քերթութեան ընթերցումն և ուսումնասիրութիւնը կը յանձնարարէին, բայց Պղատոն ամբողջ երկասիրութիւններ տղայոց ձեռքը տալէն աւելի հատընտիր հատուածները նախամեծար կը համարէր, վասն զի կը խորհէր թէ առաջինք կրնան բարոյականի տեսակէտով խորշելի հատուածներ պարունակել: Սպարտա, հակառակ իր բարուց խստութեան, չէր մերժեր բանաստեղծութիւնը. ընդհակառակն առնական լուրջ ու բարոյալից բանաստեղծութիւնը շատ կը յարգէր. իր պատանիքն ու կուսանքը կը վարժեցնէր ոչ միայն երգելու վեհաշունչ երգեր, այլ և յօրինելու նոյնպիսի տաղեր ու նուագներ: Բանաստեղծութիւնը այդ ժողովրդեան սնունդն էր իր բոլոր հասակներուն մէջ. առանց անոր կըրթութիւն չկար, ո՛չ կրօնական տօն, ո՛չ ժողովրդական հանդէս, և իր զրօսանքներուն ու խաղերուն, երգին հետ ընկերացեալ կամ անջատ, կը խառնէր ան իտէալի արբեցութիւնը, աղնուարար սելանը գեղեցիկին:

* *

Վերջացնենք մեր սոյն տեսութիւնը վերաւերելով հնոյն ելլադայ դաստիարակ—

փրկափառից վարդապետութեանց մի քանի այլ ուշադրաւ կէտերն ալ:

Պղատոնի վարդապետը, Սոկրատ, իրեն յատուկ կերպ մ'ունէր ուսուցման, որ արժանացած է իրաւամբ ամէն ժամանակաց մանկավարժներու ուշադրութեան և սքանչացման. զայն ի գործ կը դնէր սովետից հետ իւր վիճաբանութեանց և իւր աշակերտաց հետ իւր հրահանգիչ խօսակցութեանց մէջ: Մեկնելով ամենայայտնի նախադասութենէ մը, ճարտարօրէն շարայարեալ հարցումներով, կոչում ընելով հակառակօրդին կամ աշակերտին ուղիղ բանին ու դատողութեան, կ'ստիպէր հակառակօրդը ետ առնուլ իւր կարծիքը՝ տեսնելով զայն հետեւութենէ ի հետեւութիւն մի անհետեւ նախադասութեան յանգած, ուստի և իրրեւ սուտ կամ սխալ խայտառակութեամբ, և կամ իր աշակերտն կը բերէր ինքնին ընելու ճշմարտութեանց գիւտը: Այս մեթոտը, թէ և ոչ ուսուցման ամէն նիւթոց պատշաճ(*), և սահմանի մը մէջ կիրառելի, ընտիր է աշակերտին իմացականութեան զարկ տալու, անոր մտաւոր ինքնաբեր գործունէութիւնը զրգռելու և քաջալերելու, ինքն իր վրայ անդրադառնալ վարժեցնելու և մտածել գրգռելու համար զայն. աշակերտը ինքնին իր սխալմանց վերահասու կը լինի, և ինքնին կը վերլուծէ իր զգացողութիւնքն ու ըմբռնումները, և ընդհանուր կամ մասնաւոր իրողութեանց հետեւանքներուն կը թափանցէ ինքնին. և երբ միտքն ինքնին ճշմարտութեան մը կը խելամոտէ, ա'լ ան իր սեփականութիւնն է, ոչինչ կրնայ կորզել զայն անկէ: Ահա՛ ասոր համար արդի մանկավարժութիւնը ջերմապէս կը յանձնարարէ Սոկրատեան մեթոտը:

Դիտելի է որ մայրական դպրոցներու, մանկապարտէզներու զրադմանց գաղափարը կայ Պղատոնի խօսքերուն մէջ, երբ կ'ըսէ որ երեքէն վեց տարեկան տղայք,

աղջիկ և մանչ ի միասին, իրենց մարց և ստնտուաց հսկողութեան տակ ազատօրէն պիտի ընեն այնպիսի զբօսանքներ որք յարմար ըլլան ֆիզիքապէս և իմացականապէս զանոնք զարգացնելու:

Նոյնպէս նշանակելի է որ Պղատոն, արդէն իր ժամանակին մէջ, Բրիստոսէ չորս դար յառաջ, իրագիտական, առարկայական դասեր կը յանձնարարէ երբ կը պատուիրէ որ, թուարանական գործողութեանց նախնական վարժութիւնները դիւրացնելու համար, տղոց մէջ բաժնուին խնձորներ ու պսակներ, ոսկիէ, արծաթէ կամ արցրէ և ուրիշ նման նիւթերէ շինուած փոքրիկ շիշեր, որպէս զի պարտաւորուն զբօսնելով թուոց գիտութեան դիմել:

Երբ մէկ կողմէն Սպարտական դաստիարակութեան արդեանց մէջ կը տեսնենք նոյն իսկ դաստիարակութեան մեծ գորութիւնը, վասն զի Լիկուրգոս կրթութեան միջոցաւ կրցաւ իւր գիտման համապատասխան սերունդ մը պատրաստել, թէ և անձուկ իտէալի մը համեմատ և յաճախ բռնազբօսելով մարդուն բնական հակամիտութիւնները, — ինչ որ եւս աւելի պայծառօրէն ցոյց կուտայ կրթողական գործողութեան ազդեցութիւնը, դժուարին ըլլալով իրեն դէմ ունենալ բնութիւնը —, միւս կողմանէ կը տեսնեմք որ դաստիարակութեան ալ մեծագոյն նեցուկը, արդիւնաւորութեան ապահովագոյն պայմանը սովորութիւնը կամ ունակութիւնն է, որ կ'ստացուի մի և նոյն գաղափարաց ու զգացմանց չրջանակին մէջ միտքն ու սիրտը յաճախագոյնս բերելով ու մի և նոյն գործողութիւնները կրկնել տալով, մանաւանդ բարոյականի տեսակէտով որ վերջնական նպատակն է դաստիարակութեան: Պղատոն և Արիստոտէլ երկօքին եւս կը պնդեն սովորութեան մեծ գորութեան վրայ, խստիւ պատուիրելով խնամով ընտրել ամէն ինչ որուն հետ մանուկը պիտի ունենայ ամենօրեայ կամ յաճախակի շփում, դաստիարակ, ընկեր, գիրք: «Անտարբեր բան մը չէ, կ'ըսէ Արիստոտէլ, մատաղագոյն հասակէն այս կամ այն կերպ գործելու սովորիւ ընդհակառակն յոյժ կա-

(*) Ընդհանրապէս ընդհանուրէ մասնաւոր հետեւութիւններ հանել և զգայարանաց ըմբռնումներու և փորձառական ծանօթութեանց վրայ վերլուծման, բաղդատման ու հանրացման գործողութիւններ կատարել տալու յարմար է:

րևոր բան մ'է այն, կամ մանաւանդ, ամէն ինչ է այն, ամէն բան անոր մէջն է:»

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Պարագլուխը վերջանալու մօտ են արդէն և դպրոցներու դուռներն կը վերաբացուին քանի մ'օրէն: Կը ներեօն ինձ դաստիարակութեան յարգոյ պաշտօնեայք որ վայրկեան մը իրենց ուշադրութիւնը հրաւիրեմ խնդրոյ մը վրայ՝ որուն կարեւորութիւնն չի տրուիր շատ դպրոցներու մէջ:

Ժամանակացոյցի պատրաստութեան, այսինքն դպրոցական թանկագին ժամերը հնար եղածին չափ օգտակար և հանճարեղ կերպով գործածելուն վրայ է խնդիրը: Ձեմ գիտեր թէ ընթերցողացս համար ո՛ր աստիճան կարեւորութիւն ունի այն. սա միայն ճշմարիտ է թէ մանկավարժութիւնը հիմնական օրէնքներ կը գծէ այս մասին, և կ'ըսէ թէ դասերու հանճարեղ ժամանակացոյց մը երկու գլխաւոր կանոններու վրայ հիմնուած պէտք է ըլլայ. դարձադարձ (alternance) և հանգիստ (remission): Ինչպէս որ հողը չտկարացնելու և կարելի եղածին չափ շատ արդիւնք ստանալու համար միեւնոյն գետնին վրայ միեւնոյն ժամանակամիջոցի մէջ տարբեր տարբեր տեսակ բոյսեր կը մշակեն, որոնք նոյն կարգաւ դարձեալ իրարու կը յաջորդեն յետոյ, նոյնպէս ալ դպրոցի մը մէջ դասախօսուած զանազան ճիւղերը պէտք է մասնաւոր կարգաւ, և ո՛չ ըստ բաղդին, իրարու յաջորդեն, եթէ կ'ուզենք կարելի եղածին չափ շատ արդիւնք ձեռք բերել: Իսկ հանգիստն է ուղեւային գործունէութեան առ ժամանակեայ դադարն, քունն է այն որ կը յաջորդէ տքնութեան, խալն է որ կը յաջորդէ սերտողութեան: Հիմայ կը հասկցուի թէ ինչո՞ւ այս երկու պայմաններն պէտք է

անհրաժեշտագէտ աչքի առջև ունենալ դպրոցի ժամանակացոյցը պատրաստելու միջոցին: Դարձադարձի օրէնքով պէտք է որ դիւրին վարժութիւնը, դասը յաջորդէ դժուարին, նոյնպէս, ուշադրութեան մեծագոյն ճիգ պահանջող ուսմանց դասերն ու հրահանգներն, ինչպէս, թուարանութեան, քերականութեան, շարադրութեան, աւելի առաւօտեան ժամերուն մէջ պէտք է դրուին, ինչպէս կը պահանջէ Կազմական Կանոնագիրն. դարձեալ պէտք է որ մտաց միեւնոյն կարողութեանը (զոր օրինակ, յիշողութիւն) կարօտող երկու դասեր ընդմիջուին, բաժնուին ուրիշ կարողութիւն մը (զոր օրինակ, դատողութիւն) պահանջող դասով մը: Դասերու այս փոխանակութիւնը կը պատճառէ թէ՛ ֆիզիքական հաճոյք և թէ՛ մտաւորական, որովհետեւ տղայն նոր բան մը կը սովորի և իւր հետաքրքրութիւնը նոր սնունդ մը կը գտնէ: Հետեւում թիւնն այն կ'ըլլայ որ աշակերտն աւելի լաւ կերպով մտիկ կ'ընէ դասին, աւելի լաւ կերպով կ'ըմբռնէ զայն: Ու յետոյ, տղայն պիտի տափաքի վերադառնալ այն դասին որ զինքն չէր տաղտկացուցած և դադրեցուցուած էր այն միջոցին երբ իրեն յոգնութիւն պիտի պատճառէր: Դիտելի է թէ դասերու այս դարձադարձն կրնայ գործադրուիլ ո՛չ միայն ուսմանց զանազան ճիւղերուն համար, այլ նոյն իսկ մի և նոյն ճիւղին համար: Օրինակի համար, ոչ միայն ուսողութեան դասէ մը վերջ դրադիտութեան դաս մը աւանդել, այլ եւ նախ կոտորակաց տեսականը աւանդել և յետոյ, միշտ միեւնոյն դասին, կոտորակաց վրայ խիստ գործնական խնդիրներ ընել տալ, կամ թէ ճարտասանութեան օրէնքներն աւանդելէ վերջ գեղեցիկ գրուածք մը լուծել:

Իսկ իւրաքանչիւր դասաժամէ վերջ պէտք է տալ հանգստամիջոց մը, (10 վայրկեան, ըստ Կազմական Կանոնագրի) զոր տղայք պիտի անցնեն խաղալով, որովհետեւ խաղ, զբօսանք կարեւոր են տղուն համար: Անցած են այն ժամանակ-

ները յորս կը կարծէին թէ միտքը կը մոռնայ խաղալով, զուարճանալով. ո՛չ, միտքը բանմը չի մոռնար զուարճանալով, ընդհակառակը նոր ոյժեր կ'ստանայ այս ուղեղային հանգստով և մարմնական գործունէութեամբ: Յաւալի՜ ժամանակ ապաքէն այն՝ յորում խեղճ աշակերտք ստիպուած էին ծնրածալ նստելու օրն ի բուն իրենց տապաստակներուն վրայ, աչքերնին յառած իրենց Քերականին, Հեգարանին, Սալմոսին կամ Նարեկին վրայ....

Եւ քանի որ խօսքը հանգստի վրայ է, ըսենք անցողակի թէ ճարտար դաստիարակը, ամէն անգամ որ առիթը ներէ, դասերը կը համեմէ փոքրիկ բարոյավէպերով: Ամենքս ալ գիտենք թէ ո՛րչափ հաճելի և օգտակար են այս բարոյավէպք, և թէ որչափ անգամներ կարգապահութիւնը վերահաստատելու պատուական միջոց մ'եղած են փոքրերու համար:

Յ. Բ. ՀԻՆԴԼԵԱՆ

«ԱՄԵՆԱՄԵՆ ՅԱՐԳԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆՔ ՄԱՆԿԱՆ»

(Maxima debetur puero reverentia)

(Մրցման դրուած նիւթ)

Հռովմայեցի երգիծարանին, Յորնաղի, այս նախադասութեան վրայ բացատրական գրութիւններ յղած են մեզ երեք ուսուցիչներ, որոց երկուքն արդէն պատիւ ունեցանք ներկայացնելու մեր ընթերցողաց նախորդ նիւթոյն վրայ իրենց շարադրութեանցն առթիւ: Սոքա են Դաւիթ Էֆ. Սարգսեան եւ Մ. Յ. Աղասեան Էֆէնտի: Երրորդն առաջին անգամ կը մասնակցի մրցման, եւ է Ղեւոնդ Էֆ. Սրուանձտեան, չրջանաւարտ Ազգ. Կեդր. վարժարանի եւ այժմ ուսուցիչ:

Դարիք եֆ. Սարգսեան կը համարի թէ մեծ երգիծարանը արձակած է այդ վճի-

ռը իբրեւ արտայայտութիւն այն խորին ակնածութեան զոր կը ներշնչէ իրեն մանկան անմեղութիւնը՝ հանդէպ իր ժամանակի Հռովմին ապականութեանցն ու ստորնութեանց որք իր զայրոյթը կը գրգռեն ու նողկանք կուտան իրեն: «Նոյն խորախորհուրդ խօսքին — մեծ յարգանք մանկան — արձագանգը կը թռի, կ'ըսէ, մարդուն կուրծքէն, երբ մարդ, բարուց նոյն խենչնութիւններէն, նոյն ապականութիւններէն... որոցմով խառնուած է իւր բնութիւնը, գանած զգուած, կը փնտռէ կէտ մը ուր կարող ըլլայ հաստատել իր ակնարկը... ու կը գտնէ մանուկը իր հրեշտակային ժպտներովն, իր երկնային բարբառներովն ու անմեղ սիրտարուամներովն: Իրեն համար մանուկը կատարեալ մարդն է, անոր անմեղուկ վիճակէն մեկնած ենք ու անոր պարտինք հասնիլ. ահա ինչու համար ամենամեծ յարգանք պարտական ենք անոր: Այդ յարգանաց արտայայտութեան եղանակը՝ արտաքին ձեւերը չեն, զորս չըմբռնեն մանուկը, ու ան՝ անգիտակից իր արժանեաց՝ «յարգանք մը չ'սպասեր բնաւ:» Մեր յարգանաց արտայայտութիւնը նպատակ պիտի ունենայ «ուշադրութիւն ընել մանկան այն յատկութեանց որոցմով կը գրաւէ մեր հիացումը. — «խուլ յարգանք մը, հիացման, գուրգուրանքի ու խղճամիտ փափկանկատութեան խառն արտայայտում մը:» Եւ յետոյ պէտք է ուշադիր ըլլալ պահելու միշտ մանուկն իր անմեղութեան մէջ, եւ առ այդ ծածկել անկէ մեր «կեանքին մթին ուրուանկարները, զգուշանալ անոր առջեւ հանելու մեր ներքին կեանքին ու եւ է մասնանկարը որ ազատ կողմեր ունի:» Բայց, կը յաւելու Սարգսեան Էֆէնտի, ըստ որում մանուկը, «թէ եւ մարդ կատարեալ», օր մը պիտի մտնէ աշխարհ՝ որ չէ օժտուած անոր կատարելութեամբ», — թէ եւ «կ'ուզէինք որ աշխարհի իսկական վիճակին անգիտակ մնայ, եթէ կարելի ըլլար» — պէտք է մանկան հոգին զօրացնել աստիճանաբար ներկայացնելով անոր արտաքին աշ-

խարհի թերի ու ապականեալ կողմերը», եւ որպէս զի անոնցմէ չտպաւորուի, ու «արփիի մը պայծառ, անուշ ու կենեղուտ ճաճանչներով անցնի մարդկային ընկերութեան մէջէն», «զեղուէ անոր սրտին մէջ գթութեան եւ սիրոյ վսեմ սկզբունքները»:

Մ. Յ. Աղասեան եփ. «Ուսուցչին կազմելիք բարոյական եւ իմացական չէնքին հիմը» կը նկատէ յարգանք առ մանուկն: Սա, կ'ըսէ, յոյժ դիւրագգած է եւ ունի արժանապատուութեան զգացում. «ունի նաեւ կանուխէն զաղափարն թէ ուրիշներն ինչ կը պարտին իրեն եւ ինք՝ ուրիշներուն»: Մանուկը յարգելն է գգուել ու սնուցանել անոր արժանապատուութիւնը: Եւ այնու մանկան մէջ ալ կ'արթնայ փոխադարձ յարգանքի պարտականութեան զգացում մը, կը ներշնչուի անոր «ամենակատարեալ համարութիւն առ ուսուցիչն, ում կը յաջորդեն վստահութիւն ու կրաւորական վիճակ»: Այդ յարգանք «մտաւոր ու բարոյական յառաջդիմութեան ամենամեծ խթանն է» ուսանողին, եւ ուսուցչին համար ալ իր պաշտօնին դժուարութեանց դիւրաւ յաղթելու ամենագոր միջոց մը: «Հետեւաբար դաստիարակութեան գործին մէջ ամենէն աւելի կարեւոր եւ ամենէն աւելի արդիւնաւոր միջոցն է յարգել մանուկն ամենուրեք, ամէն ժամ, իր աշխատութեան, իր վշտին ու հրճուանքին մէջ, ճշմարիտ վարժարանն է այն յորում ուսուցիչ եւ ուսանող կը գուրգուրան մէկմէկու, կը սիրեն ու կը յարգեն զիրար»: Եւ Աղասեան էֆ. կը գանգատի թէ «յոյժ ցաւալի է որ առ մեզ առ հասարակ մանուկը նկատուած է իրր յարգանաց անարժան, ամենայնի անգիտակից, ի մի բան մեքենայ մը», ու կը մեղադրէ այն դաստիարակները որոց կրթողական բոլոր ճարտարութիւնը կը կայանայ ի դէպ եւ յանդէպ սաստեղու, արդար անարդար պատժելու եւ ամէն առթիւ կրաւորական հնազանդութիւն պահանջելու մէջ, «մեռցնելով ամէն համարձակախօսութեան, նախաձեռ-

նութեան ու եռ-եփ եկող աշխուժութեան փորձերը»: Ինչ իրաւունք ունին այսպիսիք յետոյ իրենց գանգատներով մեր լսելիքը յոգնեցնելու՝ ըսելով «թէ իրենց աշակերտները ծոյլ, ապուշ ու անզգայ, անուղղայ ու լիրբ են, զուրկ արժանապատուութեան փոքր ինչ զգացումէ եւն»: Աղասեան էֆ. ի ակնարկած այդ դաստիարակները մեր ազգային վարժարանաց մէջ «կառաւիարիչ անուան տակ պաշտօնավարող խեղճերն են որք սխալ, շատ սխալ ըմբռնած են դաստիարակին պաշտօնը...», եւ որոց անմեկնելի պատճառաւ մը ցայս վայր յանձնուած է սաներու դաստիարակութեան գործը, հակառակ կազմ. կանոնադրի բացորոշ արգելքին, ու անգոսնելով դասարանական դրութեան ա՛յնքան անվիճելի՝ առաւելութիւնները»:

Ղեւոնդ եփ. Սրուանճեան իր գրուածքը կ'սկսի յայտնելով կարեւորութիւնն մանկան հոգւոյն ուսումնասիրութեան իրրեւ անհրաժեշտ ու էական պայման լաւ ուսուցչութեան: «Պէտք է գիտնալ որ, կ'ըսէ, մանուկը անգիտակից, բնազդական էակ մը չէ, այլ խորհող, գիտակից ու վերլուծող. հետեւաբար պէտք չէ անտեսել զինքը, այլ պէտք է կարեւորութիւն տալ իրեն եւ յարգել իր մանրիկ էութիւնը»: Ուսուցիչը, գիտնալով որ «իր էութիւնը ամբողջ մանկան կողմանէ կը լրտեսուի եւ լուրջ ու անաչառ քննութեան մը կ'ենթարկուի», պարտի զգոյշ կենալ, երբ աշակերտին գիմաց կը գտնուի, իր շարժումներուն ու վարմանց մէջ, «միշտ արթուն, միշտ լուրջ, միշտ գորովալից, միշտ յարգող»: Երբ ուսուցիչը իր պաշտօնին փափկութեան գիտակցութիւնն ունի, երբ կը սիրէ ու կը յարգէ իր աշակերտները, յայնժամ սոքա հլու եւ հնազանդ են. բայց անգամ մ'որ տղայք ուսուցչին «ապիկարութենէն ու թուլութենէն օգտուելով» գերակշիռ դիրք ստանան, երբ անգամ մ'իրենց արժանապատուութիւնը ուսուցչին կողմէն վիրաւորուած զգացին, «ա՛լ մնաք բարձր կարգ ու կանոն, հնազանդութիւն ու

ակնածանք, սէր ու յարգանք:» Ալ այն ատեն ուսուցչին կը մնայ, կ'ըսէ Սրուան-ձտեան էֆէնտի, գլխարկն ու գաւազանն առնուլ ու մեկնիլ դպրոցէն, այլ եւս հոն ոտք չկոխելու համար: Կը վերջացնէ իր յագուածը ցաւ յայտնելով որ շատ մ'անարժանք, ի չգոյէ այլ գործոյ, եկած մտած են կրթական գործի մէջ: «Հեռո՛ւ հեռո՛ւ» կը գոչէ այդպիսեաց «որոնք՝ մանկական հոգեբանութեանը անդիտակ՝ ահաւոր նախճիրներ կը գործեն մատաղ էակներու սրտին, մտքին եւ հոգւոյն մէջ», եւ «անոնց տեղ թող գան բազմին ուսուցչական անբոլոր վրայ անոնք որոնք կոչուի ունին, եւ որոնք զիսեմ վարուիլ մանկան հետ ամենամեծ յարգանքով:»

Երեք դրութեանց ալ հեղինակները, ինչպէս մեր վերլուծութենէն կը տեսնուի, ջանացած են մեկնել Յորնադի խօսքին խմաստը իրենց յատուկ տեսակէտներով, եւ իւրաքանչիւրն յայտնած է զմանապէս լաւ մտքեր: Բայց այս անգամ անոնցմէ ոչ մին պատշաճ համարեցինք հրատարակել աստ, վասն զի, ներուի մեզ ըսել, ոչ մին թուեցաւ մեզ թափանցած ըլլալ կատարելապէս խնդրոյն էութեանը, եւ ամէնքն ալ ուղիղ մտածութեանց հետ խառն կը բերէին թիւր կամ չափազանցեալ տեսութիւններ:

Առաջին դրութեան հեղինակը մանկան կատարելութեանց վրայ հիացական զգացման մը հետեւանք կը դնէ յարգանքը զոր Լատին երգիծաբանը կը պահանջէ մանկան համար: Բայց դիտենք որ մանուկը կատարեալ էակը չէ, եթէ ոչ պէտք չպիտի ունենար կրթութիւն: Ոչ միայն մտօք ու մարմնով տկար ու անկատար է, այլ եւ բարոյապէս եւս: Իր անմեղութիւնը անգիտութիւն է. եւ թէեւ իրաւ է որ իր այդ անգիտութիւնը, դեռ կրից անփորձ ու ցանկութեանց անձանթ իր սիրտը զինքը հեռու կը պահեն չափահասութեան յատուկ մեղքերէն, բայց նա եւս ունի իր չարութիւնները. մանուկը անձնասէր է սովորապէս, ու ան անգութ ալ

է. cet âge est sans pitié. ու ժառանգականութեամբ շատերուն մէջ կան աւելի կամ նուազ չարի սերմունք: Միայն թէ մանուկները, երբ չարիք գործեն, անմեղ յանցաւորներ են, ու մենք չուտով կը ներենք իրենց, վասն զի դեռ իրենց բանականութիւնը չէ կարող ընել բարւոյն ու չարին ընտրութիւնը, դեռ իրենց կամքը չէ կազմուած, եւ հետեւապէս դեռ չեն կարող պատասխանատու համարուիլ իրենց գործոց: Բարոյական կատարելութիւնը անգիտակից գործունէութիւնը չէ, աւելի կամ նուազ անգիտօրէն բարի կամ չար, այլ գիտակից, խորհրդածեալ ու ազատակամ բարեար գործունէութիւնն է: Մարդուն է՛ն մեծ ստորագելիքն իր բանաւորութեան ու ազատակամութեան հանգամանքներն են, եւ դեռ երկուքն ալ յոյժ անկազմ ու անկատար են մանկան մէջ: Արդարեւ գիտակցութեան յանցանքներուն ու խղճի տաքնապնեւուն առջեւ մարդ յաճախ երանի՛ կը կարդայ անգէտ ու անխելթ մանկութեան. բայց այդ այնպէս է որպէս մարդ կենաց տառապանացն հանդէպ մահուան անզգայութեան ու գերեզմանի հանգստին ցանկար: Մանկան կատարելութեան պարագային մէջ, դատարարութիւնը ժխտական դեր մը պիտի ունենար, ինչպէս որ կ'երեւի ունենալ ըստ Սարգսեան էֆ.ի, որ կարծես կը կայացնէ զայն աշխարհի տգեղութիւնները մանկան աստիճանաբար ճանչցնելու մէջ: Մանուկը գեղեցիկ ու հրապուրիչ է, ինչպէս ծաղիկը, ինչպէս արշալոյսը. բայց ծաղիկն կատարելութիւնը պտուղն է, որպէս արշալոյսին՝ արեւը իր գէնիթին վրայ:

Երկրորդ դրութեան հեղինակը լաւ կը տեսնէ մանկան զիւրազգածութիւնը զոր մեր պարտքն է չփրաւորել, ու տղուն արժանապատուութեան նորաբոյս զգացումը զոր մեր պարտքն է տածել մեղացանել իրրեւ անոր բարոյական դատարարակութեան կարեւորագոյն խմորը: Բայց կարծես թէ Ալանսեան էֆ. այս առ մանուկն յարգանաց պարտքը առ նա տե-

սակ մը քաղաքավարութեան ու փափկանկատութեան հետ կը նոյնացնէ, տեսակ մը մանկավարժի հնարք կամ ճարտարութիւն ընելով զայն, մանուկէն ստանալու համար փոխադարձ յարգանք ու դիւրայօժար հնազանդութիւն, «հեշտին յաղթելու սլաշտօնին պահանջած այլազան դժուարութեանց ու իր նպատակին հասնելու»։ Անշուշտ տալ մանկան ինչ որ կը պարտինք անոր՝ միջոց մ'է զինքը չմղելու ի խեղութիւն, վասն զի յիրաւի, որպէս կը դիտէ Աղասեան էֆ., նա զաղափարն ունի կանուխէն անոր զոր այլք կը պարտին իրեն, — թէ եւ ոչ նոյնքան իրաւացի է ըսել թէ գիտէ նաեւ կանուխէն ինչ որ ինք կը պարտի. այլոց, վասն զի, Ռընուվիէի ըսածին պէս, «Արդարին զգացումը իրաւանց կողմէն վաղահաս է ու պարտուց բանաւոր ծանօթութիւնը կը կանխէ երկար ժամանակաւ»։

Բայց մենք պարտաւոր ենք մեր պարտքը կատարել առ մանուկն, նոյն խի երբ սա չունենայ անոնց որոշ գիտակցութիւնը, ինչպէս է իրողութիւնը շատ պարագայից մէջ, եւ տանի խի հլու թեամբ մեր ինչ ինչ անիրաւ ու վնասակար վարմանց։

Երրորդ գրութեան հեղինակը աշակերտաց ներկայութեան սրտտես լրտեսներու աչքին տակ կ'ըգայ ինքզինք ու անոնցմէ երկիւղի պէս բան մ'ունի։ Տղուն առեբեւոյթ պարզութեան տակ չարածճի ոգի մը կը նշմարէ, խորհող ու վերլուծող միտք մը որմէ ամէն վայրկեան կ'ենթարկուի լրջ ու անաչաճ քննութեան։ Պէտք չէ անտես ընել այդ փոքրիկները. եթէ անոնց տնտեսօրէնութիւնը վիրաւորելու անխոհմտութիւնն ունենանք կամ մեր ապիկարութիւնն անոնց առջեւ պարզելու, ալ վա՛յ մեզ. ուստի յարգանք մանկութեան ու մանաւանդ զգուշութիւն։ «Երբեք յախուռն գործ, շատ քիչ անգամ բարկութիւն, երբեք անպատակ պատիժ, երբեք անգործադրելի սպառնալիք»։ Ինչո՞ւ. վասն զի, առանց ստոր, վարժապետը «խաղալիք մը կը դառնայ իրենց ձեռքը, անգոր ու տրկար...»։ Կը տեսնուի թէ Սրուանձտեան

էֆ. եւս իբրեւ կարգապահութեան հնարք մը, տղոց հաճելի ըլլալու պայման մը յանձնարարեալ կը համարի առ մանկութիւնն յարգանքն, որու ձգմարիտ ընութիւնն ալ տարտամ կը մնայ իրեն համար, ինչպէս նաեւ կը չափազանցէ՝ երբ տղուն մտաց կատարելապէս վերլուծող ու անաչաճ քննող կարողութիւն կը վերագրէ։

Յորնաղի Ժ.Դ երգիծաբանութեան մէջ կը գտնուի այս խօսքը։ Ա.յդ երգիծաբանութեան վերնագիրն է Օրինակը. անոր մէջ բանաստեղծը կը հարուածէ այն ծընողքն որք, իրենց զեղծ ու մեղծ բարութ, խաղամոլութեան, որկրամոլութեան, անգթութեան եւ արծաթամոլութեան աղիտաբեր օրինակները կուտան իրենց զաւակաց, եւ կը յորդորէ զանոնք ետ կենալ ամէն մեղապարտ գործէ՝ եւ հեռացնել «այն սեմէն ուր իրենց մանուկը կը մեծնայ» ամէն ինչ որ կրնայ վիրաւորել անոր ականջը կամ անոր աչքերը։ «Ամենամեծ յարգանք պարտական ենք մանկան. երբ ամօթալի գործ մը գործելու վրայ ես, մտածէ՛ք ողբւոյդ անմեղութեան վրայ, եւ մեղանշելու վայրկեանն՝ տղուդ տեսիլը թող գայ քեզ պահպանել»։ Յարգանքը պաշտում, հիացում չի նշանակեր անդ, այլ խնայում, անվթար պահպանում անմեղութեանն այն հոգւոյն որ մեղ հաւատացուած է որպէս զի, հեռի ապականելէ, տակաւ զարգացնենք զայն բարւոյն ու գեղեցկին ուղղութեամբ։ Ու առ այս չի բաւեր անշուշտ մեր բարուց տգեղութիւնները ծածկել մեր զաւակներէն, ջանալ չգայթակղեցնել անազնիւ գործքով թէ խօսքով այդ փոքրիկները, այլ պարտինք մաքրել, սրբացնել զմեզ, որպէս զի նաեւ դրապէս բարւոյն օրինակ լինինք մեր մանկանց։ Ա.Վինէ ըսած է. «Ինչ որ կ'ըսէր Յիսուս Քրիստոս իր աշակերտաց մասին — Եւ ի վերայ անոնց առաջ առնել զանձն իմ — հաւատարիմ հօր եւ մօր նշանաբանն է»։

Մանկան յարգանք պարտինք նաեւ իրրեւ անձի (personne), իբրեւ բարոյա-

կան էակի, որ վախճան մ'է ինքնին եւ զոր չեմք կարող իրեւ միջոց գործածել ըստ մեր քմահաճոյից ու չահուց, առանց անբարոյական գործ մ'ըրած ըլլալու, առանց մեծագոյն անիրաւութիւնը գործելու: Ու թէ որ աղան դեռ կատարելապէս անձ չէ, որոյ էական ստորագրելիքն, բանականութիւն ու ազատականութիւն, դեռ կազմուելու վրայ են իր մէջ, սակայն անձ մը պիտի լինի, անձ մ'ըլլալու ճամբուն մէջ է, այդ իր մէջն է ու պիտի դուրս գայ տակաւ. հետեւապէս այժմէն պարտական եմք մարդկային անձի արժանապատուութիւնը յարգելու նորա մէջ որ մարդն է ապագայ, եւ որ պիտի կրնայ չեղիլ իր նպատակէն՝ եթէ կանխաւ անոր տեսակէտով չվարուինք իրեն հետ: Արդէն իր իրաւունքներուն ալ, որպէս ըսուեցաւ, եթէ ոչ որոշ ու ամբողջական, գէթ տարտամ ու մասնական գիտակցութիւնն ունի կանուխ, որով գիտէ՝ շատ պզտիկ՝ զայրաճալ անիրաւութեան մը, զրկման մը, թշնամանքի մը դէմ: Կ'զգաս որ պզտիկ մարդ մ'է, ու մարդ մը պիտի ըլլայ: Բայց իր իրաւանց գիտակցութեան անկատարութիւնն կամ զանոնք պաշտպանելու մասին իր տկարութիւնն պատճառ մը չեն որ մեր յարգանքն անոնց չտփուր չափուի: Արդարութիւնը պարտք կը դնէ չափահասին վրայ խորհիլ, հոգալ ու պաշտպանել անչափահասին տեղ, եւ ահա՛ ասոր համար իշխանութիւնք, պաշտպան անչափահասին իրաւանց, կը միջամտեն ընտանիքին մէջ ու դպրոցին՝ բռնի յարգել տալու ծնողաց ու դաստիարակաց տղուն անտես առնուած իրաւունքները կամ գործուած բռնարարմանց մասին համար պահանջելու:

Ըստ այսմ ծնողք եւ դաստիարակք լի յարգանք պիտի վերաբերուին իրենց զաւակաց ու սանուց նորալոյս խնայականութեանց, քնքոյչ զգայնութեանց ու դեռածին կամեցողութեանց հետ, այնքան աւելի յարգանք որքան սոքա դեռ անկարող են իրենց մարդկային բարձր կոչումն ըմբռնելու ու տկար՝ զիրենք

պաշտպանելու յայն դիմելէ զիրենք ալ՝ գիլող պատճառներուն դէմ: Պիտի զգուշանան սուտով, սխալով ու նախապաշարմամբ անոնց միտքը թունաւորելէ, իրտ ու վայրագ, անհոգածու ու անգորով վարմունքով վիրաւորելէ անոնց զգայնութիւնը ու թշուառացնելէ զանոնք, եւ բռնական կամքի մը խիստ ու անբանաւոր պահանջումներուն տակ փշրելէ անոնց նորակաղմ կամեցողութիւնը եւ արգիլելէ նկարագրին կազմութիւնը: Եթէ մանկանց անխելահասութիւնն իրաւունք կուտայ մեծերուն, փոքրերուն չահուն ու վախճանին խի տեսակէտով, իրենց խորհուրդն ու կամքը հարկադրելու անոնց վրայ, այդ պիտի ըլլայ խնստուն զգուշութեամբ, քաղցրութեան միջոցներով, սէրէն ոգեւորուած յարգանք, որպէս զի մի՛ վուցէ վտանգուի անոր մէջ բարոյական էակին կազմութիւնը եւ չափազանց ու թիւր եռանդ մը դաստիարակութիւնը իր նպատակէն վրայեցնէ:

Երեք դրութիւնք կը շօշափելին անշուշտ այս զանազան գաղափարները, մանաւանդ այս եզրակացութիւնները, բայց սկզբանց ու հետեւութեանց յստակ ու ամբողջական տեսութիւն մը կը պակսէր անոնց: Լաւագոյն յաջողութեան մը կ'սպասեմք այլ անգամ:

Ռ. Յ. Պ.

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ՍՈՎԵՏՍԿԱՅ ՄԷԹՈՏԻ ՕՐԻՆԱԿ ՄԸ

(Մաքթերի l'instituteur primaire անուն գործէն փաղուած)

Ա. Գաւնր Տիմար է Ե. ԹԵՐԱՍՈՒՆ(*)

Դաստիարակն. — Տղաքներս, ի՞նչ կը մտածէք ազա՛ մարդոց վրայ. խելացի՞ են թէ տխուր, երջանիկ են թէ թշուառ:

Վահան. — Չեմ գիտեր:

Դաս. — Մտածեցէք:

(*) Շուպոնեօյ. Cours de pédagogie.

Վահան . — Ըսածնիդ չեմ հասկնար :

Դաս . — Սակայն հիմա պիտի պատասխանէք հարցումիս . դժուար չէ , ուրիշ քանի մը հարցումներու պատասխանելէ վերջ , դուք ալ պիտի տեսնէք որ դժուար չէ : Ըսէք ինծի թէ այն մարդը որ միայն պէտք եղածին չափ կը ծախսէ եւ աւելորդը ապագային համար կը պահէ , խեղացութեամբ թէ անմտաբար կը գործէ :

Վահան . — Անմտաբար կը գործէ :

Հրանս . — Խեղացութեամբ կը գործէ :

Դաս . — Կը սխալիս , Վահան , կեցիր քիչ մը : Ուրեմն կը մտածես որ մարդ պէտք է ծախսէ իւր օրական վաստակը եւ չպահէ իւր աւելորդը ապագային պէտքերուն համար : Այո է միտքդ :

Վահան . — Ո՛չ , կը տեսնեմ որ ձեր հարցումին բաւական ուշագիւր եղած չեմ , ըսել կ'ուզէի թէ , դիզել ուզելով ապագայի մը համար , որուն միշտ չի հասնիր մարդ , խեղճ կ'ապրի , առանց ստիպուած ըլլալու այդ տեսակ կեանք մ'ունենալ . մինչդեռ երբ նուազ հարստանալ ուզէ , աւելի լաւ պիտի սնանի , աւելի լաւ պիտի հազուի եւ իւր աւելորդութեան աւելի խնամք պիտի տանի :

Դաս . — Այդ ամէնը ճշմարիտ է , բայց երբ մէկը ծախսէ ամէն օր իւր օրական վաստակածը , ի՞նչ կը մնայ հիւանդութեան , ծերութեան եւ անակնկալ պէտքի օրերուն :

Վահան . — Ատոր վրայ չէի խորհեր :

Հրանս . — Ես կը խորհէի . մեր ազգական Պ . Պետրոս իւր երիտասարդութեան մէջ բոլոր ստակը կերեր է , հիմա որ ծեր է եւ այլ եւս չի կրնար աշխատիլ , հաց մուրալու ստիպուած է և յաճախ ծնողացս կ'ըսէ որ խեղացի բան չէ այդպէս վարուիլ :

Վահան . — Անտարակոյս , եւ լաւ կը հասկնամ որ այնպէս վարուիլը տխմարութիւն է :

Դաս . — Միհրան , ուրեմն ապագային համար դիզելը խեղացութիւն է :

Միհրան . — Այո՛ , պէտք է խնայել , մէկդի դնել , ինչպէս կ'ըսեն , ամէն ինչ որ կարելի է . այսպէս լսած եմ :

Դաս . — Անոնք որ ամենէն աւելի մէկ կողմ կը դնեն , ամենէն խեղացինե՞րն են ուրեմն :

Միհրան . — Ամենէն խեղացիներն են :

Դաս . — Ազահները շատ կը դիզեն , ամենէն խեղացինե՞րն են :

Միհրան . — Անոնք են որ ամենէն աւելի կը պահեն հիւանդութեան և ծերութեան օրերու համար :

Դաս . — Բայց ազահին ի՞նչըսելը լալը աղէկ գիտէ՞ք :

Հրանս . — Ես կարծեմ թէ գիտեմ . ազահը մարդ մ'է որ շատ ստակ ունի եւ քիչ կը ծախսէ , որպէս զի կարելի եղածին չափ շատ բան պահէ ապագային համար :

Դաս . — Սեղանաւորները եւ հարկաժողովները , որ իրենց արկղներուն մէջ շատ ստակ ունին , ազահներ են : Այդ ստակէն բնաւ չեն ծախսեր , միթէ ազահութեան համար է :

Հրանս . — Ո՛չ , հարկաժողովները տէրութեան կը յանձնեն իրենց ստակը , եւ ապագային համար անկէ բան մը չեն պահեր . բայց սեղանաւորները . . . :

Դաս . — Լաւ ուրեմն , սեղանաւորները եւ տակաւին ուրիշներ , հարուստ մարդիկ որ մեծ ծախսեր կ'ընեն եւ վաճառականներն որ ընդարձակ յարաբերութիւններ ունին , չե՞ն կրնար իրենց դրամարկներուն մէջ շատ ստակ ունենալ կամ շատ դրամատան տոմսեր իրենց թղթապանակին մէջ , առանց անպատճառ ազահ ըլլալու :

Հրանս . — Ըսել չեմ ուզեր թէ ամէն անոնք որ շատ ստակ ունին ազահ են . միայն ըսել կ'ուզեմ թէ ազահ են ամէն անոնք որ շատ ստակ ունին եւ մէկուն բան մը չեն տար , միայն իրենց համար կը պահեն զայն , եւ իրենց ստակը հաշուելն ու անոր վրայ նայիլը կը սիրեն , փոխանակ զայն օգտակարապէս գործածելու :

Դաս . — Քիչ մ'այդպէս է . ազահ կ'ըսուին այն մարդիկն որ լաւ և պատշաճ կերպով սնանելու , հազուելու եւ բնակելու միջոցն ունին , որ նաեւ աղքատներուն օգնելու եւ անոնց բարիք ընելու

պարտականութիւնն ունին, ու այս ամենէն բան մը չեն ըներ, աւելի սիրելով աւելցնել դրամագլուխ դրամագլխի վրայ, տոկոս տոկոսի վրայ: Ասիկայ իմաստութիւն է թէ ոչ:

Միհրան. — Ասիկայ գէշ է:

Դաս. — Անտարակոյս. բայց ձեզի հարցուցածս այդ չէ, գիտնալ կ'ուզեմ թէ անոր այդ կերպ վարուիլը անխելքութիւնն է թէ իմաստութիւն:

Հրան. — Կը հասկնամ որ ճշգիւ չեմ գիտեր թէ այս պարագային մէջ ո՞րն է իմաստութիւնը եւ ո՞րն է անխելքութիւնը:

Դաս. — Իմաստութիւն կը կոչուի ընթացքն այն մարդուն որ կը ճանչնայ եւ կը կատարէ իւր պարտականութիւնները, նախ Աստուծոյ հնազանդելու, յետոյ բարի մարդոց յարգանքն եւ մեծարանքը վայելելու համար: Իսկ անխելքութիւն կը կոչուի ընթացքն անոր որ չի հնազանդիր ոչ Աստուծոյ, ոչ իւր բանականութեանը, ոչ իւր խղճին, եւ որ բարի մարդոց ատելի եւ արհամարհելի կ'ըլլայ: Հիմա ըսէք թէ ազա՛նը Աստուծոյ, իւր խղճին եւ բանականութեանը կը հնազանդե՞լ: Եւ վերջը ըսէք թէ ազա՛նը ինքզինքը յարգել եւ սիրել կուտա՞յ, թէ ինքզինքն ատելի եւ արհամարհելի կ'ընէ:

Հրան. — Անհնազանդ կը գտնուի Աստուծոյ որ ողորմած ըլլալ կը պատուիրէ մեզ: Ինքզինքը, ինչպէս որ կ'ըսէք, ատելի եւ արհամարհելի կ'ընէ:

Դաս. — Այսպէս, յանցաւոր կ'ըլլայ Աստուծոյ դէմ, որ իրեն գանձեր յանձնած է եւ հակառակ այն միջոցներուն որոնցմով կրնայ օրհնենք բերել իրեն, խոտելի կ'ըլլայ մարդոց առջեւ որ զինքը կը դատեն. միթէ խոտելի դառնալը խոհեմութիւնն է:

Հրան. — Յիմարութիւն է:

Դաս. — Բայց կարելի է ազա՛նը երջանիկ է, նա կը սիրէ, կ'ըսեն, լեցուն դրամարկի մը տեսքը, դրամին ձայնէն կ'ախորժի. երջանկութիւն մը զոր պիտի չունենար եթէ ստակ գիշած չըլլար:

Վահան. — Այո՛, ազա՛նը վայրկեան-

ներ ունի որ ատեն երջանիկ է:

Դաս. — Միհրան, կը կարծես որ այդ վայրկեանները բազմաթիւ են եւ կը փոխարինե՞ն ու կը մոռցնե՞ն այն նեղութիւնները, հոգերը, տառապանքները զորս կը կրէ ուրիշ վայրկեաններու մէջ:

Միհրան. — Չեմ գիտեր:

Դաս. — Խոտելի եւ ատելի մէկը կըրնա՞յ երջանիկ ըլլալ:

Հրան. — Ո՛չ, այդ կը հասկնամ, քիչ մ'առաջ ըսելու էի:

Դաս. — Ազա՛նը, իւր գանձերը պահելու համար, տունը մնալու եւ իր դրամագլխոյն վրայ հսկելու դատապարտուած է: Ամէն բանէ, նոյն խի իր բարեկամներէն կը հրաժարի. միշտ կը կոտորի իր ծառայներէն եւ երբեմն ալ իր ազգականներէն: Ստակ գիշելու կիրքը յագեցնելու համար, սրտի վայելքներէն ետ կը կենայ, որ ամենէն քաղցրերն են. իւր գանձին գերին է: Գերի է իւր ստակին զոր գերած է: Եթէ դիպուածով տնէն դուրս ելնէ, կը վախնայ թէ տունը գող կը մտնէ. եւ եթէ գողնան գանձերն, իւր թշուառութիւնը անմխիթար կը մնայ: Միշտ կը կարծէ թէ զինքը կը կեղեքեն եւ կը խաբեն, ամէն ծախք հառաչանք մը կը խլէ, կարծես թէ մաղ մ'է որ կը փրցուի իրմէ. կը մեռնի դժնդակ զգացումներով, դժնդակ իւր հոգւոյն համար որ աւելի եւս պատառուած է մորմններով քան խղճի խայթով, վասն զի ինքզինքը կը յանդիմանէ թէ գութ եւ մարդասիրութիւն չունեցաւ այլոց համար. կը հառաչէ նամանաւանդ վասն զի կը ձգէ, կը թողու այն միակ բանը զոր կը սիրէ: Ստակը իրեն Աստուած ըրած էր. երբ անկէ բաժնուիլ պէտք է, իրեն այնպէս կը թուի թէ այլ եւս Աստուած չունի:

Տղաքներ. — Ո՛հ, թշուառը:

Դաս. — Հիմա գիտէ՞ք թէ ինչ պէտք է մտածել ազահներուն վրայ:

Տղաքներ. — Այո՛, այո՛:

Դաս. — Կը հաւատամ. բայց մի կարծէք թէ բոլոր ազահներն իրարու կը նմանին. թէ ամէնքն ալ գէշ կը սնանին, գէշ կը հագուին եւ գէշ կը բնակին. թէ

ամէնքն ալ իրենց ստակին վրայ հիւանալու համար, դրամարկներու առջեւ ծնրադրած են. թէ ամէնքն ալ զրկողութեան մէջ կը մեռնին Լոնտոնի այն միլիոնատէրին պէս. որ իւր փողկապին մէջ միլիոն մը թղթադրամ կը կրէր, եւ սակայն նախամեծար համարեց մեռնիլն քան թէ անսովոր Ժամու մը մէջ արգանակի մը ծախքն ընել: Ամէն տեսակ ագահներ կան, կան նոյն իսկ որ, զանազան առիթներու մէջ, կը ծախսեն անմտաբար իրեց գանձին մէկ մասը. ինչու որ ագահութեան կը կցի երբեմն ուրիշ ալ աւելի ծիծաղելի մոլութիւն մը: ցուցամուլութեան արտը: Բայց այս նիւթին վրայ առաջին դասի մը համար այսչափը բաւական է:

Թարգմ. Մ. ՆԱԼԳԱՆՏԵԱՆ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ

ԲՆԱԼՈՒԹՈՒԹԻՒՆ

Բ. դաս

ՋՐԱՍԻՆ ԵՒ ԹՅՈՒԱՍԻՆ

Առաջնորդութիւն. — Ջրածինը կը մտնէ ջուրին, գործարանաւոր գոյացութեանց և շատ մը հանքային նիւթոց բաղադրութեանը մէջ: Սովորական բարեխառնութեամբ և կանոնաւոր ճնշման տակ, շատ թեթեւ կազ մըն է, օդէն տասնեւչորս ու կէս անգամ աւելի թեթեւ: Այս վերջին տարիներս է որ յաջողած են ծորելի ընել զայն, ենթարկելով խիստ ստորին բարեխառնութեան մը և քսնի մը հալիւր մթնոլորտական ճնշման:

Ոչ համ ունի և ոչ հոտ: Բաղդատմամբ օդին իր խտութիւնն է 0,0692: Ուրեմն մէկ լիտր ջրածինը կը կշռէ $1,293 \times 0,0692 = 0,089$ կրամ:

Դիտունները այս մարմինը իբր մետաղ կը նկատեն, պատճառը վերջը պիտի ըսենք:

Ջրածին ստանալու համար, ջուրէն կը

հանեն զայն:

Փորձ. — Երկփողեան սրուակի մը մէջ լեցնենք զինկի կտորուանք և ջուր, այնպէս որ գոնէ սրուակին մինչեւ երրորդ մասը լեցուի: Փողերէն մէկը խցուած է սունկով մը որուն մէջէն անցած է երկու ծայրը բաց խողովակ մը. վարի ծայրը կ'ընկղմի հեղուկին մէջ, վերի ծայրը ձագարաձեւ վերջացած է: Միւս փողը կը կրէ խողովակ մը ուրիշ անցնելով կազը պիտի գայ ջրալիւր ընդունարանին մէջ որ կայնած է կոնքի մը վրայ:

Ձագարաւոր խողովակէն քիչ քիչ լեցնենք հասարակ ծծմբական թթու. անմիջապէս կը տեսնենք որ սաստիկ եռում մը կը կատարուի: Ծծմբական թթուն և զինկը, ջուրին ներկայութեանը, կը տարրադադրեն ջուրը իր տարրերուն, ջրածինի և թթուածինի: Թրուածինն զինկին հետ կը բազակցի և զինկի թթուուկ կը կազմէ. այս ալ թթուն հետ միանալով կը չինէ զինկի ծծմբատ որ ջուրին մէջ կը լուծուի: Ջրածինը կ'արձակուի և ընդունարանին մէջ կուգայ:

Երբ գործողութիւնը դանդաղի, նորէն ծծմբական թթու կը լեցնեն սրուակին մէջ, բայց չափաւոր՝ որպէս զի հեղուկը ձագարէն դուրս չցայտէ: Երբ սրուակին մէջ այլեւս զինկ չմնայ, կազի արձակումն ալ կը դադարի այն առեւ: Եթէ հեղուկը գոլորչիացնենք, կ'ստանանք մանր բլուրեղներով ձերմակ ալ մը, որ կ'ըսուի զինկի ծծմբաւ: Այս աղը կը գործածուի բժշկութեան մէջ, ճարտարագործութեան մէջ, և իբրեւ հականեխական ալ:

Հոս պէտք է ըսենք թէ ինչ կերպով կը ժողվեն կազերը:

Ընդունարան մը մինչև բերանը կը լեցնեն ջրով: Ընդունարանը մէկ ձեւքով բռնելով, միւս ձեւքով և կամ կտոր մը ծծուն թղթով բերանը կը գոցեն, և զայն գլխի վար կը դարձնեն: Յետոյ անոր բերանը կը դնեն խեցեղէն գանգի մը (têt) վրայ որ ջրալիւր պտուկի մը կամ կոնքի մը մէջ ընկղմուած կը գտնուի՝ կազաբեր խողովակին վրայ անցած: Երբ ընդունարանը կազով լեցուի, պզտիկ պնակ մը բերնին

բռնելով դուրս կը հանեն զայն կոնքէնս փորձ. — Կարելի է նաեւ ջրածինն պատրաստել ջուրը տարրազադրելով կարմրեցած երկաթով: Ասոր համար կ'առնեն կաւեղէն խողովակ մը որուն մէջ կը ներմուծեն երկաթէ թելի խւրճեր. խողովակը կը դնեն հնոցի մը մէջ ուր կը վառի փայտածուխ. խողովակին երկու ծայրերը հնոցէն դուրս ինկած են: Ծայրերէն մէկը հաղորդակից է գնդաձեւ շիշի մը հետ որուն մէջ կ'եփեն ջուր. միւս ծայրը իր վրայ կը կրէ կաղաքեր խողովակը որ կը վերջանայ ընդունարանին տակ:

Ջրաշոգին, ատրաշէկ երկաթին վրայէն անցած միջոցին, կը տարբազադրուի. թթուածինը կը բաղակցի երկաթին հետ և կը կազմէ երկաթի թթուակ. ջրածինը, ազատ մնալով, ընդունարանին մէջ կը հաւաքուի:

Փորձ. — Ջրածինը դիւրաւ կը բռնկի և կը վառի խիստ աղօտ բոց մը տալով: Լուցկի մը կամ ճրագ մը մօտեցուցէք այս կազով լեցուն ընդունարանի մը բերնին, կազը պիտի բռնկի անմիջապէս: Պէտք է ընդունարանը լռնել հակեալ, բերանը դէպ ի վար:

Փորձ. — Ջրածինն պատրաստող երկփողեան սրուակին վրայ, կաղաքեր խողովակին տեղ կ'անցնենք սրածայր խողովակ մը: Կ'սպասենք որպէս զի քիչ մը ժամանակ գործէ մեր կազմածը և սրուակին մէջ ա'լ օդ չ'մնայ: Եթէ այն ատեն բռնկցնենք կաղեղէն ցայտը, կ'ոռնենանք փխրոտփայլալիս իսկրեղ ըստածը: Բոցը շատ աղօտ է, բայց խիստ զօրաւոր. կտոր մը կաւիճ եթէ այս բոցին մէջ բռնենք, անմիջապէս կը կարմրի, բան մը զոր կարելի չէ առաջ բերել հասարակացի մը մէջ:

Սրուակին մէջ քանի մը կաթիլ բնականդրուկ (benzine) լեցնենք, բոցը անմիջապէս կը պայծառանայ:

Փորձ. — Բոցին վրայ անցուցէք ապակեայ կամ յաթճապակեայ հաստ խողովակ մը որուն երկու ծայրերը բաց ըլլան. շարունակեալ անընդհատ ձայն մը առաջ

կուգայ և կը տեսնէք որ բոցը կ'երկարի: Այս փորձը ծանօթ է քնաշունչական նռնազարան անունով:

Փորձ. — Ջրածինը վառելով ջուր կ'արտադրէ: Այս արդիւնքը տալու համար, կը բաղակցի օդի քրոաձինին հետ: Եթէ բոցին վրայ շատ մօտէն պնակ մը բռնուի, պնակը ջուրի փոքրիկ կաթիլներով կը ծածկուի:

Իր թեթեւութեանը պատճառաւ, ջրածինը գործածուած է օդապարիկները ուռեցնելու. բայց այս կազը խիստ արածական (diffusible) է, այսինքն թաղանթներու և ամէն ծակոտկէն երեսներու մէջէն անդին կ'անցնի դիւրութեամբ: Այս կազով ուռեցած աճառի պղպղակներ արագօրէն կ'եղնեն օդին մէջ:

Ջրածինը առաջին անգամ ժողոված է Գալլէնտիչ, վերջին դարուն վախճանին. աշխիւսդները տասնըհինգերորդ դարուն գտած էին զայն:

Թրուածինը վերջին դարու վախճանին, միւսնոյն ժամանակ, գտած են Շուէտի մէջ Շիլ և Անդրիոյ մէջ Բիէտլի: Բնութեան մէջ ամենէն շատ տարածուած մարմինն է այս: Բորակածինին հետ խառնուելով մթնոլորտական օդը կը կազմէ: Ջրածինին հետ բաղակցելով ջուրը կը կազմէ: Շատ մը հանածոյներու և գործարանաւոր գոյացութեանց բաղադրութեանը մէջ ալ կը մտնէ: Ջրածինին պէս ո'չ հոտ ունի, ո'չ համ, ո'չ գոյն: Իր խտութիւնը, օդին խտութենէն քիչ մը վեր, է 1,1056. ուրեմն այս կազին մէկ լիտրը կը կշռէ 1 կրմ, 293 $\times$ 1,1056 = 1 կրմ, 43: Այս կազն ալ վերջին տարիներու մէջ միայն կրցած են ծորելի ընել Գայլդէ և Բաուլ Բիգդէ գիտունները: Այլեւս չ'կայ կայուն կազ (այս անուամբ կը յորջորջէին այն կազերը զորս չէին յաջողած ծորելի ընել):

Ձանազան կերպերով կը պատրաստեն քրուածինը. մենք պիտի բաւականանանք նկարագրելով ամենէն պարզ կերպը որ կը կայանայ պոտասի քլորատը (chlorate de potasse) տաքութեամբ տարրազադրելուն մէջ:

Փորձ. — Ապակեայ գնդաձեւ շիշի մը կամ եղջիւրի մը մէջ, որուն տարողութիւնը մէկ տասներորդ լիտրէն աւելի չըլլայ, կը լեցնենք երեսուն կամ քառասուն կրամ փոշիացեալ պոսսաի *ferrous* խառնուած իր մէկ երրորդին չափ արջնաքարի երկթթուակի (*bioxyde de manganèse*) կամ խիտ չոր բնական քարոտ աւազի հետ. այս երկու նիւթերը բնալուծական ներդործութիւն մը չեն ընէր, բայց կազին արծաղումը աւելի կը կանոնաւորեն:

Ջեռուցման գործողութիւնը կրնանք կատարել թէ՛ հասարակ հոսցով եւ թէ՛ ալքօլի կանթեղով: Տաքցնելէ առաջ պէտք է խնամով սրբել եղջիւրը արտաքուստ որպէս զի չկտորի: Պէտք է նաեւ կամաց կամաց տաքցնել, և՛ զգուշութեան համար, կրակարանին ու ապակիին մէջտեղը դնել մետաղեայ ցանց մը: Առաջին անգամ արծաղումը կազը մասամբ մը թող տալու է որ երթայ վառքի իր մէջ կը պարունակէ օդ: Քիչ մը վերջ շուտով իրարու կը յաջորդեն պղտջակները. այն ատեն կը դադրեցնեն տաքութեան ներդործութիւնը: Այս զգուշութիւնները ընելով, կը տիրանանք գործողութեան որ այսպէս ոչ մէկ վտանգ կը ներկայացնէ: Գործածուած խառնուրդին մէջ գործարանաւոր նիւթեր գտնուելու չեն բնաւ:

Պոտասի քլորատը կը բաղկանայ երեք պարզ մարմիններէ. թթուածին, քլոր, պոտասիոն: Տաքութեան ազդեցութեամբը այս աղը կը տարբազադրուի. պոտասիոնը և քլորը եղջիւրին մէջ բաղակցուած կը մնան եւ քրուածիկը կ'արծաղուի:

Այս կազը սաստիկ աշրող է, այսինքն կը պահպանէ այրումը:

Կը յանձնարարենք կատարել հետեւեալ փորձերը որոնք շատ շահագրգիռ են:

Փորձ. — Զուրին մէջ կտրեցէք փոփորի պզտիկ կտոր մը մուշի (պեղեղիս) մեծութեամբ. մետաղեայ թելէ մը կախուած խեցիի մը վրայ դրէք զայն շուտով:

Վառ մարմինի մը մօտեցնելով բռնկուցէք փոփորը եւ խեցին մոյուցէք թթուածինով լեցուն սրուակի մը մէջ: Փոփորը շատ շուտ կը վառի շուրջը լըյս մը արծաղելով. կը բաղակցի թթուածինին հետ և կը կազմէ փոփորական թթու:

Այս փորձին, ինչպէս նաեւ հետեւեալներուն մէջ, քիչ մը ջուր թալու է որոտակին մէջ որպէս զի չկտորի անօթը:

Նոյն կերպով կտրելի է վառել կտոր մը ծծումբ կամ կտոր մը ածուխ որոնք նախապէս բռնած ըլլալու են: Յառաջ պիտի գայ ծծմբային թթու և բնածխական թթու:

Փորձ. — Առէք երկաթի թել մը կամ ժամացոյցի զապանակ մը. տաքցուցէք զայն մինչև որ առաձգականութիւնը կորսնցնէ. օձաձեւ փաթեցէք, Մէկ ծայրը կտոր մը արեթ հաստատեցէք, վառեցէք արեթը: Այս օձաձեւ թելը մոյուցէք թթուածինով լեցուն սրուակի մը մէջ: Մետաղեայ թելը կ'այրի փայլուն կայծեր արծաղելով. երկաթի թթուակ կը կազմուի:

Նիթէ երկաթին տեղ մագնետիոն (*magnesium*) առնէք, բոցը աչք կը շրջնէ:

Փորձ. — Թթուածինով լեցուն ընդունարանի մը մէջ մոյուցէք լըցիկի մը որուն ծայրը կայծ մը գտնուի. անմիջապէս կը բոցավառի և կ'այրի ստատիպալ: Այս է այն յատկանիշը որով կը ճանչցուի քրուածիկին ներկայութիւնը:

Ելեկտրական բարդի միջոցաւ ջուրին տարբազադրութենէն ստացեալ քրուածիկը մասնաւոր հոտ մը ունի և անոր թթուակացնող յատկութիւնները ալ աւելի զօրաւոր են. սոյն կազը որ կ'ելեկտրանայ այսպէս՝ կ'ըստի ոզոն: Փոփորկալից ժամանակ ոզոն կը կազմուի:

Փորձ. — Մէկ քառորդ լիտր ծաւալ ունեցող սրուակ մը առէք և անոր մէջ լեցուցէք երկու ծաւալ ջրածին ու մէկ ծաւալ թթուածին. թրջած լաթով մը փաթեցէք զայն և բերանը մօտեցուցէք բոցի մը: Հրազենի պայթումի պէս պայթիւն մը կը ըստի անմիջապէս. վառքի

երկու կողերը բաղակցելով դատարկութիւն մը կը գոյացնեն սրտակին մէջ ուր օդը կը խուժէ յանկարծ :

Թթուածինը կարեւոր դեր մը կը խաղայ բնութեան մէջ : Դանդաղօրէն կամ սաստկապէս կատարուած այրումներու եւ ամէն կենդանի էակաց շնչառութեան մէջ գործօն դեր կատարողը այս կազն է : մանուանդ որ հասկցուած է այսօր թէ շնչառութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ դանդաղօրէն կատարուած այրում մը :

Ամէն մարմին վառելով կը բաղակցի թթուածինին հետ, ուրեմն կ'աւելնայ կշռով : Այս սկզբունքը առաջին անգամ հաստատեց Լավուազիէ, որ աշխատանքներու մէջ կշռորդին գործածութիւնը մտցուց :

Դաս. — Զրածինը շատ թեթեւ եւ անդոյն կազ մըն է զոր կը հանեն ջուրէն : Ամենէն պարզ միջոցն է՝ այս հեղուկը պաղ փիճակի մէջ տարրազտել զինկով եւ ծծմբական թթուով :

Այս կազը այրումը չի պահպաներ, բայց կ'այրի ջուր արտադրելով : Զրածինի բուցավառ ցայտ մը փիլիսոփայական կանքեղը կը կազմէ : Եթէ այս բոցին վրայ խողովակ մը անցնենք, ձայն մը կը լսուի : Բնաշրժական նռագարանին փորձն է այս :

Թրուածինը բնդհանրապէս կը պատրաստուի տաքութեան ազդեցութեամբ տարրազտելով պտտաթի քլորատը :

Այս կազը չ'այրիր, բայց այրումը կը հրահրէ : Ընտիր այրող մըն է այս կազը :

Դլուխը կայծ ունեցող լուցիկի մը երբ մտցունենք քրուածինով լեցուն բնդ ունարանի մը մէջ՝ կը բոցավառի :

Ածուխը, ծծումբը, փոսփորը, երկաթէ թեթեւ մը քրուածինին մէջ կը վառին սաստիկ փայլով : Մագնետիոնի այրումը առաջ կը բերէ լոյս մը որ աչք կը շլացնէ :

Ելեկտրացեալ քրուածինը մասնաւոր հոտ մը ունի : Ոգոն ըստածը այս է :

Երկու ծառայ ջրածինի եւ մէկ ծառայ թթուածինի խառնուրդը կը կազմէ այնպիսի խառնուրդ մը որ կը պայթի բոցի

մը մտեցած տակէն : Բաղակցութենէ առաջ եկածն է ջուր :

Գ. Ա. Մ.

Մ Տ Ա Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Շ Ր Ա Շ Ա Ն Գ Ն Ե Ր

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԻ ՈՒՍՄԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԻ ՀԱՄԱՐ

1. (Վարժուհին հեռզհեռէ կ'ըսէ հետեւեալ զոյգ զոյգ բառերը ու հարցում ընելով գոյականին համար թէ ի՞նչպէս է՝ կը պահանջէ որ սանիկը ամբողջ նախադասութեամբ մը պատասխանէ : Օրինակ. Վարժուհի. — Մե՛ծ պարտէզը. պարտէզը ի՞նչպէս է : Սանիկը. — Պարտէզը մեծ է :

Մե՛ծ պարտէզը : Հաւատարիմ շունը : Կարմիր վարդը : Ծերմակ չաշանը : Սուր զմելինը : Կլո՛ւր գունարը : Սե՛ւ տախտակը : Բարի՛ մայրիկը : Սիրուն Շահանը : Սքանչելի՛ խաղալիկը : Կապո՛յտ մանուշակը : Ուղի՛ղ անկիւնը : Աշխատասէ՛ր միջիւնը : Թեւաւո՛ր միջատը : Աղու՛նր Մանիկը : Անառա՛կ այծը : Աշխո՛յժ Օնիկը :

2. (Պէտք է գտնել տալ սանիկներուն հետեւեալ ածականներուն հակառակները : Օրինակ. Վարժուհի. — Մեծ չէ, հապա ի՞նչ է : Սանիկը. — Մեծ չէ, հապա փոքր է :)

Մեծ (փոքր) : Երկայն (կարճ) : Լայն (նեղ) : Ամուր (թոյլ) : Բարձր (ցած) : Գեղեցիկ (տգեղ) : Լոյս կամ լուսաւոր (մութ) : Բարի (չար) : Խելացի (անխել) : Անհագանգ (հագանգ) : Կոշտ (քաղաքավար) : Ծոյլ (աշխատասէր) : Հարուստ (աղքատ) : Մաքուր (աղտոտ, անմաքուր) : Առողջ (հիւանդ) : Վախկոտ (անվախ) : Դանդաղ (աշխոյժ) : Ստախոս (ճամարտախոս), եւն :

(Պահանջել որ սանիկներն իրենք իրենց մէջ ալ այսպիսի հակառակ խօսքեր շինեն :)

3. (Հետեւեալ զոյգ զոյգ դրուած բառերուն նշանակած առարկայից համար հարցնել թէ ո՞րը մեծ է, եւ պահանջել

որ սանիկը իր բազմաթիվ թեան արդիւնքը ամբողջ նախադասութեամբ մը յայտնէ, Օր. Վարժարանիկն. — Շոգենաւը աւելի մեծ է թէ նաւակը. — Սանիկը. — Շոգենաւը նաւակէն աւելի մեծ է. կամ Շոգենաւը աւելի մեծ է, քան թէ նաւակը.)

Շոգենաւը թէ նաւակը, Ծոփը թէ աւազանը, Եգը թէ ոչխարը, Ծոփը թէ փունջը, Փիփը թէ ուղարը, Տոփը թէ խրճիթը, Երկտասարը թէ մանուկը, Ծոփը թէ խոտը, Արծիւը թէ ագռաւը, Հաւը թէ վառեակը, Կատունը թէ մուկը, Սենեակը թէ սեղանը, Տոփը թէ սենեակը, Զիփը թէ էջը, Գեփը թէ գետակը, Կաղամբը թէ չոլղամբ, Ծիփը թէ գաւաթը, Եկեղեցիքն թէ մատուռը, Քաղաքը թէ գիւղը, Գիւղը թէ գիւղակը:

(Պահանջել սանիկներէն որ իրենք ալ գտնեն այսպիսի բազմաթիվ թեան եզրեր.)

Ն Ա Խ Ա Կ Ր Թ Ա Ր Ա Ն

Տարակալն դասընթացի

Ա. Ածանցեալ գոյականներ. 1. Իկ, ալ, ուլ. — Ինչպէս կը կոչուի փոքրիկ շուն մը (շնիկ). փոքրիկ գառն մը (գառնուկ). փոքրիկ նաւ մը (նաւակ). փոքրիկ դաշտ մը (դաշիկ). փոքրիկ գետ մը (գետակ). փոքրիկ լիճ մը (լճակ). փոքրիկ գաւազան մը (գաւազանիկ). փոքրիկ գիւղ մը (գիւղակ). փոքրիկ առափ մը (առափակ). փոքրիկ մաս մը (մասնիկ). փոքրիկ մանուկ մը (մանիկ). փոքրիկ աղաւնի մը (աղաւնեակ). փոքրիկ տասարակ մը (տասարակիկ). փոքրիկ էջ մը (իշուկ). փոքրիկ աղբիւր մը (աղբերակ.)

2. Ող, իջ, ուն. — Ո՞վ կ'աշխատի (աշխատողը). ո՞վ կը գործէ (գործողը). ո՞վ կ'երգէ (երգիչը). ո՞վ կը յօրինէ (յօրիւնիչը). ո՞վ կ'ընայ (կարողը). ո՞վ գիտէ (գիտունը). ո՞վ կ'գալայ (գալացողը, գալաչունը). ո՞վ կը վարէ (վարիչը). ո՞վ կը թռչի (թռչունը). ո՞վ կը գնայ (գնացունը). ո՞վ կը սիրէ (սիրողը). ո՞վ կ'ատէ (սեղողը). ո՞վ կ'ընթեռնու (ընթերցողը). ո՞վ կ'ըս-

տեղծէ (սեղծիչը). ո՞վ կ'ուսուցանէ (ուսուցիչը). ո՞վ կ'ուսանի (ուսանողը):

3. Ունի, անոյշ, դուխ. — Կայսրին իգականը ինչ է (կայսրուհի). իշխանին (իշխանուհի). Սահակին (Սահականոյշ). Վարդին (Վարդանոյշ). Շահանին (Շահանդուխտ). Վարժապետին (վարժուհի). Թագաւորին (թագուհի). Խովիւն (Հովուուհի). Բուրմի (քրմուհի, քրմանոյշ). Խոսրովին (Խոսրովիդուխտ). Սմբատին (Սմբատանոյշ). Տիգրանին (Տիգրանուհի). Դեսպանին (դեսպանուհի). Դերասանին (դերասանուհի):

(Բոլոր այս հարցմանց աշակերտը պիտի պատասխանէ ամբողջ նախադասութեաներ կազմելով. զոր օրինակ. Փոքրիկ շուն մը կը կոչուի շնիկ. — Աշխատողը կ'աշխատի. — Կայսրին իգականն է կայսրուհի, եւն.):

Բ. (Փոքրիկ խօսքեր շինեցէք ուր ի միասին դործածուին թիւ 3 վարժութեան արական և իգական անունները. Զոր օրինակ. Կայսրը և կայսրուհին պալատեցան. Իշխանը և իշխանուհին կառք նըստեցան եւն.):

Կայսրը և կայսրուհին պալատեցան. Իշխանը և իշխանուհին կառք նստեցան. Թագաւորը և թագուհին պալատ գացին. Հովիւն ու հովուուհին ոչխարները կ'արածէին. Քրմին ու քրմուհին աստուածներուն խունկ կը ծխէին. Խոսրով Խոսրովիդուխտին եղբայրն էր. Սմբատանոյշ Սմբատին քոյրն էր. Տիգրան և Տիգրանուհի եղբայր և քոյր էին. Դեսպանն ու դեսպանուհին պարահանգէսէն կը դառնային. — Դերասաններն ու դերասանուհիները թատրոն կ'երթային. Շահան և Շահանդուխտ ի միասին կը խաղաղային. Վարդ և Վարդանոյշ այր և կին էին. Սահականոյշ Սահակին դուստրն էր. Վարժապետն ու վարժուհին մանուկներուն դաս կուսան:

Միջին դասընթացի

1. Բարդ քառեր. — (Հետեւեալ ածականներն ու դոյականները բարդելով

կազմեցէք բարդ ածականներ ու անոնց յարմար գոյականներ յաւելցուցէք)։

Քաղցր, ձայն (քաղցրաձայն սոխակ)․ անոյշ, հոտ (անուշահոտ ծաղիկ)․ դառն, համ (դառնահամ դեղ)․ սուր, ակն (սուրակն արծիւ)․ բարձր, աստիճան (բարձրաստիճան եկեղեցական)․ մեծ, տուն (մեծատուն վաճառական)․ սեւ, զգեստ (սեւազգեստ կրօնաւոր)․ յաղթ, ջուր (յաղթաջուր գետ)․ կանաչ, գեղ (կանաչագեղ մարգագետին)․ զգոն, միաք (զգոնամիտ երիտասարդ)․ խոր, ձոր (խորաձոր հովիտ)․ բազում, մարդ (բազմամարդ քաղաք)․ գեղեցիկ, ձայն (գեղեցիկաձայն երգիչ)․ փոքր, ոգի (փոքրոգի արարած)․ մեծ, անձն (մեծանձն բարերար)։

2. (Հետեւեալ գոյականաց քով մէկ մէկ յատկացուցիչ յաւելցուցէք)․ — (Առուակին) խոխոջը․ (Թռչնոց) դայլայը․ (Ճանձին) բզկիւնը․ (տերեւոց) չրչիւնը․ (կառաց) դղրդիւնը․ (խողին) խանչիւնը․ (ագաւուն) կռիւնը (ակաւայներու) կըրճտիւնը․ (ուգեմարին) հոնդիւնը․ (քաղաքին) Ժխորը․ (չանթին) շաչիւնը․ (ալեաց) շառաչիւնը․ (որոտման) բոմբիւնը․ (առիւծին) մռնչիւնը․ (ոչխարաց) մայիւնը․ (կատուին) մլաւիւնը․ (եզին) պոչիւնը․ (գետին) դղչիւնը․ (ձիերուն) խրխիջը․ (գորտերուն) կարկաչը․ (տախտակներուն) գարգափը․ (ստից) գրնդիւնը․ (անիւններուն) ձոնչիւնը․ (զինուոց) խօչիւնը․ (Թմբիկին) դափիւնը․ (զանգակին) թինդը․ (ամբոխին) խլուրդափիւնը։

3. (Հետեւեալ հատուածը փոխեցէք այնպէս որ, ա․ մէկ թռչուն մը ըլլայ խօսողը․ բ․ դու խօսիս այդպէս մէկ թռչնոյ հետ․ գ․ դու խօսիս այդպէս մէկէ աւելի թռչնոց հետ)։

Թռչնոց երգը․ Մենք, թռչուններս, արդարեւ շատ երջանիկ ենք․ կ'ոտտտենք, կը թռչինք, կ'երգենք զուարթ և աշխոյժ․ դաշտն ու անտառ մեր ձայնէն կը հնչեն։

Առողջ և հանգիստ ենք, և կը գտնենք միշտ մեր սրտին ուզածը։ Ուր որ թռչնիք, հոն միշտ պատրաստ է մեր սեղանը։

Ըրբ օրուան աշխատութիւնը վերջա-

նայ, այն ատեն կ'երթանք ծառերուն վրայ․ կը հանգչինք լուռ ու հանդարտ գիշերն ի բուն։

Եւ առաւօտուն երբ լոյսը կը ծագի, կը բախենք մեր թեւերը, կը թռչինք օդերուն մէջ ու կ'երգենք ուրախ երգեր։ (Փոփոխութիւնք պիտի ըլլան այսպէս․ Ա․ Թռչնոյն երգը․ Ես, թռչունս, արդարեւ շատ երջանիկ եմ․ կ'ոտտտեմ, կը թռչիմ, կ'երգեմ զուարթ և աշխոյժ․ դաշտն ու անտառ իմ ձայնէս կը հնչեն ևն․ — Բ․ Դու, թռչունդ, արդարեւ շատ երջանիկ ես․ կ'ոտտտես, կը թռչիս եւն․ — Գ․ Դուք, թռչուններդ, արդարեւ շատ երջանիկ էք․ կ'ոտտտէք, կը թռչիք ևն)։

Բարձրագոյն դասընթաց

1. Բառից ընթանիք․ — (Հետեւեալ խօսքերուն մէջ կէտերուն տեղ պիտի դրուի հատուածին սկիզբը դրուած բառին ընտանիքէն բառ մը ըստ պահանջման իմաստին)։

Գիւնի․ Առողջէն կը շինուի... (գինին)․ Դողթն մի... (գինեւէտ) գաւառ էր... (Գինով) մարդը իր բանականութեան տէրը չէ... (Գինովութիւնը) ամթալի վիճակ մ'է... (Գինեմուտութիւնը) Թէ' բարոյապէս և թէ' ֆիզիքապէս կը փճացնէ զմարդ։ Կան շատ մը սեղանի և... (գիներբուաց) երգեր։ Բաքոս... (գինեոյ) շատուածն էր Յունաց դիցարանութեան մէջ։

Զօրութիւն․ Դիտութիւնը... (զօրութիւն) է, ըսաւ Պագոն։ Մարմնամարզը... (կը զօրացնէ) մարմինը։ Ծնողք պարտին փոյթ ունենալ իրենց զաւակները մտքով ու մարմնով առողջ և... (զօրաւոր) մեծցնելու։ Անդարմանելի հիւանդութեանց դէմ... (անզօր) է բժշկուիւնը։ Հէք այրի կինը վշտաց դէմ գիտէր... (զօրանալ) իր հաւատքով, Երբ ուսանողն ունի... (զօրեղ) կամք մը, կրնայ յաղթել ուսման դժուարութեանց։ Ատուածոյ... (հզօր կամ մեծազօր) զօրութեան առջեւ կը խոնարհին ամէն արարածը։ Պերճախօս փաստարանը... (հզօրապէս) պաշտպանեց իր դատը։

(Այսպէս գտէք հետեւեալ արմատ բառերէն ծագում առած բառեր․ զործ, շեւ, սեւ, կար, փառք, գեղ, զարդ, սեւ, վարք)։

ԳՈՐԾ․ Գործել, գործուիլ, գործող, գործօն, գործունեայ, գործնական, գործաւոր, գործուած, գործողութիւն, գործունէութիւն, անգործ, անգործութիւն, գործակից, գործակցական, գործակցութիւն, գործածել, գործածութիւն։

ՇԻՆ․ Շինել, շինուիլ, շինութիւն, շինող, շինական, շինականութիւն, անշէն, շէնք, շինուած, շինուածական, շինուածանիւթ։

ՍԻՐ․ Սիրել, սիրուիլ, սիրող, սիրական, սիրած, սիրային, սիրողարար, սիրահար, անսէր, սիրելի, սիրելութիւն, անսիրելութիւն։

ԿԱՐ․ Կարել, կարող, կարողութիւն, կարողանալ, կարողաբար, անկար, անկարող, անկարողութիւն, ապկար, տկար, տկարաբար, տկարութիւն, տկարանալ, տկարացնել, տկարացում, կարելի, կարելութիւն, անկարելի, անկարելութիւն։

ՓԱՌԱՐ․ Փառաւոր, փառացի, փառաւորել, փառաւորուիլ, փառաւորութիւն, անփառունակ, փառազիրի, փառազանծ, փառաբանել, փառաբանութիւն, փառատորութիւն։

ԳԵՂ․ Գեղեցիկ, գեղաւոր, գեղանի, գեղեցիկութիւն, գեղեցկանալ, գեղեցկացնել, գեղեցկացում, գեղեցկարար, տգեղ, տգեղութիւն, տգեղանալ, տգեղցնել, տգեղացում, տգեղաբար, անգեղեայ։

ԶԱՐԳ․ Զարդարուն, զարդական, զարդարել, զարդարուիլ, անզարդ, անզարդութիւն, զարդասէր, զարդասիրիկ, զարդասիրութիւն։

ՏԵՍ․ Տեսնել, տեսնուիլ, տեսաւորիլ, տեսող, տեսնող, տեսութիւն, տեսողութիւն, անտես, անտեսել, անտեսող, տեսանելիք, տեսանելի, անտեսանելի, տեսուչ, տեսչութիւն, տեսչական, տեսիլ, տեսլական։

ՎԱՐ․ Վարել, վարուիլ, վարմունք,

վարիչ, վարչութիւն, վարչական, վարչապէս։

(Վերի օրինակներուն պէս կարճ կարճ խօսքեր շինեցէք ուր այս բառերը գործածուին)։

2․ (Հետեւեալ խօսքերուն իմաստը ամբողջացուցէք՝ հետեւութիւն մը հանելով անոնցմէ)։

Ժամանակը կը թռչի կ'երթայ ա՛յլ ևս չվերադառնալու համար, (ուրեմն ջանացէք օգուտ քաղել անկէ)։ Գոհ ըլլալ իր բախտէն, չնախանձիլ ուրիշին վիճակին․ (ահա՛ երջանկութեան աղբիւրը)։ Հարուստը իրենց աւելորդէն կուտան, խի աղքատը իրենց կարեւորէն, (ապա ուրեմն այս վերջնոց բարերարութիւնն աւելի արժանիք ունի քան առաջնոցը)։ Ծշմարիտ հանճարը պարտի ունենալ աղամանդի յատկութիւնները․ (այն է՝ միանգամայն ըլլալ փայլուն և հաստատուն)։ Գութը բնական զգացում մ'է մարդուն, (ուրեմն անհնար է իրեն անտարբեր մնալ իր նմանեաց ցաւերուն ու երջանիկ զգալ ինքզինքը այլոց թշուառութեան առջև)։ Նոքա ուրք զմեզ կը չողորթթեն կ'ուզեն անպատճառ զմեզ խաբել իրենց շահուն համար․ (պէտք է ուրեմն բնաւ չվստահիլ չողորթթաց խօսքերուն)։ Ծերմակ արծաթը սեւ օրուան համար է, կ'ըսէ առածը, և իրաւունք ունի․ (պէտք է ուրեմն շուտ ըլլալ, այլ ընդհակառակն խնայող ու նախատեսող ապագային․ խնայողութիւնը առաքինութիւն մ'է)։ Գովեստը կը ծածկէ մեզմէ մեր թերութիւնները, քննադատութիւնը երկուան կը բերէ զանոնք․ (ուրեմն պէտք է աւելի վախճալ գովեստէն քան քննադատութենէն)։ Օրէնքները հանդերձներու կը նմանին․ (անոնք կը նեղեն քիչ մը, բայց կը պահպանեն)։ Հարստութիւնը առաքինութիւն է, (ապա և աղքատութիւնը է մոլութիւն)։

3․ (Հետեւեալ բառից իւրաքանչիւրին վրայ հինգ մտածութիւններ կազմեցէք․ օրինակ․ սխալում․ նշմարտութիւն․ աւել)։

ՕՐԻՆԱԿ․ 1․ Պէտք է նմանող ըլլալ

պարկեշտ մարդոց օրինակին: — 2. Երբ պատուէրին կը միանայ օրինակը, պատուէրն աւելի ազդեցիկ կը լինի: — 3. Օրինակները կանոնները կը լուսաբանեն: — 4. Յիսուսի վարքը սիրոյ, ներողութեան և անձնուիրութեան գերազոյն օրինակ մ'է: — 5. Պատմութիւնը մեր առջեւ կը դնէ առաքինութեանց հետեւելի, ինչպէս և մոլութեանց խորշելի օրինակներ:

ՍԽԱՆԴԱԿԱՆՈՒՄ. 1. Ամէն մարդ պարտի կրել իր սխալմանց հետեւանքը: — 2. Մարդկային էակը չէ կարող սխալումէ բացարձակապէս զերծ ըլլալ. Աստուած միայն է անսխալ: — 3. Փոքր սխալում մը յաճախ մեծ վնաս մը յառաջ կը բերէ: — 4. Լաւագոյն է ուրիշներուն սխալումներով փորձառու ըլլալ: — 5. Սխալի բնական է, բայց սխալումէն յետոյ չխեղարեիր անմոռութիւն:

ՃԵՄԱՐՏՈՒԹԻՒՆ. — 1. Պէտք է միշտ ճշմարտութիւնը խօսիլ: — 2. Յաճախ դժուարին է որոշել ճշմարտութիւնը բազմաթիւ սուտերու մէջէն որք զայն կը վարագուրեն: — 3. Կան դառն ճշմարտութիւններ: — 4. Ճշմարտութիւնը մոքին լոյսն է, որպէս սուտը մոքին խաւարը: — 5. Հին Պարսիկները երկու բան կը սովորեցնէին իրենց սրգւոց. ճշմարտութիւնն ըսել և ազեղ քաշել:

ԱՐԵՒ. — 1. Աստուած իր արեւը կը ծագէ արդարներուն և մեղաւորներուն վրայ: — 2. Արեւը կենդանութիւնն է աշխարհի: — 3. Արեւին ծագումը բնութեան վեհագոյն տեսարանն է. բայց ո՞րքան մարդիկ կը մեռնին առանց զայն անգամ մը տեսած ըլլալու իրենց կեանքին մէջ: — 4. Արեւը կոյրին համար չի փայլիր: — 5. Նախանձաւը կ'ըսէ. Արեւը բիծեր ունի:

Ռ. Յ. Պ.

ՇԱՔԱՐԻ ՎՐԱՅ ԴԱՍԱԹՍՈՒԹԻՒՆ

(Միջին Դասընթաց)

Ձեր մէջէն ո՞վ պիտի ըսէ ինձ ինչ է այս: — Կաւիճ, (ոմանք) շաքար: — Կաւիճ, շաքար. երկուքին ո՞րը: Բայց իրօք, քիչ մը զժուար է միայն տեսքէն զանազանելը: Աւելի ապահով միջոցն ո՞րն է այս երկու նիւթերն իրարմէ որոշելու: — Երկուքին համը մէկ չէ, Ուսուցիչ: — Այո, համով կը զանազանին: Շաքարին համը ինչպէս է, Միհրան: — Անոյշ: — Դարձեալ մոռցար պատուէրս. մէկ բառով...: — Այո, Ուսուցիչ, ներեցէք: Շաքարին համն անոյշ է, իսկ կաւիճինը անոյշ չէ: — Այո. այսպէս, կը տեսնէք, տղայքս, թէ շատ անգամ մէկ նիւթ մը ուրիշ նիւթէ մը տեսքով զանազանելը շատ դժուար է, երբեմն ալ անկարելի: Այս պարագային համին կամ... ո՞վ պիտի ըսէ, ուրիշ ինչ յատկութեան կը զիմեն: — (Աշակերտ մը) Հոտին: — Շատ լաւ: Ըսածս օրինակով մը բացատրեմ: Դուք ամենքդ տեսած և կերած էք ազատքեղը. (աշակերտներէն ոմանք իրարու կը նային): Բայց կը տեսնեմ թէ ձեր մէջէն ոմանք չհասկցան ազատքեղ բառը: Պզտիկ տունկ մը որ շատ պարտէզներու մէջ կը ցանեն, որովհետեւ շատ տեսակ կերակուրներու պատրաստութեան մէջ կը մտնէ, շատ անգամ ալ աղցանի ձևով կ'ուտեն, մանաւանդ խորոված մսի հետ: — (Աշակերտ մը). Այո, Ուսուցիչ, հասկցայ, տանկերէն մաղշաւնօս կ'ըսեն, մեր պարտէզը կայ: — Այո, տանկերէն մաղշաւնօս կ'ըսեն, Արդ, ուրիշ տունկ մը կայ մոշախինդ կոչուած, տանկերէն պաղշարուս, որ տեսքով յար և նման է... ինչո՞ն: — (Տղայք յանկարծակիի կուգան և կը փնտռեն իրենց յիշողութեան մէջ այդ բառը): — Յակոբ, գնա գրէ գրատախտակին վրայ ազատքեղ և մոշախինդ բառերը և դուք ամենքդ օրինակեցէք զայն ձեր ծանօթութեանց տետրակին մէջ, իրենց տանկերէն նշա-

նախընտրեալս:— Ըսի թէ մոլախինդը կը նմանի ազատքեղին, բայց վա՛յ անոր որ տեսքէն խաբուելով ազատքեղի տեղ կ'ուտէ մոլախինդ, նոյն վայրկեանին թունաւորուած է խեղճ անխոհեմը. գիտէք ինչ պէտք է ընել մոլախինդը ազատքեղին հետ չշփոթելու համար: մատներով ճգմելու է. ազատքեղին հոտը գէշ չէ, մինչդեռ մոլախինդը անախորժ հոտ մ'ունի:— Հիմայ տեսէք սա միւս կտոր շաքարը, զոր ամենքդ ալ կերած էք:— Ի՛նչ անուն կուտան անոր:— (Աշակերտ մը) Լէօպէզ շէքէրի:— Այո, տաճկերէն նէօպէզ, և աւելի ճիշդ նէպաթ (նշ լէօպէզ) շէքէրի, բայց նախ հայերէն բառը պէտք է. Վա՛նաշախար: (Աշակերտը կը կրկնեն այս բառը): Կը տեսնէք որ ձևով կը տարբերի պարզ շաքարէն. վանաշաքարը քիւրեղի (պիլլօր) պէս է, բիւրեղաձև է. (Աշակերտը կը կրկնեն այս բառն ալ): Գոյնը նման է պարզ շաքարին, Սեւորակ:— Ոչ, քիչ մը դեղին է:— Հիմայ, եթէ սա կտոր մը շաքարը ջրոյ մէջ դնեմ՝ ինչ կ'ըլլայ:— Կը հալի:— Ոչ, տղաս, սխալ բառ կը գործածես. կը շաքարի պէտք է ըսել: Պօղոս, դու կրընան լուծուելու ուրիշ օրինակ մը տալ:— Այո, աղը ջրոյ մէջ կը լուծուի:— Շատ լաւ, հապա եթէ կարագ քսեմ տաք հացին վրայ, կարագն ինչ կ'ըլլայ, Արամ:— Կարագը կը հալի:— Ո՛րքէ կ'ելնէ շաքարը, ո՞վ գիտէ:— (Ոչ որ կը պատասխանէ): Կուգէք գիտնալ:— (Ամենքը) Այո, Ուսուցիչ, այո:— Լաւ, այն ատեն ադէկ ուշադրութիւն բրէք: Շաքարը կը հանեն կամ շաքարեղէզ կամ ճակնդեղ կոչուած տունկերէն: Սնորգիս, (որ խաղալիքով մը զբաղած է) կրկնէ, որ տունկերէն կ'ելնէ շաքարը: Կը տեսնես բաւական ուշադիր չըլլալու հետեւանք: Գուր կրկնեցէք, տղայք: (Տղայք կը կրկնեն): Գուր ամենքդ ալ ճակնդեղ տեսած և կերած էք, այնպէս չէ: Կարմիր գունով արմատ մը, որ շատ կը նմանի ստեպղինի: (Ուսուցիչն զանազան հարցումներով կը հասկնայ թէ աշակերտներն ամենքն ալ գիտեն ճակնդեղին և ստեպ-

ղինին ինչ ըլլալը): Բայց չէք տեսած շաքարեղէզը, որ տեսակ մը մեծ եղէզ է: Երուանդ, ինչո՞ւ շաքարեղէզ չես տեսած:— Որովհետեւ մեր կողմերը չ'աճիր:— Այո, մեր կլիմայն շատ յարմար չէ շաքարեղէզին. այս տունկը աւելի տաք երկիրներու մէջ կ'աճի, զոր օրինակ... ո՞վ պիտի կրնայ գուշակել:— (Աշակերտ մը) Ափրիկէ:— Այո, ուրիշ:— (Ուրիշ աշակերտ մը) Հնդկաստան:— Այո, ուրիշ:— Ամերիկա:— Արշակ, շաքարը ուրիշ կը հանեն:— Շաքարը կը հանեն շաքարեղէզէն կամ ճակնդեղէն:— Այո, պէտք է ըսել գլխաւորաբար, որովհետեւ ուրիշ տունկերու և պտուղներու մէջէ ալ կրնայ ելնել, Հիմայ ձեզ պիտի ըսեմ թէ ինչպէս կը հանեն շաքարը ճակնդեղին մէջէն, որովհետեւ աւելի ճակնդեղէն կը հանեն: Բայց նախ պէտք է գիտնաք թէ ճակնդեղը միայն կարմիր չ'ըլլար. կրնայ ըլլայ նաև դեղին, ճերմակ: Ամենէն աւելի ճերմակ տեսակէն շատ շաքար կ'ելնէ: Տեսէք ինչ կ'ընեն շաքարը հանելու համար: Ճակնդեղին արմատները մանր մանր կը կտրեն և տեսակ մը խիւսի կը վերածեն զանոնք: Յետոյ այս խիւսը սաստիկ կը ճնշեն. անոյշ ջուր մը, տեսակ մը շաքարաջուր դուրս կ'ելնէ: Այս ջուրը թանձրացնել պէտք է, այնպէս չէ. ուստի զայն կը տաքցնեն մասնաւոր կաթասներու մէջ, և երբ պէտք եղածին չափ թանձրանայ, կ'անցնեն պարզուտէ մը ուր ուսկրածոխի դրած են: Գարեգին, կը յիշես ինչ է ոսկրածոխը, որոյ վրայ ձեզ խօսեցայ ածուխի դասին:— Այո, Ուսուցիչ, ցուցուցիք ալ. տեսակ մը ածուխ էր որ կարմիր գինին ճերմկցուց:— Ապրիս, տղաս, կը տեսնեմ որ տրուած դասերէն օգուտ կը բաղես: Բնական ածուխն է այդ:— Ո՛չ, արուեստական: Ոսկորը զոց ամանի մէջ ալրելով կը շինեն զայն:— Շատ լաւ, հիմայ կը հասկնաք, այնպէս չէ, թէ ինչու համար ոսկրածուխէ կ'անցնեն թանձրացեալ դեղնկէկ շաքարահիւթը. գունաթափ ընելու համար: Յետոյ գունաթափեալ օշարակը (որովհետեւ օշարակ

է) կաղապարներու մէջ կը լեցնեն, ուր պաղելով կը պնդանայ և կ'ըլլայ կէս զտուած շաքար: Այս շաքարը աւելի զտելու համար, ջրոյ մէջ կը... քնէ կ'ընեն, Հրանդ: — Կը հալեցնեն: Ո՛չ, ներեցէք, կը... կը լուծեն: — Այո, յետոյ նորէն գունամալ կ'ընեն. քնչպէս: — Ոսկրածուխէ անցնելով պարզուտով: — Շատ աղէկ. յետոյ նորէն կ'եփեն, որպէս զի ջուրը շոգիանայ երծայ. ապա կաղապարներու մէջ կը բխրեցանայ և կ'ըլլայ զտուած շաքար: — Վանաշաքարն քնչպէս կը շինեն, Ուսուցիչ: — Միեւնոյն եղանակաւ, տղաս. միայն թէ ըստբաւականի ծանծարացած օշարակը կը թողուն որ կամաց կամաց շոգիանայ: — Շաքարն օգտակար է, Ուսուցիչ: — Այո, տղաս, երբ չափաւոր քանակութեամբ ուտուի՝ շատ օգտակար է, որովհետեւ մարտկոմիւնը կը զիրացնէ, բայց պէտք չէ չափէն աւելի ուտել. արդէն դուք գիտէք, անպէս չէ, տղայքս, թէ ամէն բանի չափազանցութիւնը վնասակար է, և թէ որկրամոլութիւնն ոչ միայն ամօթալից մոլութիւն մ'է, այլ և խել մը հիւանդութեանց պատճառ: Վերջացնելէ առաջ, բռնմ ձեզ նաեւ, տղայքս, թէ ասկէ զրեթէ երկու դար առաջ, այսինքն բանի տարի, Միհրան — Երկու հարիւր տարի: — Այո, շաքար ըստած բանը չկար, զոնէ Եւրոպայի մէջ. անկէ վերջն ալ շատ հագուազիւտ էր և միայն յեղադործներուն քով կը գտնուէր իբր գեղ: Որչա՛նի երախտապարտ պէտք է ըլլանք ուրեմն զիտուններուն որոնք այսքան ախորժահամ և պատուական սնունդ մը տուած են մեզ:

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ԸՆԹԱՑՔ ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՋՈՒԻ

(ՌՈՊԷՌԴԱՆԵՆ ՍԷՔՈՏՈՎ)

ՆԵՐԿՐՈՒՄ ՄԱՍ

(ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ)

ԲԱՌԱՍՋՆՆՈՒԹԻՒՆ

Savoir կուգայ լատիներէն sapere գիտնալ, իմաստուն ըլլալ բայէն. Իւր գլխաւոր ածանցներն են՝

Savoir, (գոյ.) գիտութիւն

Savant, գիտուն

Savamment, հմտաբար

Or կուգայ Լատիներէն hora ժամ բառէն:

Nous, Լատիներէն nos էն, կը նշանակէ մենք, մեզ, զմեզ. Կը հետեւի թէ vous ի պէս թէ՛ իբր տէր բայի և թէ իբր խնդիր կը գործածուի:

Pensons յոգնակի Ա. դէմքն է penser, խորհիլ (լատիներէն pensare, կշռել, խորհիլ) բային Սահմ. եղանակի ներկայ ժամանակին:

26. Աներեւոյթը ER վերջաւորեալ բայերուն Սահմ. ներկային յոգնակի Ա. դէմքը կը կազմուի er և ONS ի փոխելով:

Penser ի գլխաւոր ածանցներն են՝

Pensée, խորհուրդ

Penseur, խորհող

Pensif, մտախոհ

Proverbes յոգնակին է proverbe ի:

27. Գոյականները յոգնակի ընելու ընդհանուր կանոնը եզակիին ծայրը S մ'աւելցնել է:

Sont յոգնակի Գ. դէմքն է être անկանոն բայի Սահմ. ներկային:

Généralement կուգայ général էն (լատիներէն generalem, տեսակ). Général ինքն ալ ածանցուած է genre, սեռ, տեսակ բառէն (լատիներէն genus, generis):

Genre ի միւս գլխաւոր ածանցներն են՝

Générique, սեռական

Généraliser, ընդհանրացնել

Généralité, ընդհանրութիւն

Généreux, ազնուասեւ, ազնուական : Առասաձեւն

Généreusement, վեհանձնօրէն : Առասաձեւնութեամբ

Générosité, վեհանձնութիւն : Առասաձեւնութիւն

28. Ածականներէն չափեր մակբայի կրնան փոխուիլ ածականին ծայրը *ment* (լատիններէն *mente միտքով բառէն*) : Լատիններէնի մէջ, *bona mente* կը նշանակէ բարի մտքով : Կազմուած է *bona* (աղէկ) իգական ածականէն և *mente* իգական բացառականէն որ կը նշանակէ մտքով : Լատիններէն *bona mente* էն կազմուած է ֆրանսերէն *bonnement մակբայով* : միեւնոյն կերպով կազմուած են նաեւ բոլոր եղանակական մակբայները (*ad- verbe de manière*), նոյն իսկ անոնք որոնք միտք իմաստն չեն կրնար ունենալ : ինչպէս, *carrément* (հին ֆրանսերէնի մէջ *carrément*) քառակուսի ձեւով (թէ եւ չի կրնար ըսուիլ փողովաւոր մտքով) :

29. *Ment* վերջաւորութիւնը կ'աւելցուի ածականին իզականին, եթէ ածականը բաղաձայնով վերջաւորուած կամ իգականը անկանոն ըլլայ, իսկ եթէ ձայնաւորով վերջաւորուած է և իգականը անկանոն չէ, արականին ծայրը կ'աւելցուի, թէ և հին ֆրանսերէնի մէջ e է զատ ձայնաւորով մը վերջաւորուած ածականներն ալ նախ իգականի կը փոխէին, յետոյ *ment* կ'աւելցնէին : այս հին ձեւով մէկ քանի մակբայներ ցարգ կը գործածուին. *gaiement, զուարթօրէն : assiduellement, միշտ, հանապազօրէն, եւն :*

Vrais յոգնակին է *vrai* ի (23), ածանցեալ լատիններէն *verus, աշխարհ բառէն :*

Vrai ի գլխաւոր ածանցներն են՝

Vraiment, usուգիւ

Vraisemblable, հաւանական

Vraisemblablement, հաւանականաբար

Vraisemblance, հաւանականութիւն

Invraisemblable, անհաւանական

Invraisemblance, անհաւանականութիւն

Véracité, հեմարսութիւն : ձեմարսալսուութիւն

Vérité, հեմարսութիւն

En vérité, հեմարսիւ

Véritable, հեմարիս

Véritablement, usուգիւ

Véridique, հեմարսաւէր

Véridiquement, usուգութեամբ

Véridicité, հեմարսաւիրութիւն

Vérifier, usուգիլ

Vérificateur, usուգիչ

Vérification, usուգելի

Avérer, usուգել

ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

PREMIÈRE LEÇON. — LES PROVERBES SONT VRAIS

PREMIÈRE իգական է, որովհետեւ *leçon* իգական է : *VRAIS* յոգնակի է, որովհետեւ *proverbes* յոգնակի է :

30. Ածականը սեռով և թուով կը համաձայնի իւր գոյականին հետ :

31. Առածները ճշմարիտ են, *les proverbes sont vrais*. — Կը տեսնուի թէ հայերէն և ֆրանսերէն չարագրութիւնը մէկ չէ : Նախ *sheր բայի, յետոյ բայ, ապա usուրոգելի կամ խնդիր. ա՛յս կարգաւ պէտք է ֆրանսերէնի թարգմանել հայերէն նախադասութիւն մը :*

Le jeune Alexis. — La paresse. —
LES autres

32. Յօդը սեռով և թուով կը համաձայնի իւր գոյականին հետ :

33. *Le, la, les, յօդերը կը համապատասխանեն հայերէն որոշեալ բառերուն ծայրը գտնուած ը կամ ն գրին, և որոշեալ բառէն առաջ կը գրուին :*

34. Ֆրանսերէնի մէջ գոյականներն՝ որոշեալ մտք գործածուին թէ անորոշ՝ ընդհանրապէս յօդ կ'ունենան իրենցմէ առաջ, եթէ ուրիշ որոշիչ բան մը չգրուուի, ինչպէս *un* կամ *ce*. (*un garçon*,

ce vice) : — Եթէ գոյականէն առաջ ածական գտնուի, ածականին առջեւ կը դրուի յօդը : — Բացառութիւն է tout ածականը, որմէ ետքը կը դրուի (tous les vices) :

Un garçon qui avait etc.

35. Qui յարարերական գերանուն ելած, այսինքն յարարերեալ մ'ունեցած ատեն, կրնայ ըլլալ տէր բայի կամ բնութեան խնդիր : Երբ տէր բայի ըլլայ՝ անձ կամ իր կրնայ յարարերել, ինչպէս՝ un garçon qui, մանչ մը որ : la paresse qui, ծուլութիւնն որ : Բայց երբ բնութեան խնդիր ըլլայ, այսինքն երբ նախադրութեամբ գործածուած ըլլայ, միայն անձ կրնայ յարարերել սովորաբար — Յարարերական գերանունն միշտ իւր յարարերեալին սեռն, թիւն և գէմքն կ'ունենայ, հետեւաբար բայը միշտ անոր հետ կը համաձայնի :

Combien de fois

36. Քանակական մակրայները (adverbe de quantité) de նախդիրը կ'ուզեն իրենց գոյականէն առաջ :

A-t-on ?

37. Երբ տէր բային գերանուն մ'է, բայը հարցականի կը փոխուի տէր բային բայէն ետքը դնելով : Հետեւաբար գիտե՞ք, կը կարծե՞քն պէտք է թարգմանել savez-vous ? pensons-nous ?

38. Տեսանք արդէն թէ a-t-on ի մէջ տալով քաջածայնութեան համար դրուած է. ամէն անգամ որ բայի մը եզակի երրորդ գէմքին ծայրը ձայնաւոր մը գտնուի՝ հարցման մէջ, բային և գերանունին մէջտեղ կը դրուի է, զոր՝ եթէ բունը քննենք, քաջածայնական կոչել սխալ է, քանի որ այդ էն կար արդէն հին ֆրանսերէնի մէջ : Այսպէս, հին ատեն կը գրէին il at :

N'a-t-on pas ?

39. Բայերուն հարցական-բացասական ձեւին մէկ օրինակն է այս, երբ տէր բային գերանուն մ'է : նախ, ժխտական մասնիկը ու ետքը՝ բայը, յետոյ՝ գերանունը և ապա բացասական միւս մակբայը : Այս օրինակին համաձայն չե՞ր, չե՞ք գիտէք պէտք է թարգմանել n'était-il pas ? ne savez-vous pas ?

N'a-t-on pas dit ?

40. Բառ առ բառ թարգմանեցինք չունի մարդ ըսած : Տեսանք արդէն թէ n'a pas չունի կը նշանակէ ինքնին (17) : Բայց երբ ուրիշ բայի մը ընդունելութիւն անցեալին քով գտնուի, այսինքն բայի մը բաղադրեալ ժամանակը կազմելու գործածուած ատեն, avoir բայը փոխանակ ունենալի՝ ըլլալ կը թարգմանուի սովորաբար հայերէնի մէջ այսպէս n'a-t-on pas dit ? Ի հայերէն թարգմանութիւնն է մարդ Զէ՞ ըսած :

41. Հայերէն թարգմանութեան մէջ n'a-t-on pas dit թարգմանեցինք չե՞ք ասինք : Երբ բայի մը տէր բային on անորոշ գերանունն ըլլայ, այդ բայը շատ անգամ կրաւորական ձեւով կը թարգմանուի հայերէնի մէջ :

Ce vice

42. Ce viceի բուն թարգմանութիւնն է այս մոլորքիւն, բայց աշխարհաբարի մէջ՝ ստացական և ցուցական ածականներէն ետքը գտնուած գոյականն ալ յօդով կը գործածեն ընդհանրապէս : այս մոլորքիւնը, ձեր հայրը, եւայլն : այս պարագայներու մէջ յօդը պէտք չէ թարգմանել ֆրանսերէնի, որովհետեւ այդ ածականներն արդէն կ'որոշեն : Այսպէս, այս մոլորքիւնը կը թարգմանուի ce vice (և ոչ le ce vice) :

Vous le savez

43. Անձնական գերանունը բայէն ա-

դաջ կը դրուի ոչ միայն տէր լայի եղած տանն, ինչպէս *vous*, այլ նաեւ խնդիր եղած տանն, թէ՛ սեռի, ինչպէս *le*, թէ՛ քնութեան:

Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Ք

Պատկեր. — Հետագայ վարժութեանց համար բառարանի պէտք չկայ, որովհետեւ արդէն յիշուածներէն դուրս բառ չի գտնուիր անոնց մէջ: Իսկ կանոններն բացատրուած են արդէն համաձայնութիւն խորագրին տակ:

Première-jeune (տես հատուած 2 և 6) ածականներն իր օրինակ առնելով՝ հետեւեալ ածականներն իգականի դարձուցէք. *primordial*, *lisible*, *éligible*, *électoral*, *unique*, *uni*, *seul*, *solitaire*, *infaillible*, *médisant*, *pardonnable*, *inné*.

Le jeune Alexis - La paresse - Les proverbes օրինակներուն համաձայն (5 և 32) հետեւեալ բառերը փրանսերէնի քարգմանեցէք. — Դասը, դասերը, ընտրութիւններն, չաքարեղէնի առժին, չաքարեղէններն, մանչը, միայնութիւնը, մոլութիւնը, մոլութիւնները, նուէրը, ծնունդը:

Un garçon - Une leçon օրինակներուն համաձայն (7). — Ընթերցող մը, ընթերցանութիւն մը, ընտրող մը, հրովարտակ մը, մոլութիւն մը, նուէր մը, ծնունդ մը, բայ մը, մակրայ մը, առած մը:

Օրինակ. *Un garçon qui avait. — Une leçon qui était* (9 և 35). — Այն⁽¹⁾ դասը՝ որ, այն ընթերցողն՝ որ, այն ընթերցանութիւնն՝ որ, այն ընտրողներն՝ որք, այն ընտրութիւնք⁽²⁾ որ:

Օրինակ. *Ce vice. — Cet autre — cette leçon* (19 և 42) այս մանչը, այս ընտրողը, այդ ընթերցանութիւնը, այդ ընթերցողն, այդ հրովարտակն, այս մակրայը:

(1) Այս օրինակներուն մէջ այնքան աւելորդութեամբ գործածուած ըլլալով, փրանսերէնի մէջ չի թարգմանուիր:

(2) Յայտնի է թէ ընտրութիւնի որոշեալ միջոցով գործածուած է հոս:

Օրինակ. *Vice* (20). — Այս մոլութիւնը, ագահութիւնը, այդ ծանօթութիւնը, այն սովն, չարութիւնը:

Օրինակ. *donne* (21). — Մարդ կուտայ, մարդ կը ներէ, մարդ կ'ընդհանրացնէ, մարդ կ'ստուգէ:

Autres օրինակին (23) համաձայն հետեւեալ ածականները յոգնակիի վերածեցէք. *uni*, *seul*, *solitaire*, *contradictoire*, *médisant*, *pardonnable*, *savant*:

C'est un proverbe օրինակին համաձայն թարգմանեցէք. — Դաս մ'է (այս), ընթերցող մ'է (սա), ընտրող մ'է (նա), աղէկ է (այս), մանչ մ'է (նա), յանցանք մ'է (այդ):

Օրինակ. *Vous le savez* (24, 25 և 43). — Ձայն կուտաք, զայն կ'ստուգէք, զայն կը կարծէք, զայն կուտաք:

Օրինակ. *Nous pensons* (26). — Կուտանք, կը ներենք, կ'ընդհանրացնենք, կ'ստուգենք:

Proverbes օրինակին (27) համաձայն հետեւեալ գոյականները յոգնակիի վերածեցէք. *lecteur*, *leçon*, *lecture*, *légende*, *électeur*, *élection*, *bonbon*, *garçon*, *défaut*, *vice*, *vérité*.

Général ածականէն կազմուած *généralement* մակրայի օրինակին համաձայն մակրայի վերածեցէք հետեւեալ ածականները (28, 29). — *Seul*, *autre*, *premier*, *vrai*:

Première leçon — les proverbes sont *vrais* օրինակներուն (30 և 31) համաձայն փրանսերէնի թարգմանեցէք. — Վերցիշեալ մանչը, բարի մանչեր, աններելի ծղլութիւն մը, աններելի յանցանքներն:

Օրինակ. *Alexis n'avait pas un défaut* (11 և 18). — Չէք գիտեր, չէք կարծեր, մարդ չէր, մարդ չուէր, չեմք տար, չէք ներեր:

Օրինակ. *Combien de fois* (36). — Քանի դաս (դասեր), քանի ընթերցող (ընթերցողներ), որչափ ընտրողք, բառական բայեր, բառական մանչ (մանչեր), բառական նուէրներ:

Օրինակ. *A-t-on?* (37). — Գիտէ՞ք, կը կարծե՞նք, կուտա՞ք, կը ներե՞նք, մարդ

կ'ընդհանրացնէ՞ (généralise-t-on?), մարդ
կ'ստուգէ՞:

Օրինակ. N'a-t-on pas ? (39). — Չէ՞ք

գիտեր, չէ՞նք կարծեր, չէ՞ք տար, չէ՞նք
ներեր, մարդ չընդհանրացներ, մարդ
չ'ստուգեր:

Ֆրանսերէնի քարգմանեցէի

Բաճալի

Առաջին յանցանքը բոլոր միւսներուն
ծնունդ կուտայ(*) (31, 5, 30, 32, 33, 34),

Միայն մէկ դաս գիտէք (31, 2, 7, 30),

Ալէքսի մոլութիւն մ'ունէր (31),

Գիտէք այս դասն, որ առաջինն է (31,
19, 42, 35),

Ալէքսի, որ բարի էր, միայն մէկ պա-
կասութիւն ունէր (31, 35, 11),

Այս պակասութիւնը ծուլութիւնն էր
31, 42),

Ծուլութիւնը, որ Ալէքսի պակասու-
թիւնն էր, մոլութիւն մ'է (31, 35, 11,
20),

La première faute donne naissance
à toutes les autres.

Vous savez une seule leçon.

Alexis avait un vice.

Vous savez cette leçon, qui est la
première.

Alexis, qui était bon, n'avait qu'un
seul défaut.

Ce défaut était la paresse.

La paresse, qui était le défaut d'A-
lexis, est un vice.

Յ. Ք. ՀԻՆԴԷԱՆ

ՇԱՀԿՈՒՆԲ ՕՍՄԱՆԵԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԵԱՆ

(Ի պէս երկրորդական վարժարանաց)

ԱՀՄԵՏ ՎԷՖԻԳ ՓԱՇԱՅ

Ճիւղլաս բերեմէսինին մուգասիմէսի

جلالاس ترجمه سنك مقدمه سی

Թալէպէտէն իբի հօլտաշ Շէլմէնկէ
պիրլիքտէ կիտէրքէն, հարր ու հարարէթ-
տէն հօրկուն տիւշէրէք բասթ կէլտիք-
լէրի պիր չէշմէսար քէնարընտա էլլէնիւպ
տէֆ'ի ածշ ու ըզթըրապտան սօնրա խա-
թիրահաթ իլաթիւար իտէրլէր, էզ գազա
հազընտա, ուճը թսփրագտան չըզմըշ պիր
թաշ փարէսի վէ իւզէրինտէ գէման սա-
տէմաթընըն քէտէրի վէ իսթիւնտէն կէ-
ջիւպ սուվարլամալա կէլէն տալարլա-
րըն պագանագլարը էսէրի իլէ պիր ազ
պօզըլմըշ հազը կէօրիւրլէր. թաշա սու
սէրփիւպ երզատըրզլարընտա շու քէլի-
մաթը օզուրլար:

« Միւլազիմ փէտէր տը Կարսիսարն
ճանը պրնտա միւսթէթիր ու մէտփուն

طلبه دن ايكي بولداش شلمنكه برلكده
كيدر كن حر و حرارتدن يورغون دوشهرك
راست كلكلري برچشمه سار كنارنده اكله نوب
دفع عطش واضطرابدن(۱) صوكره ا-ت راحت
اختيار(۱) ايدرلر. از قضا ياقينده اوجي طبراقدن
چيقمش بر طاش پاره سي و اوزرنده زمان
صدماتك كدری و اوستندن كچوب صوارمغه
كلان طوارلك باقاناقلري اثری ايله بر آز بوزلمش
يازی كورورلر. طاشه صو سر يوب ييقادقلرنده
شو كلاتی اوقورلر: « ملازم پدر دوغار سياسك
جانی بونده مستتر(۱) و مدفوندر. » طلبه نك

(*) Ուսանողն այս խօսքերը ճարգմանելէ վերջ միայն պէտք է դիմացի ֆրանսերէն ճարգմանութեան, քանաչիին
դիմէ, բաղդատութեան համար:

տրը» : Թալէպէնին էն կէնճի տճուլ վէ տալուրզ օլմաղլա պու սէօլլէրի օգուր օգումսզ տէհանը՝ զահգահտեր աշուպ նէ՞ Թօհաֆ, ճանը պունտա միւսմէթիլ հա՛. պունտա միւսմէթիլ իմիշ. պէօլլէ զէվզէքճէսինէ քիթապէեի քիմ հազմըշ. ա՛հ պիլսէյտիմ տէեէէէք գալգուպ եօլընա րէվան օլուր : Էմմա արգատաշը միւլահազալը պիր տտէմ օլմաղլա շունտա պիր սրրր օլմալը . պիր եօզլահուպ քէշֆ խտէ պիլսէմ տէեիւ կիրու գալուր վէ պըջտղըլա Թաշըն էթրաֆընը գազմաղա պաշլահուպ հէլէ տէվիրիր . ալթընտա պիր մէշին քէսէ վէ աշտըգտա իշինտէ եիւզ ալթունլա պիր քեսաղըտ պուլուր . անտէ լիասն՝ը Լաթինի իլէ հազըմըշ քի «Էյ քիթապէնին մանտարնա վա՛ղըֆ օլան սա՛հիպ՛ի իզան. սէն պէնիմ վա՛րիսիմ օլ վէ մալիմտէն սէն խալր ու լէզզէթ պուլ պարի ֆիրասէթին սէմէրինի տատատարն» :

Իշմէ Էվրագ՛ը փէրիշան՛ը սէրկիւզէշ-
 Թիմի միւթալէտեա ըաղիպ օլսն է՛յ գա-
 ըրի՛ի միւնսըֆ. սէն հէր քիմ խէն էլպէթմէ
 պու իքի ըէֆիզին պիրինէ պէնզէեէնէք-
 սին. էկէր Թալիմ ի Էտէպէ տաիր օլսն
 միւնսէրինսմընը սէն նազար՛ը տըզգամ-
 լա իման իտէքսէն իւսթատըն պէտանը
 միւնէպիննէ պուհտա նաֆիլէ լամթիֆի
 մէմզուճ պուլուրսըն :

Բաներ

արձանագրութիւն . چشمه سار աղբերակն .
صدقات دفع عيش ايتك صوامق
հարուածք . صوارمق ջուր առնել .
ջուր տալ . ملازم կնդակ .
պետ . مستتر ծածկուած .
صاورق مدفون թաղուած .
عجول անսպարող , վաղվաղիտ .
խիզախ , جانگوزدهان բերան .
كتابہ كتابتہ گماننامہ
արձանագրութիւն . مزار
قبرستان
գիր . يوله روان اولقى
کړېدال روان اولق
نوم
پورتهل . صاحب اذعان
صاحب
قاسم
توک
کسان
له
طابق
اوراق
ريشان

اك كنڄي عجول و صاورق اولمقله بو سوزلری
او قور او قومز دهان قهقهه یی آچوب نه تحف!
جانی بونده مسترها! بونده مستر ایمش بویله
زوزکجه سنه کتابة یی کیم یازمش. آم بیلسه یدم
دیهرک قلقوب یولنهر وان^(۲) اولور. اما آرقداشی
ملاحظه لی بر آدم اولمقله شونده بر سر اولمی
بر یوقلایوب کشف ایده بیلسه م دیوکیرو قالور
و بجایله طاشک اطرافنی قازمغه باشلایب
هله دیویرر. آلتنده بر مشین کیسه و آچدقده
ایچینده یوز آلتونله بر کاغد بولور. آنده لسان لاتینی
ایله یازمش که « ای کتابة نك معناسنه واقف^(۳) »
اولان صاحب^(۴) اذعان سن بنم وارشم^(۵) اول
و مالمدن سن خیر و لذت بول باری فراستک
ثمرخی طاده سین .

اشته اوراق پریشان سرگذشتی مطالعہ
راغب (۳) اولان ای قاری (۳) منصف سن هر
کیم ایسه که البته بو ایکی رفیقک (۴) برینه
بکزه جکسین . اکر تعلیم ادبه دار اولان
مندرجاتی سن نظر دقله امعان ایدرسه که استادک
بیانی موجب نتیجه بونده نافهله لطیفی (۴) ممزوج
بولورسین .

րուցան Թղթեր. سرگذشت արկածք. قاری
 ընթերցող. منصف արդարասէր. مندرجات
 պարունակութիւն, պարունակութիւնք.
 نافع نظر دقتله امعان ايتمک ուշի ուշով դիտել.
 օգտակար :

Բառագրություն

(1) *اضطراب* *տառապանք* , *اختيار* *կամե-*
նայ , *ընտրութիւն* , *իջծիալ* (*افتعال*) *ձեւէն*
աներեւոյթ են . *մատտէ'ի* *ասլիյեէնին*
(*خبر* *էւ* *ضرب*) *է* :

Այն ածանցեալ աներեւոյթներն որոց

կատարեալը եռագիր արմատներուն վրայ երկու գիր աւելցնելով կը կազմուի, կը կոչուին՝ սիւլասի՛ի մէջիտուն ֆիհ՛ի խումասի։ Այս տեսակ մաստարները 5 պոպ են, 1. Ինֆիւալ (افعال) 2. Իֆթիւալ (افعال) 3. Իֆիւալ (افعال) 4. Թէֆաուլ (افعال) 5. Թէֆա-ուլ (تفاعل)։

Ահա սա հետեւեալ օրինակներէն պիտի տեսնուի թէ՛ այս տեսակ մաստարներուն մագին (կատարեալ) հինգ զրէ կը բաղկանայ։

انكسر (ինքէսէրէ) կոտրեցաւ, اجتمع (իճ-թէմէա) ժողուեցաւ, اجمع (ըմէրրէ) կարմրեցաւ.

تبعث (թէքէսէրէ) կոտրեցաւ, تباعد (թէպաատէ) հեռացաւ.

Հոս այս անգամ Իֆթիւալ ձեւին վրայ պիտի խօսինք։

Այս ձեւն ունեցող աներեւոյթները շատ անգամ կրաւորական եւ չեզոք եւ երբեմն ներգործական կ'ըլլան։

Մէհմուզ իւլ ֆա (արմատին առաջին գիրը հէմզէ) եղող եռագիր արմատները Իֆթիւալ ձեւին վերածուած ատեն հէմզէն կամ կը մնայ կամ (ی) ի կը փոխուի, զոր օր. یتلاف էն یتلاف կամ یتلاف (ընտանեանալ), یتمان էն یتمان կամ یتمان (ընտանեանալ).

Միսալի վալիի եւ հաթի ները (արմատին առաջին գիրը հուրուֆ'ը ըլլէ՞ծ ըլլայ) եւ խիստ քիչ անգամ մէհմուզ իւլ ֆան թա ի փոխուելով Իֆթիւալ ձեւին թա զրոյն հետ խողում կ'ըլլան զոր օր.

اتصاف էն وصف (միանալ) اتحاد էն وحدت (օժտուիլ, յատկութիւն ունենալ).

اتخاذ էն أخذ (ղլխանալ) اتسار էن يسر (ձեռք առնուլ).

Էնզէֆ'ը վալիները (արմատին երկրորդ գիրը հուրուֆ'ը ըլլէ՞ծ էն վալ ըլլայ) Իֆթիւալ ձեւին մէջ (ی) ի կը փոխուին զոր օր.

احتياج էن اقتيات (անանիլ). حوج էن (կարօտութիւն, պէտք).

عوض էن احتياط (նախազգուշութիւն) احتياض փոխարինութիւն պահանջելու զայ)

Սակայն երբեմն, վալ գրին անփոփոխ մնալուն ալ կը պատահուի զոր օր. ازدواج یتلاق یتلاق یتلاق (ամուսնանալ) احتوال یتلاق یتلاق (միմեանց օգնել).

Նազըս (արմատին երրորդ գիրը հուրուֆ'ը ըլլէ՞ծ ըլլայ) եւ Լէֆիֆ (Ա. եւ Բ. կամ Բ. եւ Գ. գիրը հուրուֆ'ը ըլլէ՞ծ ըլլայ) են դրոյներուն վերջի հարֆ'ը ըլլէ՞ծ, Իֆթիւալ ձեւին մէջ հէմզէի կը փոխուի զոր օր.

اشترأ էن شراء (հաւասարութիւն).

ظ' ط' ض' ص' գրերէն մէկով սկսող եռագիր արմատէն երբոր Իֆթիւալ ձեւն ածանցուի, Իֆթիւալի աւելորդ թա գիրը (ظ) ի կը փոխուի, ինչպէս վերոյս աներեւոյթը. Ուրիշ օրինակներ.

اصطبار یتصاب یتصاب یتصاب (համբերել) اطراد یتباد یتباد یتباد (միօրինակութիւն). اضطرار یتضرار یتضرار یتضرار (չըրաւորութիւն, ստիպում).

اطلاع یتطلع یتطلع یتطلع (տեղեկանալ).

Եթէ (ز ذ د) գրերէն մէկով սկսի Իֆթիւալի աւելորդ թա գիրը (ذ) ի կը փոխուի զոր օր.

ادخار یتدخر یتدخر یتدخر (համբարել) ازدحام یتدحم یتدحم یتدحم (խռնել).

(ذ) ով սկսող եռագիր արմատէն Իֆթիւալ ձեւն ածանցուած ատեն Իֆթիւալի աւելորդ թա գիրը երբեմն ալ (ذ) ի կը փոխուի զոր օր.

اذبح یتذبح یتذبح یتذبح (յիշուիլ) اذکار یتذکر یتذکر یتذکر (մորթուիլ).

(ث) ով սկսող եռագիր արմատականը Իֆթիւալ ձեւն ունեցած ատեն, Իֆթիւալի աւելորդ (ث) գիրը, (ث) ի կը փոխուի զոր օր.

խամ'ի ֆա'իլի մէջ ى կը փոխուի, իսկ
հասերի եղողներուն հան ալ երկնցնելով
կը կարդացուի, զոր օր. ساهى ասի
սխալով, سى ջանք ساعى ասի՝ ջանացով.

Լէֆիֆները Թէ մէֆրուզ Թէ մագրուն
նագրա եղողներուն պէս կ'ըլլան. զոր օր.
روایت պատմել راوی պատմող.

حواية բովանդակութիւն حوى բովանդա-
կող, պարունակող, ونايه պահպանել
واقى պահպանող.

(4) لطيف ֆա'իլ ֆա'իլ ֆա'իլ ֆա'իլ ֆա'իլ
արարերէն սըֆամ'ը միւշէպպէհէ (ածա-
կանակերպ) են.

Սըֆամ'ը միւշէպպէհէն չեզոք (յազըմ)
բայերէ ածանցող ածական մ'է, որ
տեւողութեան զաղափար մը կը պարու-
նակէ: Զեզոք նշանակութիւն ունեցող
ֆա'իլ (فاعل) ձեւն ալ ածականակերպ մ'է.
սակայն վաղանցուկ և անտես գործողու-
թիւն մը կը նշանակէ, որով կը տարբե-
րի սըֆամ'ը միւշէպպէհէէն: Սըֆամ'ը
միւշէպպէհէի նշանաւոր ձեւը ۛفعل Է, որ
արմատին առաջին զրին իւսթիւն մը՝
երկրորդ զրէն վերջը էսրէով եէ մը ա-
ւելցնելով կը կազմուի. զոր օր.

طول ազնուութիւն كرم ազնիւ, طول
երկայնութիւն طویل երկայն, جلال վե-
հուծիւն جليل վեհ, شرف փառք شريف
փառաւոր:

Փոյն եւ Թերութիւն (էլլան վէ ու-
հուպ) ցուցնող բառերը فعل էֆալ ձեւին
վրայ սըֆամ'ը միւշէպպէհէ կ'ըլլան.
զոր օր.

حزب հումբէթ կարմրութիւն احمر կարմիր.
صفر սուֆրէթ դեղնութիւն اصفر դեղին.
خضر խուտրէթ կանաչութիւն اخضر կանաչ
سود սէվաստ սևութիւն اسود սև.

بياض պէհազ ճերմակութիւն ابيض ճերմակ
سمت սիւմբէթ թիւսթիւն اسم ثوب.

حطب հատպ կուզութիւն احطب կուզ.

عرج արէճ կաղութիւն اعرج կաղ.

عمى ամա կուրութիւն اعمى կոյր.

عور ավէր միականի ըլլալ اعور միականի.

فيل ֆա'իլ ձեւին մէջ նագրաները իա-
ղամ կ'ըլլան, զոր օր.

علو բարձրութիւն على բարձր.

قوت զօրութիւն قوى զօրաւոր.

غنى հարստութիւն غني հարուստ.

(5) آتون փոխանակ գրելու (الله) (آلله)

: (الى ايله ' ايله

(4) մասնիկը երբեմն (4) ձեւով կը
գրուի. ինչպէս վերի օրինակները:

Եթէ բառը (ى) է զատ ձայնաւոր
գրով վերջանայ (ايله) մասնիկը Թեթեւա-
ցնել (Թախֆիֆ) կարելի է: Զոր օր.

نعمه ايله ' آرزو ايله ' صفا ايله ' صو ايله
է գրել:

Եթէ բառը (ى) ձայնաւորով վերջա-
նայ երկու պարագայ կայ. Ա. այս (ى)
գիրը եթէ իզաֆէթի ետ է Թեթեւացում
կարելի է. զոր օր. ايله احدك قلى գրելու
տեղ ايله احدك قليلى կրնայ գրուիլ. مصطفاناك
مصطفاناك حقه سيله գրելու տեղ حقه سى ايله
կրնայ գրուիլ:

Բ. Եթէ իզաֆէթի ետ չէ, պէտք է
միշտ ايله գրել. զոր օր. ايله كعدم գրե-
լու տեղ ايله كعدم չէ կարելի գրել:

(ايله) մասնիկը ոտանաւորի մէջ (նազմ)

(ايله) ձեւն ալ կրնայ առնուլ:

Երկու անձայնանիշ գրով վերջացող բա-
վերջը եկող (ايله) ն, չէ կարելի Թեթեւա-
ցնել. զոր օր. ايله بورحله տեղ بورحله ى

Մէկանձայնանիշ գրով վերջացող բառէ
վերջը (Թէ ايله և Թէ 4) գրել կարելի է.
զոր օր. ايله ستايش ايله ' غيرتله և غيرت ايله

Երբեմն հաստատական իմաստ տալու
համար (ايله) էն վերջը (بر) պարսկերէն
բառն ալ կ'աւելցուի. զոր օր. ايله بر كيبور

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Ֆրէօպէլեան Նուիրաց ու Պարապմանց
վրայ

ԳՈՒՆԴ, ԽՈՐԱՆԱՐԴ, ԳԼԱՆ

ԵՐԿԵՐՈՐԴ ՆՈՒԷՐ

Նրկրորդ նուէր անուամբ ծանօթ երկրաչափական հաստատուն մարմնոց այս փոքրիկ հաւաքածոյն ֆրէօպէլ տալով մանկան ձեռքը, իր նպատակն եղած է խելամուտ ընել զնա ձեւոց բազմաթիւութեան ու վերլուծութեան: Դիտողութեան ենթարկուած այս առարկայներն պարզ ձեւ մը ունին եւ կանոնաւոր են: անոնք կ'ընծայեն, բազմաթիւութեան համար, բաւական յստակ նմանութիւններ ու բացորոշ հակապատկերներ: Հոս ոչ այնչափ պիտի զբաղինք ծանօթացնելու մանկան երկրաչափական քանի մը ձեւեր, որ սակայն բաւական կարեւորութիւն ունին, որչափ հրահանգելու զնա, իր դիտողութեանը երթարկուած առարկային հետ ուղղակի իյարարեցութեան դրուած իմացականութեան գործողութիւններուն:

Այս առաջին ուսումն պէտք է ուրեմն որ ամբողջով կարի չափաւոր սահմաններու մէջ: Մեր փոքրիկ աշակերտաց տարիքն պարտք կը դնէ մեր վրայ որ ներկայացնենք սոյն ուսումն իբրեւ խաղ մը: Ըսելով խաղ սակայն, որուն բովանդակ հրապոյրն կը կայանայ այն գոհունակութեանը մէջ, որ կը տրուի դիտելու՝ շօշափելու եւ վերջապէս հազար ու մէկ եղանակներով քննարկելու գործունէութիւնն կրթելու սահանջման:

ՆԱԽՆԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՔ

Երեք մարմիններն՝ գունդ, խորանարդ, գլան, հաւասար են ըստ երրեակ տարածութեանց, այսինքն թէ՛ գունդին տրամագիծը հաւասար է գլանին տրամագծոյն ու քարձրութեան, եւ խորանարդի ան-

կեան: Այս մարմիններն ճարմանդներ ունին իրենց վրայ, որոնց մէջէն կրնայ դիւրաւ անցնիլ կախման լար մը որ կրկնակ կը բռնուի: Նախ եւ առաջ՝ գլանը կախելու համար գործածուած լարը պէտք է որ անցնի անոր խորիսխներէն միոյն կեդրոնն հաստատուած ճարմանդին մէջէն: Խորանարդին լարը՝ անոր երեսներէն միոյն մէջտեղ հաստատուած ճարմանդէն: Երեք հաստատուն մարմիններն դրուած են փայտէ տուփի մը մէջ, որուն կափարիչը վրայէն կը քաշուի: Իւրաքանչիւր տղայ պէտք է որ ունենայ իր ձեռքին մէջ այսպիսի տուփ մը:



ԱՌԱՋԻՆ ՇՍՐՔ ՎԱՐԺՈՒԹԵԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Գ Ո Ւ Ն Դ

Եթէ, առանց նախահոգ զգուշութեան, տուփերը բաշխուած ըլլային առաջին դասին սկիզբէն, դժուարարգել հետաքրքրութեան մը միամիտ շտապանքը անկարգութիւն պիտի ծնուցանէր: Բայց աստի, մանկանց ուշադրութիւնն պիտի դառնար այս երեք առարկայներուն ալ վրայ, եւ այլ եւս կարելի չպիտի ըլլար սեւեռել զայն այն առարկային վրայ, զոր կ'ուզենք քննել տալ նախ եւ առաջ: Փոքրիկ հնարքով մը, սակայն, կարելի է դժուարութեան առաջըն առնուլ:

Վարժուհին տուփերը տակուին չի բաշխած, կը բանայ իրենք, եւ սեղանին վրայ կը դնէ երեք հաստատուն մարմիններն, այնպէս որ տղոց ամենքն ալ կարենան դիւրաւ տեսնել զանոնք: Յաջորդաբար, կախուած բռնելով զանոնք լարէն, անոնց համառօտ մէկ նկարագրութիւնն կ'ընէ քանի մը խօսքով, կ'ըսէ միայն ինչ որ պէտք է զանոնք իրարմէ զանազանել տալու համար, ըստ որում աւելի կատարեալ ուսումն պիտի աւանդուի երբ տղայն առարկայներն ձեռքին մէջ ունենայ, վարժուհին կը սորվեցունէ երեք առարկայ-

ներուն մասնաւոր անուններն. գունդ, խորանարդ, գլան: Նա կրկնել կուտայ այս անուններն, յաջորդարար ցուցնելով իր մատովն առարկայից իւրաքանչիւրը: Անակնկալին պատճառած հետաքրքրութիւնն նուազած ըլլալով այժմ, տուփերու բաշխումն կրնայ կատարուիլ առանց անտեղութեան: (Տես, բաշխման եղանակին համար, Գնդակի խաղն, Ա. Վարժութիւն):

Պէտք է խօսք առնուլ որ տղայք, արուելիք նշանէն առաջ, չի բանան տուփերը:

«Տուփը դրէք ձեր դիմացը. — Զախ ձեռքով տուփը բռնեցէք. աջ ձեռքով կախարիչը վերցուցէք. — Դրէք կախարիչը սեղանին վրայ:»

Վարժուհին, պատուէրին հետ մէկտեղ, կը կատարէ նշանակեալ շարժումներն:

«Գունդը հանեցէք տուփէն. — Զայն կախուած բռնեցէք լարէն:»

Այսու կ'ստուգուի թէ որ եւ է տղայ հաստատուն մարմին մը ուրիշի մը հետ չփոխած է:

«Դրէք գունդը սեղանին վրայ. — Փակեցէք տուփը. — Գնդակը դրէք տուփին վրայ. — Կախուած բռնեցէք գունդը:»


Բաղդատել տուէք գունդն առաջին նուէրի գնդակին հետ: Առաջին անգամն ըլլալով տղայն կը հրաւիրուի զուգակշիռ մը ընելու ուղղապէս դիտուած առարկայի մը եւ բացակայ առարկայի մը միջեւ, որուն գաղափարը տպաւորուած է իր յիշողութեանը մէջ:

«Ինչո՞վ նման են իրարու. ձեւով. — Ինչո՞վ տարբեր են իրարմէ. նիւթով, Գունդը՝ զոր կը տեսնէք, փայտէ է, իր մակերեւոյթն աւելի ոլորի է. կարծրութիւնն աւելի մեծ. Գունդով թեթեւ հարուած մը զարկէք սեղանին վրայ. ահա կը հաստատուի որ ընդհարումն աւելի մեծ ձայն մը կուտայ: Սակայն բաղդատուած երկու առարկայներու ձեւն համանման է. երկու գնդակներն են անոնք:»

Այս դիտողութիւններն պարագային թեւադրած ընդլայնումներով ընելէ յետոյ, գունդովը կրկնեցէք շարժմանց վե-

րաբերեալ այն քանի մը վարժութիւններն որք գնդակով կատարուեցան (3⁰, 4⁰, 5⁰ եւ 6⁰ վարժութիւնք): Յետոյ տղայք, վարժուհւոյն հրաւերին վրայ, հաստատուն մարմինն տուփին մէջ կը դնեն, կը գոցեն զայն ու ձեռքէ ձեռք տալով՝ կը հասցունեն մինչեւ սեղանին ծայրն, ինչպէս որ բացատրուեցաւ գնդակներուն առթիւ:

Աւարտի երգ:



ԵՐԿՐՈՐԴ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ

ԽՈՐԱՆԱՐԴ

Գունդը՝ զոր հարկ էր նախ եւ առաջ ներկայացունել իր ամենապարզ ձեւոյն համար, իր անընդհատ մակերեւոյթին պատճառաւ վերլուծութեան սակաւ ինչ նիւթ կ'ընծայէ: Ընդհակառակն, խորանարդն իւր կանոնաւոր շինուածքովը տղային տարրեր կ'ընծայէ քննութեան: Այս անգամ՝ խորանարդը պիտի ըլլայ մեր ուսման առարկայն, սակայն գունդն ալ իբրեւ զոր բաղդատութեան պէտք է սեղանին վրայ մնայ, որպէս զի կարելի ըլլայ որոշակի ցուցնել համագամանքներն հակապատկերով:

Տղայք, վարժուհւոյն օրինակին ու հրաւերին համաձայն, տուփերը կը բանան:

«Խորանարդը հանեցէք տուփէն:»

Վարժուհին կը հանէ իր տուփէն խորանարդը եւ զայն կը ներկայացունէ լարէն կախուած: Նոյնը կ'ընեն եւ տղայք: Այսպէս կ'ստուգուի թէ տղայք կրցած են ճանչնալ խնդրուած հաստատուն մարմինն:

«Խորանարդը սեղանին վրայ դրէք. — Գունդը հանեցէք տուփէն. — Տուփը նորէն գոցեցէք. — Խորանարդն ու գունդը տուփին վրայ դրէք, իրարու քով:»

Այսպէս տղոց աչքին պիտի զարնէ նախ եւ առաջ ձեւի տարբերութիւնն:

«Խորանարդն առէք ձեր ձեռքին մէջ. հիմայ պիտի քննենք իր ձեւը:»

Բացատրեցէք այս առթիւ թէ ի՞նչ է երես մը. համրել տուէք խորանարդին

երեսները, Յեւոյ, որովհետեւ կարեւոր է զի դիտողութեամբ ստացուած ծանօթութիւնն յիշողութեան մէջ տպաւորուի բանաձեւով մը, կրկնել տուէք ամենուն։

« Խորանարդն վեց երես ունի։ »

Մտաւ պտայունելով երեսներէն միոյն վրայ, կը տեսնուի որ ուղիւ, հարք է։ Նոյն փորձը միւս երեսոց վրայ ալ կըրկնուելով, կը հաստատուի անոնց ամենուն ալ հարքութիւնն, ճափաւակութիւնն։ Սորվեցուցէք բուն բառը։

« Խորանարդին երեսները մակաւորակ են, » — եւ ծանօթութիւնն բազդաբանութեամբ ձգեցելու համար, ըսէք. — « սեղանին, տուփին եւն. երեսներուն պէս։ »

« Դրէք խորանարդը սեղանին վրայ։ » Խորանարդը ալէկ մը կը կենայ իր երեսներէն միոյն վրայ. որ լու մը կը նստի սեղանին վրայ։ Կայուն է ան։

« Դրէք գունդը սեղանին վրայ։ » Կը զլորի, փաքրիկ մասով մը միայն կը զպչի սեղանին։ Կայուն չէ։

Այսպէս, այս դիտողութեան միջոցաւ, կոր մակերեսոյթի եւ մակարդակ մակերեսոյթի բնութիւնն քաջ բմբունել տալէ յետոյ, բացատրեցէք կոր, բոլորչի բառի նշանակութիւնն, հակադրութեամբ ուղիւ, հարթ բառին։ Այս ծանօթութիւններն հաստատող բանաձեւերը կրկնել տուէք։

« Խորանարդին երեսներն մակաւորակ են։ »

« Գունդին մակերեսոյթն կոր է։ »

Մակարդակ երեսներ ունեցող առարկայներ յիշատակել տուէք մանկան այն առարկայներու մէջէն որք կը շրջապատեն զինքը, եւ ի հակառակէն, առարկայներ որոց մակերեսոյթն կոր ըլլայ։

Կարելի է վերջացունել այս վարժութիւնն, խորանարդով կատարել տալով Գնդակի խաղուն մէջ նշանակեալ շարժմանց շարքերէն մին։

Տուփերու վերադարձ։ — Փակման երգ։

ԵՐՐՈՐԴ՝ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Անկիւնագիծք (les arêtes) եւ անկիւնք

Միայն խորանարդն զուրս հանուած է տուիլն։

Խնդիր է այժմ դիտել տալ անկիւնագիծերն, այսինքն այն գիծերն որք սահման կը դնեն խորանարդի երեսներուն եւ ասոնց զիրար կարելն յառաջ կուգան։

« Խորանարդն տուէք ձեր ձեռքին մէջ։ Անոր երեսներէն մին դէպ ի ձեզ դարձուցէք։ Այդ երեսին շրջանն ըրէք մատով։ (Վարժուհին պատուէրին հետ օրինակն ալ կուտայ)։ — Թեթեւակի մատս կը կոխեմ, մատիս տակ սուր բան մը կը զգամ։ 4 անգամէն շրջանը կ'ընեմ. 1, 2, 3, 4։ Այսպէս կը հետեւիմ խորանարդի երեսին շրջագիծին, իւրաքանչիւր սուր եզր կը կոչուի խորանարդին մէկ անկիւնագիծը։

« Հիմայ պիտի համբնք խորանարդին անկիւնագիծերն. 1, 2, 3, 4, վրան. 1, 2, 3, 4, տակը. 1, 2, 3, 4, բոլորտիքը։ Ընդ ամէնը, 12 անկիւնագիծ։ »

« Խորանարդն ունի 12 անկիւնագիծ։ »

« Գունդն ալ անկիւնագիծ ունի՞ — Ոչ։ »

Հիմայ դնել տուէք մատը խորանարդին անկիւններէն միոյն վրայ, սուր ծայրը զգացնելու եղանակաւ. ըսէք թէ այս սրածայր մասը կ'անուանուի խորանարդին մէկ անկիւն (հասկսուց անկիւն)։

Գտնել տուէք խորանարդին ութ անկիւններն, յետոյ կրկնել տուէք։

« Խորանարդն 8 անկիւն ունի։ »

« Գունդն ալ անկիւններ ունի՞ — Ոչ։ »

« Փորձեցէք դնել խորանարդն անկիւնագիծի մը վրայ։ Զի կայնիր. կայուն չէ։ — Իր անկեան ծայրին վրայ (հաստատուն անկեան դադարին)։ Անկարելի է անոր ալ վրայ կեցունել զայն։ Իր մէկ երեսին վրայ նստած ատենը միայն կայուն է։ »

Վերջացնել քաղուածով մը։

« Խորանարդն քանի՞ երես ունի. քանի՞ անկիւնագիծ. քանի՞ անկիւն։ »

Տուփերու վերադարձ։ — Փակման երգ։

ԶՈՐՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Գ Լ Ա Ն

Այժմ պիտի քննենք գլանը, խորանարդին հետ բաղդատու թեան գնելով զայն։ Ուստի պէտք է դուրս հանել տալ տուփէն այս երկու հաստատուն մարմինները։ Տղայք պարտին նմանութիւն մը փնտռել այս երկու առարկայներուն մէջ։ Օգնեցէք իրենց այդ նմանութիւնն գտնելու։ Երկու մակարդակ երեսներ() «երկու ծայրերն»։ Դիտել տուէք այն կոր մակերեւոյթն որ կը կազմէ գլանին «չըրջանն»։

«Գլանն ալ, գունդին պէս, կոր մակերեւոյթ մը ունի, սակայն նման չէ գունդին մակերեւոյթին»։

«Գլանին մակարդակ երեսներէն մին լաւ դիտեցէք, — Անոր շրջագիծը կը լըրէ։ Մտտով անոր շրջանն ընելով կ'զգացուի սուր «եզը» միայն, անկիւն չ'ունի ան։ Կրնանք անոր շրջանն ընել «մէկ անգամէն», մատը դարձնելով, եւ ոչ թէ խորանարդին համար եղածին պէս, չորս ուղիղ շարժմամբ։ (Դիտողութիւնն կրկնել տուէք խորանարդին վրայ)։

Գլանին երեսին շրջագիծը անկիւնագիծ չի կոչուիր։

«Գլանն անկիւնագիծ չ'ունի։ Գլանն անկիւն չ'ունի։ Գլանն «ուղիղ» գրէք սեղանին վրայ։ Իւր մակարդակ երեսներէն միոյն վրայ կը կենայ, լաւ մը կը նստի, կայուն է»։

«Պառկած գրէք զայն։ Իր կոր մակերեւոյթին վրայ է հիմայ. կը գլորի, պինդ չի կենար»։

«Փորձեցէք գնել զայն իր «եզերքին» վրայ (չեղակի)։ Զի կրնար կենալ, կ'իյնայ»։ Ամիտիւնք։ Գլանն երկու մակարդակ երեսներ ունի երկու ծայրերն. այս երեսներու շրջագիծը կը լըրէ։ Կոր մակերեւոյթ մը ունի բոլորովին։ Անկիւնագիծ չ'ունի, անկիւն չ'ունի։

Իրր մարմնամարդական վարժութիւն

գլանով կատարել տուէք Գնդակի խաղուն շարժմանց շարքերէն մին։

Աւարտի երգ։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՎԱՐԺՈՒԹԻՒՆ

Նրեք հաստատուն մարմիններու բաղդատու թիւնն

Երեք հաստատուն մարմիններն շարուած են տուփին վրայ, գլանն գունդին ու խորանարդին մէջ տեղը դրուած։ Այս հաստատուն մարմնոց ձեւերուն մէջ արդէն իսկ հաստատուած առարկերութիւններն ու նմանութիւնները գտնել տուէք։

«Գլանն երկու մակարդակ երեսներ ունի, խորանարդին պէս։ — Գունդին պէս կոր մակերեւոյթ մը, Գլանն կրնայ գլորիլ գունդին պէս, կրնայ կայուն մնալ խորանարդին պէս, եւայլն եւայլն»։

Նիւթոյն գալով, դիտել տուէք նոյնպէս թէ զանազան ձեւեր ունեցող այս երեք առարկայներն մի եւ նոյն նիւթ է, փայտէ են։

Մանուկն կը վարժի այսպէս դիտել ու բաղդատել երկուքէն աւելի առարկայներ միանգամայն։

Այս վայրկեանէն սկսեալ կրնանք դիտել տալ մանկան հետաքրքրական արդիւնք մը շարժման մէջ եղող մարմնոց մը երեւոյթներուն վրայ. դիտողութիւն՝ որուն վրայ չպիտի խօսինք առ ժամա, կարելի է դառնալ յետոյ ի նոյն, մեծ օգուտ մը քաղելու համար անկից։ Հոս աւանդուածն ակնարկի կորովութեան համար վարժութիւն մըն է մանաւանդ։

«Գունդը վերցուցէք լարէն. շուտ շուտ դարձուցէք զայն շանչանի պէս։ Երբ գունդը կը գտնուայ այսպէս առանց տեղափոխելու, կ'ըսուի թէ ինքն իր վրայ կը դառնայ»։

Տղայն կրնայ մէկ ձեւով գունդը բըռնել, միւս ձեւով պրկել կրկնակ լարը, ապա թողնուլ որ գնդակը՝ կախուած՝ դառնայ։

Դիտել տուէք որ գունդն, երբ ինքն

(*) Խաղիսխի

իր վրայ դառնայ, միշտ նախն կ'երեւի հանգիստ կեցող գնդակին:

«Գունդը վարդրէք: Դարձունենք գլանն ինքն իր վրայ:»

Մուցուած չէ անշուշտ թէ կախելու յատկացուած լարը հաստատուած է գլանին խարխուղներէն միոյն կեղորոնն: Գլանն ալ երեւոյթը չի փոխեր այսպէս դառնալով:

«Դարձունենք խորանարդն ինքն իր վրայ շուտ շուտ:»

Դիտել տուէք թէ այս պարագային մէջ կարելի չ'ըլլար այլ եւս յստակ կերպով որոշել խորանարդին ձեւը. իր անկիւնագիծերն, իր անկիւնները կ'անհետանան եւ իրարու հետ կը շփոթին. կը կարծուի տեսնել «մէջ տեղը» գլան մը (խորանարդը կախուած է երեսներուն միոյն կեղորոնէն): (*)

«Հիմայ ուրիշ խաղ մին ալ պիտի ընենք: Գլանն առէք: Ճարմանդէն լարը հանեցէք: Կոր մակերեւոյթին վրայ հաստատուած ճարմանդէն անցուցէք լարը: Պրկեցէք լարը. գլանը դարձունենք:»

Գլանն այսպէս կախուած ըլլալով եւ շուտ շուտ դառնալով, կը կարծուի տեսնել «մէջ տեղը» գունդ մը (**):

Կրնաք դիտել տալ նաեւ խորանարդին դառնալը՝ կախուած, 10. Անկիւնագիծերուն միոյն մէջ տեղէն, 20. Հաստատուն անկեանց մէկէն: Տղայն պիտի քննայ ըմբռնել երեւնալիք ձեւն (չարժման մէջ

երեւան եկող հաստատուն մարմին մը): Սակայն այս ձեւն բազմակնճիւռն է եւ տեղի չկայ զայն վերլուծելու եւ ոչ ալ անոր անուն մը տալու:

«Հարերը հանեցէք, տուփին մէջ դրէք զանոնք: Բան մը պիտի շինենք հիմայ...»

Իբր նախնական փորձ, կը դրուի.

10. Գլանը՝ խորանարդին վրայ. երկուքն ալ կայուն են այս վիճակին մէջ.

20. Խորանարդը՝ գլանին վրայ.

30. Գունդը՝ խորանարդին վրայ.

40. Գունդը՝ գլանին վրայ:

Գունդը կրնայ գլորիլ. սակայն քիչ մը ճարտարութեամբ կարելի է կեցունել զայն:

«Փորձենք դնել խորանարդը գունդին վրայ: — Անկարելի է հոն կեցունել զայն: — Գլանը: — Նոյնպէս անկարելի:»

«Դնենք հիմայ խորանարդը տակը, գլանը խորանարդին վրայ, գունդը գլանին վրայ, ճիշդ «մէջ տեղը»:»

Այսպէս կառուցուած փոքրիկ շէնքը (մղանաքար մը, երկրագունդ մը պատուանդանի մը վրայ, եւայլն) առիթ կ'ընծայէ դիտել տալու մանկանց թէ տուներն, պատերը, եւայլն, եւայլն շինուած են իրարու վրայ եւ իրարու քով շարուած շատ մը կտրուիւն, որոնց ամենքն ալ ի միասին պատահեալ եւ հաստատեալ են: Այս կտրուանքն առարկային մասերն են: Մասերու միացումովը կազմուած առարկայն ամբողջ մըն է: Ամբողջը կազմուած է մասերէ: Ամբողջ մը կազմել մասերով, կը նշանակէ՝ յօրինել, շինել, Ամբողջը կազմող մասերը գտել կը նշանակէ՝ անել, քանդել:

«Քակեցէք ձեր պզտիկ շէնքը. անոր մասերը տուփին մէջ դրէք:»

Տուփերու վերադարձ. — Երգ:

8. ԷՏԻԼԵԱՆ

(*) Այս դիրքին մէջ դառնալով, անկիւնագիծերը կ'արտադրեն արտաքին զան մը՝ թափանցիկ, հազիւ ըմբռնելի. շարժման մի եւ նոյն արդիւնքն երեւան կը բերէ այս ծաւալին մէջտեղ ուրիշ զան մը, անթափանցիկ, երեսներու դրից կտրուած քներէն յառաջ եկած: Այս վերջինն է որ ամենէն դիւրաւ կ'որոշուի, եւ զոր մանկան աչքն պիտի ըմբռնէ:

(**) Այս առանցքին վրայ դառնալով, զանն իր առերեւոյթ շրջագիծին յաջորդական դիրքերուն մէջ, յառաջ կը բերէ սակաւ ինչ խառնաշփոթ ձեւով, թափանցիկ, հազիւ տեսնելի հաստատուն մարմին մը. կեղորոնին մէջ, կոր մակերեւոյթին դրից կտրուած քները կ'երեւցունեն միանգամայն, անթափանցիկ, յստակ, դիւրաւ որոշելի գունդ մը: Այս ձեւն է որ մանկան աչքին պիտի զարնէ:

Զ Ա Ն Ա Զ Ա Ն Ք

ՄԱՍԻՍԻ ՌԵԴԱԿՏԻԱՅ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Արձակուրդի խնդիր

Ուսուցչին Գ. Կ. Ոսկերչեան ստորագրութեամբ նամակ մը՝ կը պատմէ արձակուրդի խնդրոյ մ'առթիւ քաղաքին ազգային վարժարանաց ուսուցիչներուն կրած նեղութիւնները։ Ուսուցիչները, որք խրաւրու հմուտ թենէն օգտուելու համար այժմ իրենց շարժական ուսուցչական ժողովն ունին», թէ եւ դիտեն թէ՛ կազմ. Կանոնադիրը ազգային բոլոր նախակրթարանաց համար յուլիս 15 էն մինչեւ օգոստ. 15 ընդհանուր արձակուրդ կը տրամադրէ, բայց դարձեալ գրով դիմում կ'ընեն Տեսուչ եւ Վերահսուչ Հարց եւ մէկ ամիս հանգստեան արտօնութիւն կը խընդրեն, արձակուրդը յուլիս 15 ին սկսելու տեղ՝ հաւանելով՝ սկսիլ օգոստոս 1 ին, հաճոյակատարութիւն մ'ընելու համար տեղւոյն այգեպան մասին «որ յուլիսի մէջ այգեկութի գրադում չ'ունի»։ Տեսչութիւնը կուտայ խնդրուած արտօնութիւնը։

Բայց ահա՛ հազիւ սկսած է արձակուրդն՝ յուզում մ'է կ'սկսէ հասարակութեան մէջ ընդդէմ խեղճ դաստառաց որք կ'սկսին բամբասուիլ իրրեւ «անձնապաշտ» դասակարգ մը։ Ի՞նչ բսել է ամսուան մը հանգիստ։ Ո՞չ ապաքէն արդէն տարուան մէջ ա՛յնքան կիրակիներ ու տօնի օրեր կան, որոց դուսմարն օրինաց պահանջած արձակուրդին երկպառակէն ալ տւելի է։ Ու հասարակութեան մէջ կ'սկսի ստորագրուիլ հանրագիր մ'որ 32 անձանց անուններով կը ծածկուի, որոց մէջ կան նաեւ վարչական ժողովոց անդամներու անուններ։ Հանրագիրը, որ ստատիկութեամբ կը մերժէ ամօրեայ արձակուրդը, «իրրեւ վերջին զոհողութիւն» կ'ըսէ. «եթէ անպատճառ արձակուրդ մը պէտք է, 15 օր հերի՛ք. այն ալ Սեւ-Կա-

մուրջի այգիներուն ժամանակն ըլլալու պայմանաւ, որ սեպտեմբերին կը հանգիւրդ»։

Դժբախտ ուսուցիչներուն վայելել սկսած դոյզն հանգիստը իրենց քթէն բերնէն պիտի գար, եթէ բարեբախտաբար Գեր. Առաջնորդ Սրբազանը, Տ. Խորէն Մխիթարեան, թէ եւ հրաժարած, միջամտելով, չպաշտպանէր նոցա իրաւունքն ու բորոքութեամբ կը բերը մի քիչ չհանգարտէր։ Բայց կրակը մսիրի տակ ծածկուած է միայն. յառաջիկային պիտի արծարծի նա անշուշտ եւ վարժապետաց այդ ֆեֆին աչք ունեցողները պիտի շարժին վերստին անպատճառ։

Արդ նամակագիրը, որ մանկավարժական թերթը կը նկատէ իրրեւ մեծ նեցուկ մը «ու՛մ պիտի ապաստանին կրթական պաշտօնեայք՝ պաշտպանուելու համար հանդէպ նախապաշարու մէ թեւադրեալ անխմատ զրկանաց», կը հարցնէ՝ մեզ, փափաքելով ընել ու հետեւիլ մեզ.

Ա. Թէ արձակուրդը այգիներուն համար կ'ըլլայ թէ տաքերուն։

Բ. Արձակուրդի միամետայ տեւողութեան մասին երբ խնդիր ծագի, ուսուցիչք պարտին տեղի տալ թէ պիտի բռնէ մանկավարժական պահանջը։

Կը պատասխանենք.

Ա. Արձակուրդը այգիներուն համար չ'ըլլար անշուշտ, այլ տաքերուն։ Տաքին դժուար է աշխատիլ, մանաւանդ մոռուորապէս աշխատիլ. եւ երբ մեր մոռացած եւ բերենք դպրոցներու յաճախ նեղ սրահներուն մէջ խռնուած տղայոց բողմու թիւնը, դպրոցական կարգապահութեան պահանջմամբ քիչ շատ ալ բռնազրօտուած, դիւրին է խորհիլ, քիչ մը գութ ունեցողին համար, թէ ամառուան տաքերուն ի՞նչ մեծ պէտք մ'է հանգիստը, ո՛րչափ կարեւոր մոռաց եւ մարմնոյ կըրկնակի առողջութեան համար։ Եւ այս պէտքը ա՛յնքան տղայոց համար է որքան վարժապետաց, որոց ոչ նուազ անդամներ կը գտնուայ աշխատութիւնը այդ եղանակին՝ դասարանաց խեղճ ու կ'միջոցառին մէջ, եւ որոց տարուան աշխատութիւն-

ներէն սպառեալ ուժերը հանգստեամբ վերանորոգուելու կը կարօտին: Ուրեմն ամառնային արձակուրդը եթէ ամառէն յետոյ տեղի ունենայ՝ իր նշանակութիւնը կը կորսնցնէ, չի ծառայեր իր նպատակին: Գիտեմք որ արդէն շատ դժուար է բան մը մէկէ աւելի նպատակի ծառայեցնել, եթէ տաքերուն համար հանգստեան մը ընդհանուր այգեկութիւն աշխատութեանց համար դասերու դադարի մը տեղական կրկին պէտքերն իրարու զուգադիպէին, շատ լաւ կը լինէր, մէկ քարով երկու թռչուն միասին կը զարնուէր: Բայց արի՛ տես որ տաքերուն ամենէն սաստիկ միջոցը յուլիս 15 էն մինչեւ օգոստոս 15 է, մինչ այգեկութիւն ժամանակը աշնան սկզբին կը հանդիպի: Այս պարագային մէջ եթէ տեղական պայմանները կը պահանջեն, յետ ամառնային կանոնական արձակուրդին՝ քանի մ'օրեր ալ բացառիկ դադար մը կրնայ տրուիլ վերամուտէն յետոյ:

Բ. Ամառնային մեծ արձակուրդի միամսեայ տեւողութիւնը սահմանուած է օրինօք բոլոր դպրոցներուն համար, եւ այս միևնույն մ'է գրեթէ: Եթէ տաքերը աւելի կարճատեւ ըլլային՝ կրնար այս տեւողութիւնը նուազիլ, բայց յայտնի է որ մեր կլիմաներուն տակ ամենէն մեծ տաքերը յուլիս եւ օգոստոս ամսոց մէջ կը լինին: Ուրեմն ամառեայ արձակուրդի տեւողութիւնը նուազեցնելու ելնել օրէնքին ապահովել ուզած բարիքն արգելու է, բաց անտի որ ապօրինաւորութիւն մ'է ինքնին, ու ամէն ապօրինաւորութիւն դատաւարտելի է ու իրաւունք կուտայ բողոքոյ: Ուստի եթէ այս մասին խնդիր ծագի, ուսուցիչք, առանց ուղղակի անհնազանդ գտնուելու Հոգաբարձութեան կամ թաղ-կորհրդոյ, կատարեալ իրաւունք ունին բողոք բառնալու գաւառին կամ կեդրոնին Ուսմ. կորհրդոյն, որ անշուշտ կը փութայ տալ յարգել օրէնքը եւ գործադրել օգտակարն ու բանաւորն: — Բայց, Ուսմ. հայր դառնալով, կը յուսացուի որ, ինչպէս այս անգամ, ուրիշ անգամներ եւս վարչական մարմնոց իմաստու-

թիւնն ու օրինաւորութիւնը տեղի չթողուն որ խնդիրը տեղական շրջանակէ դուրս ելնէ:

2. Դպրոցական պատիժները

Քասթէմունիի դպրոցին ուսուցիչներէն Արսւն Էփէնի Յովսէփեան կը յայտնէ նամակաւ մը թէ մի քանի կրթասէր անձանց հետ կարծեաց փոխանակութիւն մը ունեցեր է սա խնդրոյն վրայ թէ «ո՛րք են այն բարոյական յարմարագոյն պատիժները զորս մանկավարժութիւնը կը թոյլատրէ սահմանել ի հարկին յանցաւոր մանկան», եւ թէ չկարենալով վերջնական համաձայնութեան մը յանգիլ, հարկ համարած է դիմել խմբագրութեանս կարծեաց, խորհելով որ «թերեւս այսու այլոց կրթական պաշտօնէից ալ տածած հետաքրքրութիւնը յագուրդ կ'ստանայ»:

Հարցը մանկավարժութեան կարեւորագոյն հարցերէն մին է ու շատ վէճերու եւ տարաձայնութեանց առարկայ եղած: Բայց վիճաբանող տեարք արդէն լաւագոյն լուծման մը մօտեցած կը համարուին, քանի որ իրենց խնդիրը կը սահմանափակեն քառոյսական, մանկավարժութեան քոյրասրեալ եւ ի հարկին սահմանելի պատժոց մէջ: Ըսել է՝ կը մերժեն մարմնական պատիժները, կ'ընդունին՝ որ նոյն իսկ բարոյական պատժոց մէջ կան հակամանկավարժականներ, եւ վերջապէս կը խորհին որ պատիժք ի հարկին միայն պէտք է որ սահմանուին, եւ ո՛չ յամենայն դէպս, յախուռն ու անխորհուրդ:

Նախ եւ յառաջ, ըստ մեզ, դպրոցական պատիժին բնութիւնն ու դերը պէտք է ճշդել: Դպրոցին մէջ պատիժը պէտք է հասկնալ բողոքովին այն իմաստով որով կը հասկցուի ընկերութեան մէջ: Անշուշտ ո՛չ. քաւութեան պէս բան մը չէ այն որ կը հարկադրուի յանցաւորին վրայ որպէս զի քաւէ իւր յանցանքը, տեսակ մը վրէժ յանցաւորէն իր դործած չարեաց փոխարէն: Տղան յաճախ բառին բուն նշանակութեամբ յանցաւոր չէ. դեռ իր ըրածին կատարեալ պատասխանատու չէ, վասնզի

դեռ իր բանականութիւնը եւ իր կամքը անզարգացեալ անկազմ վիճակ մ'ունին։ Ասկէց զատ դաստիարակը անպատճառ դատաւոր մ'ու պատժածու մի չէ։ ուսուցանող, առաջնորդող, օրէնսուսոյց մ'է մտնաւանդ եւ բացառարար, ի հարկին եւ ի հարկէ միայն դատաւորի ու պատժածուի դեր կ'ստանձնէ։ Նա ակամայ սլարտի պատժել, սովորաբար խրատատու, զգուշացուցիչ, նա, որպէս Հրեայ վարդապետք կ'ըսէին, «Երկու ձեռքով սլարտի դգուեւ եւ մէկ ձեռքով միայն պատժել»։

Ուսուցիչը պաշտօն ունի կրթելու մտնուելը, որ մաքրով ու սրտով ապրելու և առաջնորդուելու սահմանուած էակ է։ ապա և անոր բարոյական կրթութիւնը անոր մտքին ու սրտին վրայ ներգործելով կրնայ ի գործ դրուել, ուսուցմամբ, ներշնչմամբ, օրինակաւ բարւոյն եւ առաքինութեան։ Տակաւ առ տակաւ կը հաստատուին բարի սովորութիւնները, սիրտը կամաց կամաց կը բացուի ազնուական զգացումներու եւ փորձով ու կրթութեամբ (instruction) բանականութիւնը կը սովորի հետզհետէ ընտրել լաւը յուրէն, եւ բնազդական բաղձանքներուն մէջէն քիչ քիչ կը կազմի երեւան կուգայ կամք մը, բարւոյն գիտակցօրէն ընտրող եւ զայն գործադրելու համար բաւական ոյժ ունեցող։ Այս աստիճանական բարոյական զարգացումը փափկութեամբ ու խմսատութեամբ առաջնորդելի գործ մ'է։ Տխմար ու անսիրտ ըլլալ է միանգամայն՝ չարչարելու բռնազրօսել քնքուշ անգիտակ հոգին՝ պահանջելով անկէց ու բռնի ջանալով ստանալ այն կատարելութիւնները զորս դեռ չէ կարող ունենալ։ Իրաւ ձեռք մը կրնար առ յաւէտ ճշմել չորցնել այդ նորարոյս տունկը, առ յաւէտ թիւր ու հաշմ ընել զայն։ Մանկան բնութեան անգիտութեամբ եւ անոր անհամեմատ ու հակառակ կերպով եղած անմիտ պահանջմունք եւ բռնութիւնք մէկ կողմէն մանկական հասակի զուարթութիւնն ու երջանկութիւնը կը փճացնեն, եւ միւս կողմէն կը վնասեն անոր դաս-

տիարակութեան, երկիւղի զգացման տակ անոր ուշեղը եւ սիրտը ճնշելով, անոր կամքը սրկելով եւ ատելութիւն ներշնչելով անոր դասի ու դասատուի դէմ։ Ի՞նչ բանէ յառաջ կուգայ վարժապետին խաղ խաղալու հաճոյքը որ սովորական է շատ տղայոց, եթէ ոչ այն ատելութենէն զոր ազգած է իրենց անոր խիստ ու բռնաւոր վարմունքը։ Շատ չընել որ վարժապետներ կը վախային փոքրոցներէն անցնելու։ աներեւոյթ փոքրիկ ձեռներէ արձակուած քարերու կարկուտ մը կը բռնէր զանոնք յաճախ եւ չարածձի ձայներ անձանօթ անկիւններէ ելած ու ծիծաղելի համարք մը կազմած հայ հուշ կ'ընէին զիրենք։ «Պատուելի՛, պատէ՛ն վե՛ր ե՛լի՛»։ Յերեկն ի բուն ճնշուած տղաքներն էին որք, փողոցէն ազատագրեալ, իրենց ոխը կը լուծէին ահել պատուելիէն։

Երբ ուսուցիչն իր պաշտօնին գիտակցութիւնն ունի, ինչպէս նաեւ մանկան բնութեան եւ զարգացման օրէնքներուն գիտութիւնը, յայնժամ արդէն ինքնին մեծապէս կը նուազի պատժելի համարուած դէպքերուն թիւը։ Գիտէ համբերել, սպասել, ներել, անտես ընել, գոհանալ կրկնելով դասն ու խրատը, ազդարարելով, յորդորելով, բնական գտնել շատ բան ու չգալարնալ ընդունայն, հսկել ու զգուշացնել կանխաւ՝ յետոյ պատժելու տեղի չթողլու համար, ներկային չտուածը կամ տալ չկրցածը ապագայէն ու նորանոր ջանքերէ յուսալ եւն։ Գլորցին մէջ ո՛չ թէ իր կամքին եւ իր քմահաճոյցն է որ հնազանդիլ կը պահանջէ աշակերտներէն, այլ զպրոցին օրինաց որք պարտաւորութիւն մը չեն հարկադրեր անոնց վրայ որ անոնց տարիքէն ու կորողութենէն վեր ըլլայ։ Ի նկատ գիտէ ստնուլ մանկութեան անհանգստութեան բնաւորութիւնը, առատաւեղ կեանքի մ'անխորհուրդ յորդումը, անոր մշտաւ օրժ հետաքրքրութիւնը, դիւրախոնջ ու շաղկապութիւնը, եւ դիւրափոփոխ արտոյտակները, եւ տղայոց գործած թերութիւններուն մէջ ընել տտնց բաժինը,

ինչպէս նաեւ իր ի գործ դրած մեթոտներուն մէջ գոհացում տալ անոնց եւ օգուտ քաղել անոնցմէ եւ ուզել զայնս՝ փոխանակ անխորհրդարար բռնազբօսել ջանալու զբնութիւնը։ Ո՛րչափ արդարեւ կը փոխուին իրերը . վարժապետը չարչարելու համար ստեղծուած կարծուող այն սատանիկները մէկ մէկ հրեշտակ կը դառնան . գոհ ու երջանիկ են , ապա եւ բարի են . ու նաեւ արեւի խելացի , վասն զի բնական ճամբու մէջ են եւ չուարթութիւնը պայծառութիւն մը կուտայ իրենց մտքին , Համակրական կապ մը կայ գաստիարակին ու աշակերտաց մէջ . ասոնց վստահալից նայուածքները , ընտանի վարժուողը կ'ըսեն դաստիարակին թէ կը սիրեն զինքը , եւ դաստիարակը գոհ է անոնց սիրով որ ա՛յնքան դիւրին ու քաղցր կ'ընէ իր գործը։ Այսպիսի ճամարտիւ մանկավարժական շրջանակի մը մէջ տխուր՝ այլ բացառիկ հարկի մը , դեղի մը հարկաւորութեան պէս միայն կրնայ ներկայանալ պատժի պէտքը։

Այս պէտքը կը ծագի երբ աշակերտ մը յամառ անկարգութեամբ մը կը խափանէ դասատուն իր դասն ընելէ , կը խանգարէ դասարանին բարեկարգութիւնը , կ'արգիլէ իր ընկերակիցները դասէ կամ սերտողութենէ։ Այս պէտքը կը ծագի դարձեալ , երբ աշակերտը նիւթական փնտս մը կը հասցնէ իր ընկերակիցին կամ զպրոցին , կը գողնայ , կը պատռէ , կը կոտրէ եւն . երբ կը փնտսէ իրեն ու պրոցական կեանքը անօգուտ կը դարձնէ իրեն ծուլութեամբ ու անճշդութեամբ , հակառակ կանխագոյն խրատուց ու ազդարարութեանց . երբ վիրաւորիչ վարմունքով իր ընկերակիցաց բողբոխ տեղի կուտայ , եւ երբ յարգանաց պահատութիւն կ'ընէ առ իւր ուսուցիչս յամառ անհնազանդութեամբ կամ անարգական խօսքով։ Բոլոր այս պարագայներուն մէջ անմիջական զուգման ու դարմանարար տնօրինութեան մը պէտքն ակներեւ է։ Երբ պրոցին կամ դասարանին մէջ կարգապահութիւն չըլլայ , դպրոցն անկարող կ'ըլլայ իր նպատակին ծառայելու։ Դպրոցին ու աշակեր-

տաց գոյքերը պէտք է որ պահպանուին , վասն զի անոնք ուսուցման կը ծառայեն եւ աշակերտը իրաւունք ունին պահանջելու որ ուսուցիչը արգիլէ իրենց զոյր կորուստը կամ խաթարումը ուրիշ աշակերտներու ձեռքով։ Երբ աշակերտը իր ծուլութեան ու պարտազանցութեան մէջ անմիջական կերպով չարգիլուի , դպրոցին գործը մեծ մասամբ ապարդիւն կը լինի անոր վրայ։ Դարձեալ աշակերտաց արդարութեան զգացումը անմիջական գոհացում կը պահանջէ երբ իրենց ընկերակիցներէն մին զիրենք բիրտ խօսքով կամ վարմունքով ցաւեցնէ . հակառակ պարագային՝ կը բերուին անձնապէս արդարութիւն ի գործ դնել եւ վէճ ու կռիւ կը խռովեն դասարանը կամ բակը , տեղի կրնան տալ ցաւալի միջադէպերու եւ հետեւանաց , եւ սղոց մէջ կը խանգարի ներդաշնակութիւնը , — բան մը որ պիտանի է դարձեալ դպրոցական միջնորդտին հանդարտութեան , զուարթութեան եւ բարոյացուցիչ ներգործութեան։ Իսկ ուսուցչին դէմ տեղի ունեցած անարգութեան ու խեղութեան գործը եթէ անմիջապէս նկատողութեան առնուելով դարմանել չփութացուի , ուսուցչին վարկը կը կոտրի աշակերտաց առջեւ , անոր բարոյական հեղինակութիւնը կը նուազի կամ կը կորսուի , ինչ որ դարձեալ ուղղակի կը փնտսէ ուսուցչին ազդեցութեան , անոր ուսուցման արդիւնաւորութեան։ Տղայոց չաաթ երուլութիւններուն համար պիտի թողունք որ ժամանակը գործէ , մեր դասերն ու խրատներն ու յորդորներն իրենց ազդեցութիւնն ի գործ դնեն աստիճանարար անոնց մտաց ու սրտին վրայ , եւ առ առաւելն յանդիմանութեան ու պարսաւի պիտի դիմենք մերթ՝ անոնց արժանապատուութեան զգացումէն օգտուելու եւ նոցա ուղղորդելու համար։ Վերոյիշեալ պարագաներուն մէջ , սակայն , չենք կըրնար ո՛չ այդ համբերութիւնն ի գործ դնել եւ ո՛չ իսկ գոհանալ յանդիմանութեամբ , թէպէտ յաճախ այնու սկսիմք . վասն զի , ինչպէս տեսանք , դպրոցական շրջանակին մէջ անկարգութիւն , նիւթական փնտս ,

վիրաւորութեալ եւ կրթական գործին կատարման ու արդիւնաւորման արգելք ու խտրանութեան ունեց անմիջական հետեւանքներն են :

Այս պարագայներուն մէջ է ահա՛ որ պատիժը իր դերը պիտի ունենայ, իրեւանմիջական ազդու տնօրինութիւն ի դարման կամ ի խտրանութեան չարեաց: Բայց ի՞նչ կրնայ ու պէտք է լինիլ այդ պատիժը, ահա խնդիրը: Առաջին պայմանը ա՛յն է որ տնօրինուած պատիժը քանաւոր ու արդար ըլլայ, այսինքն կարենայ ուղղակի ծառայել իրրեւ դարման այն չարեաց զոր կ'ուզեմք կարճել եւ նկատուիլ նոյն իսկ յանցապարտ աշակերտին կողմէ իբրեւ ինքնարեւ ու հարկաւոր հետեւանք իւր վարմանց: Այն ատեն պատիժն ընդունող աշակերտին համար չափաւոր կրնայ համարուիլ այն իրրեւ ուսուցչին անգութ քմահաճոյից մէկ արդիւնքը եւ չափաւոր գրգռէ զայն նորա դէմ, վասնզի իր վարմունքին ու պատժոյն մէջ գտնուած բանաւոր ու արդար ծանշութիւնը պիտի գգացնէ իրեն անոր հարկաւորութիւնը եւ պիտի սովորի ինքզինք մանաւանդ մեղադրել: Մեր առաջարկածը բաւին բուն նշանակութեամբ պատիժ չէ, այլ դարմանում, եւ թէ եւ մէկ նայուածքով բնական ստատիք, բնական հակադրութեանց դրութեան կը նմանի, բայց բուն այն չէ, այլ աւելի անոր գործադրութեան տեղի չը թողլու համար դատաւորին միջամտութեամբ ի գործ դրուած արդար ու բանաւոր միջոց: Եթէ թոյլ տայինք որ ծոյր իր ծուլութեան հետեւանք, զոր օրինակ, սպառաշունչ մէջ տգէտ ու ողորմելի մնալով, պատժուէր, ահա՛ այդ կը լինէր բնական հակադրութիւնը, բնութենէն հարկադրեալ պատիժը, բայց մենք կ'ուզենք որ մեր պատժով ծոյն արգիլուի իւր ծուլութեան մէջ եւ չկրէ յապագային բնական վաւերացման արգիւնքը:

Այս տեսակէտով նախ մերժելի են մարմնական պատիժները որք ինքնին չարիք ու ցաւ են քան չարիքն ու ցաւը արգիլելու միջոց, եւ եթէ բնական հակադրութեամբ մը ցաւն ու չարիքը

գային տղուն վրայ՝ բան մը չափաւոր ունենայինք ըսել. բայց ի՞նչ իրաւունք ունինք մենք մեզէն հարկադրելու զայնս մանկանց, մինչ չեն բնական հետեւանք այն վարմանց զորս կ'ուզէինք արգիլել: Այդու անիրաւ ու անգութ կը լինին մանկանց դէմ, որք ա՛լ չեն տեսներ արդար ու զիրենք սիրող էակ մը ուսուցչին վրայ, եւ ա՛լ կ'ատեն զայն ու կը ստական անկէ իրրեւ պատուհասէ, եւ ամէն համակրանաց ու յարգանաց կապ խզուած է ուսուցչին ու աշակերտաց մէջտեղ. այդ վայրագ վարմունք կ'ընդվզեցնէ զայնս իրեն դէմ, եւ, բանաւոր էակաց կրթութեան յարմար միջոց մ'ըլլալէ հետո, անբանացուցիչ ու միմայն կարծեցեալ դատարարական ցաւալի ազդեցութեան վրայ զբուլթիւն մ'է: Տերեւտիոս արդէն կ'ըսէր թէ «հարուածք անբան անասնոց համար են», եւ այն անշուշտ մարդէն անասնոց վրայ ի գործ դրուելու համար: Եթէ ոչ, որպէս Պէռնարտէն ալ Սէն-Բիէռ կը դիտէր, «զգայուն էակաց բոլոր տեսակներուն մէջէն մարդկային տեսակն է միայն որուն նշանակեալն հարուածներով կը մեծցուին»: Մարմնական պատիժներէն զատ, մերժելի են նաեւ բոլոր այն պատիժներն, նիւթական թէ բարոյական, որք ուսուցչին քմահաճոյքէն կը լլվին, առանց երբեք կապ մ'ունենալու գործուած յանցանքին կամ հակադրութեան հետ, եւ միայն աշակերտին վրայ հարկադրուած նուաստութեան մը կամ բռնի աշխատութեան մը մէջ դոհացում մը փնտրել ունին նպատակ, չափն ու սահմանն ալ կախում ունենալով միմայն ուսուցչին աւելի կամ նուազ նեղսիրտ կամ նեղսրտած ըլլալէն: «Յիսուսն առող պիտի գրես»: Դիտողութիւն մը աշակերտին կողմէն կամ սպասարկման մը մոմացուած եւ ահա իսկոյն յիսուսն առող կ'ըլլայ հարիւր, հարիւր կը կրկնապատուի, կ'եռապատուի, կը քառապատուի, կը բազմապատուի, յիմար համեմատութեանց կը բարձրանայ, բարկացայտ վարժապետին չրթանց մէն մի շարժումով, որ տողերն իրարու վրայ բարդելով Ոստան ու

Պեղիւնը իրարու վրայ դիպող սկայից մին ըլլալու երեւոյթն ունի կարծես, չես գիտեր ո՛ր Արամազդին ընդգլխամարտ. — ասաներեք տարեկան խեղճ պզտիկ դողդոջուն տղեկ մը կայ իր դիմաց:

Իրրեւ բանաւոր ու արդար պատիժ մենք հետեւեալները կը համարինք.

Ա. Աշակերտ մը դասարանը կը խանգարէ չի թողոր դասատուին հանգարտութեամբ պարապիլ իր գործին եւ արգելք կ'ըլլայ իր ընկերակցաց դասին կամ սերտողութեան, եւ իր անկարգութիւնը կը շարունակէ յետ անգարարութեանց, յետ յանգլխամարտութեանց, յոռի նիշն ալ չ'ազդեր իր վրան. հեռացուցէ՛ք զատեցէ՛ք զինքն իր ընկերակիցներէն. հեռացուցէ՛ք, եթէ հարկ է, դասարանէն, եւ երբ անուշագոյ կը մնայ՝ դպրոցէն եւս՝ ժամանակաւոր կամ վերջնական կերպով: Այդ մէկը որ արդէն կը զրկէ ինքզինն՝ դպրոցական պարապմանց օգուտներէն՝ գէթ ուրիշներն ալ չզրկէ անոնցմէ:

Բ. Աշակերտ մը նիւթական փնտս կը պատճառէ դպրոցին կամ իր ընկերաց. յանգլխամարտութեան ու խրատին հետ պէտք է պահանջել որ տուժէ, դարմանէ՝ փնտսը, կորսուածին ու փնտսելոյն տեղը դնէ: Եթէ փնտսող աշակերտին անձնական աշխատութեամբ դարմանելի է եղածը, պէտք է ստիպել զինքը այդ աշխատութիւնն յանձն առնուլ. եթէ դրամով դարմանելի է, պիտի հատուցանէ, եթէ կրնայ, իր մանր հաճոյքներուն համար իր ծնողքէն ստացած գրամներով. իսկ թէ ոչ՝ նոյն իսկ ծնողք պիտի հատուցանեն, բայց պէտք է որ տղան ալ տուժէ զրկուելով ինչ ինչ նուէրներէ զորս առանց այդ պարագային պիտի ստանար իր ծնողքէն (*):

Գ. Ծուլութեամբ կամ անճշդ տպահա-

(*) Աղբրտ աշակերտը բնականաբար աւելի զգոյշ կ'ըլլայ, կամ աւելի գծութեան կ'արժանանայ. իսկ երբ — ինչ որ չէ սովորական եւ այս պարագային մէջ հաբուս աղբրտ մի եւ նոյն բանն է — մասնաւոր օգուտ մը ցոյց կուտայ աշակերտ մը կոսրելու, բրբրելու, եղծանելու, այն ասէն կը նկատուի իր փնտսակար անգուսպ տա՛ր մը ու կը հեռացուի դպրոցէն:

Թեամբ կը թերանայ աշակերտ մ'իւր պարտականութեանց մէջ. պէտք է լեցնել տալ թերին: Ուշ դպրոց եկողը երեկոյին ուշ կը դառնայ տուն, վար կը դրուի որպէս զի աշխատի: Առանց բանաւոր պատճառի բացակայող աշակերտը կը պարտի ի փոխարէն կիրակի կամ տօն օրեր դալ աշխատիլ դպրոցին մէջ: Ուրիշ մ'իւր դասը չէ սերտած կամ չէ պատրաստած իր պարտականութիւնը. դպրոցական ժամերէ դուրս վար կը դրուի պարտաւորելու համար զինքը չսերտած դասը սովորելու կամ չպատրաստած դրաւոր աշխատութիւնն ընելու (*):

Դ. Աշակերտ մը լեզուի կամ ձեռքի հարուածով իր ընկերներուն զգայնութիւնը վիրաւորեց, բարոյական կամ մարմնական ցաւ մը պատճառեց անոնց ու անոնց դժգոհութեան ու բողբոջանայ տեղի տուաւ: Ուսուցիչը անիրաւութիւն կամ անգթութիւն գործող աշակերտին կ'զգացնէ իւր զգածեալ յանգլխամարտութեամբ թէ ո՛րքան մեղանշած է յարգանաց եւ սիրոյ պարտաւորութեան դէմ զոր ամէն մարդիկ ունին միմեանց հանդէպ, եւ կը հրաւիրէ ու կը պարտաւորէ զայն անկեղծ զջմամբ մը ներում խնդրելու վիրաւորած ընկերներէն: Երբ յաճախ կը կրկնուին այսպիսի յանցանքներ, ու բուռն կոպտութեան ու վայրագութեան կը զառաւանջեն, զանոնք գործող տղան անընկերական կը համարուի ու նախ դասարանին կամ խաղեակին կամ դպրոցին մէջ զայն կը չեղտնայեն, եւ ի հարկին դպրոցէն եւս կը հեռացնեն ժամանակաւոր կամ վերջնական մերժմամբ:

Ե. Բոլոր այս պատժական անօրինութիւնք կ'ենթադրեն որ աշակերտը գիտէ յարգել իւր ուսուցիչը, պատկառիլ ան-

(*) Մի միայն իրեւ անհամոյ ու չարախիչ բան մը հարկադրուած գրաւոր պատիժը (pensum) կամ մի եւ նոյն էջերուն, մի եւ նոյն բառից, մի եւ նոյն բայից բազմապատիկ ընդօրինակութիւնը անիմաստ, անգութ ու անբանասցուցիչ բան է: Ռուսէն կ'ըսէ իրաւամբ. «Ծայրայեղ գրաւոր պատիժը տեսիլ կ'ընեն զրբերը, գիտութիւնները եւ ուսուցիչները»:

կէ ու հնազանդիլ անոր ձայնին . բայց երբ աշակերտ մը նոյն իսկ իւր ուսուցչին դէմ կ'ըմբոստանայ , անպատկառ ու անհնազանդ կը գտնուի նորա դէմ , անոսա անսող մնալով անոր խրատուց ու անտարբեր անոր զգացած վշտին , ինչ պէտք է ընել . — Ըմբոստողան կը ներկայացուի անարգուած պաշտօնէին կողմանէ իրմէ անմիջապէս վեր գտնուող պաշտօնէին որ , յետ զգացնելոյ անոր իր ծանր պակասութիւնը , կը յայտարարէ թէ իրեն անկարելի է մնալ դպրոցին մէջ ցորչափ չդարմանել իւր յանցանքը , իր ներումը չստանայ նոյն իսկ իր վիրաւորած ուսուցչին բերնէն : Երբ ապարդիւն մնայ այս միջոց , աւելի վերին պաշտօնէին կը ներկայացուի , որ մի եւ նոյն պայմանները կը գնէ անոր դպրոցին մէջ մնալուն , միայն թէ այժմ աշակերտը մէկի տեղ երկուքի դէմ յանցաւոր է . այսպէս ուսուցչէն առ տեսուչն , ասկէ առ վերատեսուչն կամ հոգաբարձուն ելնելէ յետոյ խնդիրը , երբ աշակերտը կը յամառի կը մնայ իւր հետման մէջ եւ յանձն չ'առնուր գոհացում տալ իր մեծերուն զորս վիրաւորած է իւր կողմէ վարմունքով , եւ կամ երբ բազմիցս տեղի կ'ունենան մի եւ նոյն աշակերտին կողմանէ նմանօրինակ դէպքեր , այն ատեն հարկ կը լինի յանձնել զայն իւր ծնողաց , եւ միայն մի անկեղծ ու հրապարակային զլջումէ յետոյ կրնայ հաւանականութիւնն ունենալ վերստին ի դպրոց ընդունուելու :

Այս ամենուն մէջ՝ կը տեսնենք որ խրատն ու յանդիմանութիւնը միշտ իրենց բաժինն ունին : Արդարեւ տղոց յանցման ամէն պարագայները պատեհագոյն առիթներն են անոնց խօսելու իրենց պարտուց վրայ , ազնիւ ու խելացի վարմունքի մը պայմաններուն վրայ . եւ այդ ոչ միայն յանցաւոր տղուն օգտին ու կրթութեան համար է , այլ նաեւ միւսներուն , բոլոր դաստիարակող խրատականի ամենէն կենդանի դասը կ'ընդունի այդ վայրկեանին : Բայց խրատն ու յանդիմանութիւնը իրենց ճշմարիտ ազ-

դեցութիւնը յառաջ կը բերեն այն ատեն միայն երբ ուսուցիչը կը խօսի զգածեալ , անկեղծօրէն վիրաւորեալ շեշտով , իր սաներուն բարւոյն ու կատարելագործման տենչացող հոգիի մ'արդար տրտմութեան կամ արդար՝ այլ քաղցրախառն զայրոյթի ձայնով : Այսպիսի յանդիմանութիւն մ'ինքնին պատիժ մ'է , մանաւանդ զգայուններուն համար , ինչպէս չատեր կան տղայոց մէջ , եւ երբ մանաւանդ իր աշակերտներէն սիրուած ու յարգուած ուսուցչի մը կողմէ կուգայ : Տղայոց չափ մը թերութիւններուն համար , որպէս քնի , պէտք չէ ատկէ աւելի հեռուն երթալ . բայց նոյն իսկ մեր թուած պատժելի պարագայից մէջ ալ կան այնպիսիներ , յորս ի սկզբան կրնամք ու պարտիմք գոհանալ այսպիսի յանդիմանութեամբ :
- Մեր համարման պակասիլը ու աշակերտին բարոյական անկումը նշանակող բարի նիշերու նուազումը կամ յուսնեղութեամբ տղոց պատուասիրութեան զգալի պատիժ մ'է , եւ ինչպէս տղոց ընդհանուր բարոյական վիճակին աստիճանները ցոյց տալու համար կրնան գործածուիլ նիշերը , նոյնպէս եւ յուսնիշերը կամ լաւ երու թուոյն նուազումը պարտին ընկերանալ պատժական տնօրինութեանց սրոց ազդեցութիւնը կը յաւելուն , եւ մերթ իրենք միայն համարուիլ առաջին աստիճանը պատժոյն : — Դպրոցը ամենօրեայ կամ գէթ ստէպ յարարերութիւն ալ պարտի ունենալ տան հետ՝ տղուն օրըստօրէական լաւ կամ յոռի ընթացքը ընտանիքին ծանօթացնող վիճակացոյց-տետրի մը միջոցաւ . ի տես նշանակեալ լաւ կամ յոռի թուոց ու տնօրինեալ վարձուց կամ պատժոց , հօրն ու մօր գոհունակութիւնը կամ տիգոհութիւնը պիտի գար աճեցնել անընդհատ անոնց զօրութիւնը , որմէ դպրոցը պիտի օգտուէր կարելի եղածին չափ քիչ ու թեթեւօրէն կատարելու համար դեր պատժածուի :

Ռ. Յ. Պ.

ԱՆԻՈՐՀՈՒՐԴ ԾՆՈՂՔ

Ք. Թաղի վարժարանը ըստ բաւականի գոհացուցիչ վիճակի մը մէջ կ'ընթանայ՝ կազմական կանոնադրի պահանջմանց համաձայն, զորս կարելի եղածին չափ կէտ առ կէտ գործադրելու հոգ կը տանին վարժարանին Հոգաբարձութիւնն և ուսուցչական մարմինը։ Ծնողք իրենց գոհունակութիւնը կը յայտնեն բերանացի կամ գրաւոր՝ վարժարանին մէջ տիրող բարեկարգութեան մասին, թէեւ, փութամբ յաւելուլ, առանց կատարեալ համոզում մը գոյացուցած ըլլալու իրենց մէջ եւ որոշ գաղափար մը ունենալու թէ ինչ բանի մէջ կը կայանայ դպրոցի բարեկարգութիւն ըսուած բանը։ Բայց ահա օրին մէկը դպրոցին տեսուչը խիստ կարգադրութիւն մ'ընել կ'ստիպուի պարտազանց աշակերտի մը նկատմամբ, որ՝ անշուշտ չափազանց ասպունջած իւր ծնողաց քիչ մը չափազանց որդեկորութեան, չէ՛ ուզած հնազանդիլ իրեն տրուած պատժոյն։ Ծնողքն, որմէ յատուկ նամակաւ մը խնդրուած է օր իւր ծնողական ազդեցութիւնն՝ միացնէ վարժարանական ազդեցութեան՝ յօգուտ իւր զաւկին, իւր պատասխան, իւրեւ թաղին ջոջերէն մին աշակերտի կարգադրութիւն մը կը խնդրէ կամ մանաւանդ կը պահանջէ՝ որ հակառակ է դպրոցական կարգապահութեան ամէն օրինաց եւ հետեւաբար անգործադրելի։ Ասոր վրայ, այդ ծնողքն կը հանէ իւր զաւակն վարժարանէն եւ ահա շատ չ'անցնիր, շատեր այն ծնողքներէն՝ որք իրենց գոհունակութիւնն յայտնած էին թաղին վարժարանին նկատմամբ, ամէն տեսակ թուք ու մուր քսելու չեն խղճար նոյն հաստատութեան վրայ...

Դպրոցական տարեշրջանն կը լրանայ և պարապուրդից մէջ Հոգաբարձութիւնն և Տեսչութիւնն համախորհուրդ կը խորհին այն նորանոր կարգադրութեանց վրայ՝ որոց պէտքն զգացուած էր նախորդ դպրոցական տարեշրջանին մէջ։ Այս կարգադրութիւններէն մին ալ կը լինի

ուսուցչական մարմնոյն մէջ ինչ ինչ փոփոխութիւններ մտցնել, վերջապէս վարժարանին վերաբոցումն տեղի կ'ունենայ լաւագոյն պայմաններու մէջ։ Բայց զարմանօք կը տեսնուի որ դրեթէ ամէն դասընթացքի, մանաւանդ միջին եւ բարձրագոյն դասընթացից մէջ աշակերտներ պահած են, և յաջողակ աշակերտներ, Հոգաբարձութիւնն եւ Տեսչութիւնն հետաքրքիր կ'ըլլան այս անակնկալ հրաժարմանց պատճառն իմանալու, ու կը տեղեկանան թէ նախորդ տարուան հրաժարեալ աշակերտն յաջողած էր համոզելու շատ մ'ուրիշ աշակերտներ՝ որպէս զի մէկ մէկ ստայօդ պատմութեամբ հաւանեցնեն իրենց ծնողքը որ զիրենք այս ինչ կամ այն ինչ վարժարանը դնէ, ուր այն աստիճան խստութիւն, կամ իրեն գործածած բառով, անիրաւութիւն չկայ, ուր այս ինչ ու այն ինչ դասատուները կը դասախօսեն, մինչդեռ իրենց թաղի վարժարանին ուսուցիչներն հրաժարած են, ուր յաճախելու համար՝ զուարճալի ճամբորդութիւն մը պիտի ընեն ամէն օր, և այս, եւ այն, ու, կարելի է հաւատալ, այդ աշակերտաց ծնողք, իրենց զաւակաց չափմիամիտ ու չիշտադատող, տեղի կուտան իրենց զուակաց քմահաճոյից, խնդրոյն իրազեկ ըլլալ առանց միտքերնուն իսկ անցնելու...

Խեղճ ծնողք։ Խեղճ տղայք։

Յ. Թ. ՀԻՆԴԼԵԱՆ

ԿԵՂԾՄԱՇԿԻՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

ԵՒ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԱՆՈՐ ԴԷՄ

Այս տարի Սեպտեմբեր երկուքէն ութի ինչթիւ գումարեալ առողջապահական եւ ցեղագրական ու թերորդ համաժողովին մէջ կարեւոր եւ կարելի է ըսել առաջին տեղը գրաւեցին կեղծ մաշկի մէկ նոր դարմանին և անոր դէմ ձեռք առնուելիք նախադրուչական միջոցներուն վրայ փոխանակուած կարծիքներն։

Առ այժմ՝ այդ նոր դարմանի մասին բացատրութիւններ տալ հարկ չեմ համարիր՝ նախ՝ զի տակաւին ամէն տեղ գործադրելի չէ եւ ժամանակի պէտք ունի վերջնական վաւերացումն ստանալու համար, եւ երկրորդ՝ տեղական թերթերն ըստ կարի գոհացուցին արդէն հասարակաց հետաքրքրութիւնը:

Մեզ համար կարեւորն այս է որ միքրոպազնական աշխատութիւնները մեծ լոյս մը սփռեցին այս սոսկալի հիւանդութեան պատճառներուն եւ տեսակներուն վրայ. նաեւ օգտակար միջոցներ ցոյց կուտան անոր դէմ նախազգուշական միջոցներ ձեռք առնլու համար:

Համաժողովին մէջ կարծիք յայտնող աւանաւոր գիտնոց մէջ ներկայ գտնուած է նոյն ինքն ախտին միքրոպը գտնող Պ. Լէֆլէր, որուն եւ իւր աշխատակից Պ. Գլէսլի անուամբ կը յորջորջուի հիւանդութեան միքրոպը:

Կեղծմաշկը (գուշ պօղան), ինչպէս գիտեն շատերը, մանաւանդ տղայոց մէջ կոտորածներ գործելուն, եւ Լէֆլէրի՝ ինչպէս նաեւ ախտին շիճուկով դարմանը կատարելագործող Պ. Ռուի կարծիքներն ու հրահանգները ծնողաց, գաստիարակաց եւ հոգաբարձուաց վրայ մեծ պարագքեր եւ պատասխանատուութիւններ դնելուն համար, օգտակար կը համարին ներկայացնել այդ հրահանգները:

Գտնուած նոր դարմանը կամ դարմաններն որչափ ալ կարեւոր եւ օգտակար ըլլան, միշտ լաւագոյն է դարմանի պէտք չունենալ եւ այս ալ կարելի է՝ նախապաշարունակները մէկ կողմ՝ թողլով՝ այս գիտնոց ցոյց տուած նախազգուշութիւններն ու պատուէրները մեր կարողութեան եւ գիտութեան սահմանին մէջ ճշդիւ գործադրելով:

Ըստ Լէֆլէրի՝ ճշմարիտ կեղծմաշկը յառաջ կուգայ միմիայն կեղծմաշկի պատիւէն, որոյ կարեւորութիւնն՝ իրր պատճառ ախտին՝ այլեւս բնաւ տարակոյս չի վերցնիր: Ուրեմն կեղծմաշկ պէտք է անուանել միմիայն այն հիւանդութիւններն որք այս պատիւէն ծագում կ'առնուն,

եւ դուրս ձգել այս խումբէն բոլոր այն հիւանդութիւններն որք ուրիշ միքրոպներէ յառաջ կուգան: Կան արդարեւ շնչառական ճանրաներու վերին մասանց հիւանդութիւններ, որք ճշմարիտ կեղծմաշկի պատկերով եւ ախտական երեւոյթներով կը ներկայանան, բայց ուրիշ միքրոպներէ՝ ինչպէս սքրէքթոզ, սքաֆիլոզոզ եւ ռեւմատոզներէ յառաջ եկած են, եւ ճշմարիտ կեղծմաշկերու նման ծանր կամ թեթեւ ընթացք մը կրնան ունենալ:

Միմիայն միքրոպազնական քննութիւնը կրնայ այս վանազան վիճակներն իրարմէ զանազանել, եւ կեղծմաշկի համաճարակներուն տարածման եւ անոնց բնութեան վրայ եղած վիճակագրութիւնները բնաւ արժէք մը չախտի ունենան՝ եթէ Լէֆլէրի ցոյց տուած այս տարբերութիւններն ի նկատ առնուած չեն:

Ուրիշ փոխադրական հիւանդութիւններու պէս կեղծմաշկն ալ երբեմն թեթեւ եւ երբեմն ալ ծանր հանգամանք կ'ունենայ: Կեղծմաշկեան համաճարակի մ'ընթացքը մէկ քանի պայմաններէ կախումն ունի.

1. Կեղծմաշկի պատիւներուն քանակութեան եւ անոնց ժաշրաւորութեան:

2. Կեղծմաշկի պատիւին ընկերացող այլ միքրոպներէն, որք կեղծմաշկի պատիւին ժաշրաւորութիւնը կ'աւելցնեն կամ իրենց արտադրութիւններով կազմութիւնը կը ակարացնեն:

3. Անհատին նախատրամադրութեան: Կեղծմաշկի պատիւն առողջ անձանց կոկորդին եւ քթին մէջ կրնայ գտնուիլ առանց որ եւ է վնաս պատճառելու: Հիւանդութիւնը յառաջ կը բերէ այն պարագային մէջ միայն որ գտնուած տեղը հաստատուի: Եթէ մաղասային թաղանթն արդէն վնասուած է, պատիւին հաստատուիլը կը դւրանայ: Օգին փոփոխութիւնները, մանաւանդ խոնաւ եղանակները որք շնչառական վերին ճանապարհաց բորբոքումներ կը պատճառեն, ախտին երեւան ելնելուն կը նպաստեն:

Ամենէն աւելի կեղծմաշկը կը փոխանցի ուղղակի հսկմամբ, հազով, համեղրներով,

ախտին թարմ արտադրութեան դպած ձեռքերով, շատ անգամ ալ կերակուրներու և կտաւեղէններու միջոցաւ : Որչափ ատեն որ հիւանդին մաղասային թաղանթին վրայ պատիւներ գտնուին, հիւանդութիւնը փոխանցող նկատելու է այն հիւանդը : Ընդհանրապէս պատկերները կ'անհետանան տեղական ախտանիշներուն դադարումէն քիչ օր ետքը, բայց երբեմն չարաթններով և ամիսներով իսկ կենդանի և ժահրալից վիճակի մէջ՝ կը մնան կոկորդին եւ քթին մէջ :

Գործարանական նիւթերու մէջ բանտարկուած և լոյսէ զուրկ՝ ամիսներով կենդանի կրնան մնալ մարդկային կազմութեանէն դուրս : Աղտոտութիւնը, մութ և խոնաւ բնակարանները կը նպաստեն ուրեմն պատկերուն պահպանման և ախտին տարածման : Կեղծմաշկի տարածման ամենէն աւելի կը նպաստէ տրամադիր անձանց և մանաւանդ տղայոց ի մի վայր հաւաքումը (ծաղկոց, վարժարան ևն) :

Լէֆլէր հետագայ զգուշական միջոցները կը յանձնարարէ .

10. Մաքրութիւն, չորութիւն, օդատուութիւն և լուսաւորութիւն բնակարանաց :

20. Բերնի և քթի մաքրութիւն, հասարակ աղի և պիզարպօնաք սը սուսի թեթեւ լուծաջութեամբ կառկառներ, ակռներու մաքրութիւն, փառած ակռներու քաշում, խոշորցած կոկորդին նշխներու (պսսեմնիֆ) հանում :

30. Վզի պաղ ջրով լուացումներ :

Ամէն կասկածելի հիւանդ պէտք է միջոցաւ զննութեան ենթարկուի . ամենօրեայ քննութեանց համար հարկ է որ դեղարաններու մէջ միջոցաւ սննդաղբեր գտնուին, և բժշկներն այդ սննդական միջավայրերուն մէջ կասկածուած ախտին սերմերը ցանեն և միջոցաւ զննական աշխատանոցը զրկեն :

Ամէն ճամարիտ կեղծմաշկի և կտակածելի դէպքերու ծանուցումը պարտաւորիչ ընել և կեղծմաշկէ բռնուածները մեկուսացնել :

Հիւանդ անձին պատկերներուն աստ անդ տարածումն ըստ կարելոյն արգելելու հա-

մար պէտք է՝ առանց ժամանակ կորսնցնելու՝ կեղծմաշկերուն վրայի միջոցները ջնջող տեղական դարման մը ի դարձ դնել, եթէ կեղծմաշկերուն կայանն հպելի է :

Կեղծմաշկի տարածումն արգելող ազդու միջոցն է՝ հիւանդը չընտալատող անձերը պատուատել, մանաւանդ աղաքները : Շատ մը փորձեր ցոյց տուած լինելով թէ կեղծմաշկի դէմ Պէհրինկի գործածած չիճուկը բոլորովին անվնաս է, Լէֆլէր կը բաղձայ որ իր նախազգուշական միջոց այս չիճուկն ընտանեաց եւ վարժարանաց մէջ գործածելու միջոցներն ուսումնասիրուին :

Կեղծմաշկէ բռնուած անձին սենեակն և իրեղէններն հակահեխելու գործողութիւնը պարտաւորիչ ընել :

Հարկ է նաեւ կեղծմաշկէ ապաքինեալ անձերն առողջ անձանց հետ յարաբերութեան դնել զգուշանալ մինչև որ միջոցաւ զննական քննութիւն մը հաստատէ թէ պատկերն անհետացած են ապաքինեալէն :

Վերջապէս կեղծմաշկի համաճարակի ատեն թերթերու մէջ ժողովրդական հրահանգներ հրատարակել, ինչպէս եղաւ քօլերայի ժամանակ Էանինց իրական օգուտներն ալ տեսնուեցան Գերմանիոյ մէջ և այլուր :

Ասոնք են տհա համաժողովին մէջ Գերման յանձնախմբին նախագահ Լէֆլէրի յայտարարութիւնները :

Լէֆլէր՝ կեղծմաշկին տեղական այսինքն կեղծմաշկերուն վրայ ի գործ դրուած դարմանին մեծ կարեւորութիւն կուտայ, ընդունելով հանդերձ Պէհրինկի և Ռուի չիճուկով դարմաններն, և այս տեղական դարմաններու մասին բժշկական մանրամասնութեանց մէջ կը մանկ զարտ աւելորդ է աստ յիշատակել :

Ֆրանսական յանձնախմբին նախագահ Ռու ևս հետեւեալ առաջարկութիւններն ու խճերը կը ներկայացնէ .

10. Կեղծմաշկը տարափոխի հիւանդութիւն մը լինելով պէտք է պարտաւորիչ ընել զայն ծանուցանելու :

20. Կեղծմաշկէ բռնուած հիւանդները մեկուսացնել :

30. Առողջապահական տնօրէնութիւնը պարտի հակառակել կեղծմաշկէ վարակելոց բնական վայրերն և մանաւանդ անոնց կտաւեղէնները, հագուստները, անկողնի իրեղէնները, առանց մոռնալու խաղալիկներն և հիւանդին ծառայած անօթները: Հիւանդութեան տեւած միջոցին բոլոր աղտոտ լաթերը՝ լուացարարի չտուած՝ հակառակել:

40. Ամէն անգամ որ կառքերը կեղծմաշկէ վարակեալներ փոխադրեն, հակառակել զայնս:

50. Կեղծմաշկ ունեցող տղայքն առողջանալէ յետոյ վարժարան չդրիւն մինչև որ բժիշկը չարտօնէ:

60. Վարժարանի մը մէջ կեղծմաշկի դէպք մը պատահած ատեն՝ նոյն վարժարանը յաճախող տղայքը բժշկական հսկողութեան ենթարկել ատեն մը:

Այդ միջոցին եթէ տղայ մը պարզ փողացաւ ունենայ, վարժարանէն հեռացնել: Այս հսկողութիւն աւելի խիստ պէտք է լինի հիւանդին եղբարց և քոյրերուն համար:

Այս միջոցներէն զատ՝ հետագայ ծանօթութիւններն ալ տարածել հարկ է:

Ա. Յաջողութեամբ դարմանելու համար՝ կեղծմաշկն սկսելուն պէս ճանչցուելու է չատ անգամ անոր սկզբնաւորութիւնը՝ նենգաւոր է, ուստի ճանչցուելու համար պէտք է յաճախ տղայոց կոկորդը քննել: Ենթադրելով պէտք է ամէն օր այս քննութիւնը կատարեն և ի տղայ հասակէ մանուկները վարժեցնեն այս քննութեան հնազանդելու: Պէտք է այս ծանօթութիւնը ընդհանրացնել դաստիարակաց և վարժուհեաց միջոցաւ:

Բ. Կեղծմաշկին կանուխէն և ստուգապէս ախտաճանաչութիւնը կախումն ունի նաև միջոցաւ գնահատման միջոցներու կիրարկութենէն. հարկ է պնդել որ բժիշկներն այս միջոցներուն դիմեն:

Գ. Այսօր ըստ բաւականի հաստատուած լինելով կեղծմաշկի դէմ գործածուած շիճուկին արդիւնքները, պէտք է յանձնարարել՝ իրր նախազգուշական միջոց՝ այս շիճուկին ներարկումն այն տղայոց որք

տան մը մէջ ախտէն բռնուած ուրիշ տղու մը հետ կը գտնուին:

ՏՈՔՔ. Ե. ՄԱՍԻՍ

ՄՐՅՄԱՆ ԴՐՈՒԱԾ

Պարզաբանել հետեւեալ խօսքը:

Հրեայ ռարբի մը կ'ըսէր. «Շատ բան սովորեցայ ուսուցիչներէս, աւելի շատ ընկերներէս, և ա'լ աւելի շատ աշակերտներէս»:

Գրութիւնք պարտին շրկուիլ մեզ մինչ 1895 Փետրվար 15:

ԱՌ ԲԱԺԱՆՈՐԴՍ

Մասիսի Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել թէ, թէեւ երեք ամսոյ չափ ետ մնացած է Մասիս իր հրատարակութեան սլայմանեալ ժամանակէն, այսու հանդերձ կորսուած ժամանակը պիտի ջանացուի ձեռք բերուիլ՝ այս առաջին տարուան մնացորդ թիւերը շուտ շուտ հրատարակ հանելով:

ՄԱՍԻՍԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի ծանուցանել Գաւառաց Պատարժան Ուսումնական Խորհրդոց եւ ամէն վարժարանաց Տեսչութեանց թէ պատրաստ է դրել իրենց Դաստիարակ—Ուսուցիչներ եւ Վարժունիներ, Մասնագէտ—Դասասուներ եւ Ուսուցչունիներ, ինչպէս նաեւ Օգնականներ, ըստ պահանջման Կազմ. Կանոնագրոյ եւ ըստ առաջարկեալ պայմանաց :

Կը ծանուցանէ նաեւ ամէն կարգի ազնիւ Ուսուցչաց եւ Ուսուցչունեաց թէ պատրաստ է իրենց կարողութեան յարմար պատշոններ հայրապրել իրենց Կ. Պոլսոյ կամ գաւառաց Ազգ. Վարժարանաց մէջ :

Մասին մանկավարժական քերթի Տնօրէնութեանը այս դիրտօրինը կը մատուցանէ կրթական պատշոնէութեանց եւ պատշոնէից

ԱՌԱՆՅ ՈՐ ԵՒ Է ՓՈԽԱՐԻՆՈՒԹԵԱՆ

Տեղեկութեանց համար դիմել առ Յ. Թ. Արամեան, Տնօրէն Մասիսի:

Շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նոր հրատարակութիւնները .

Բ. Պօզանեան . — Տես. եւ Գործ. Քերականութիւն առիւ. տարական ընթացք	դր. 2—
Մ. Արիկեան . — Օսմաներէն քերական Է. Տ. պ.	» 1—
Մ. Արիկեան . — Լէրաիֆի Ասար Ա. մաս Ը. սպ.	» 1 1/2
Մ. Տէսէեան . — Մուալլիմի Սիւպեան, տես Օսմանեան Գեղազ. 1—3, իւրաքանչիւր տեսքը	» — 1/2
Պ. Կարապետեան . — Նոր քերական Օսմ. լեզուի Բ. սպ.	» 1—
Պ. Կարապետեան . — Րէհնիւմայի Գրաէք վէ Թէրնէ- մէ Բ. տարի	» 2—
Ս. Գափամանեան . — Փնջիկ	» 3—

ՄԱՍԻՍ ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԵՏԵՒԵԱԼ ԾՐԱԳՐՈՎ

1. Մանկավարժութիւն — Դաստիարակութեան՝ գիտութեան ու պատմութեան, Հոգեբանութեան եւ Բարոյագիտութեան վերաբերեալ յօդուածներ: — Մանկավարժական խնդրոց վրայ մրցման դրուած հարցումներ:

2. Դասախօսական — Նախակրթական տպար դասեր: — Նախնական ու երկրորդական կրթութեան վերաբերեալ կարեւոր ու նոր դասընթացք, հրահանգք, եւ անշատ դասախօսութիւնք կամ ամփոփումներ դասուց: — Բացատրեալ ընթերցումներ:

3. Քննական — Դասագրոց արժանաւորութեան մասին քննադատական յօդուածք: — Վարժարանական այցելութեանց տպաւորութիւնք:

4. Տնօրինութիւնք — Ուսումնական տնօրինող եւ Ազգային Վարչութեան ի մասին Ազգային Վարժարանաց:

5. Լուրք եւ տեղեկութիւնք — Ազգային, ^{Ներքին եւ Արտաքին} կրթական լուրեր եւ ծանօթութիւնք:

6. Զանազանք — Այլ եւ այլ շահեկան եւ հրահանգիչ գրութիւնք:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Մասիսի տարեկան բաժանորդագիրն է, կանխիկ վճարելի, Կ. Պոլսոյ համար 40 դր: Իսկ գաւառաց համար 50 դր: Բոլոր տարի ծախսը մեր վրայ: Իւրաքանչիւր թերթի գինն է 2 դր: Դաւառներէ բաժանորդագրի փոխարէն նամակագրութեմ եւս կ'ընդունուի 15% զեղչով: Բաժանորդագրութեան, հրատարակութեան եւ այլ ամէն խնդրոց համար պէտք է դիմել առ Տնօրէնն Յովհաննէս Արամեան, Կեդրոնական գրաստան, Կ. Պոլիս, Զաւմաքներ թիւ 59: